

ISSN 1829-4286

ՀԱՅԿԱԿԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱԽ



1  
2014



*Հրապարակվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան  
պետական լեզվա հասարակագիտական  
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*



*Հրապարակվում է Հեռանկարային ուսումնասիրությունների և  
նախաձեռնությունների կենտրոնի աջակցությամբ*

### **Խմբագրական խորհուրդ՝**

Տիգրան Թորոսյան

քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ  
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանդր Աբրահամյան

քաղաքական գիտությունների դոկտոր,

Յուրի Գասպարյան

Ռազմական ակադեմիա, Սլովակիա

Լևոն Զեքիեան

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ԵՊՀ

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,  
Վատիկանի արևելագիտության ինստիտուտ,  
Իտալիա

Կառլեն Միրումյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ

Տատյանա Շակլեինա

քաղաքական գիտությունների դոկտոր, ՄՄՀՊՀ,  
Ռուսաստան

Լևոն Շիրինյան

քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ

Ռայներ Շուլց

պատմական գիտությունների դոկտոր, Հասքսի  
համալսարան, Մեծ Բրիտանիա

Սերջիու Չեկակ

Միջազգային հետազոտությունների ռումինական  
ինստիտուտի նախագահ, Ռումինիա

Ալբերտ Ստեփանյան

պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ

Անահիտ Տեր-Մինասյան

պատմական գիտությունների դոկտոր, ԻՆԱԼԿՕ,  
Ֆրանսիա

Աննա Օհանյան

քաղաքական գիտությունների դոկտոր,  
Սթոունհիլի քոլեջ, ԱՄՆ

### **Անգլերեն տարբերակի խմբագիր՝ Ադամ Ռեյնոլդս:**

ISSN 1829-4286

© Հեռանկարային ուսումնասիրությունների  
և նախաձեռնությունների կենտրոն, 2014

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպատակներ և խնդիրներ 4

## **ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՅԻԱ**

### ***Տիգրան Թորոսյան***

Հասարակական գիտությունների և այդ ոլորտում բարձրագույն կրթության հիմնախնդիրների առանձնահատկություններն ու լուծման հնարավորությունները հետխորհրդային երկրներում 5

### ***Տիգրան Թորոսյան, Հայկ Սուքիասյան***

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները 20

### ***Լուսինե Պողոսյան***

Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալիզացիայի առանձնահատկությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում 34

### ***Էմիլ Օրդուխանյան***

Ընտրական մշակույթը Հայաստանի ընտրական գործընթացներում 56

### ***Բենջամին Բառնարդ***

Տնտեսությունն ընդդեմ բնապահպանության. մարդու իրավունքների հետանկարները Թեղուտի պղնձարդյունաբերության ենթատեքստում 72

## **ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ**

### ***Աղավնի Հարությունյան***

«Արաբական գարուն» իբրև նոր մարտահրավեր և նոր հնարավորություն Չինաստանի մերձավորարևելյան քաղաքականության համար 94

### ***Արամ Թերզյան***

Եվրամիության էներգետիկ քաղաքականության նորմատիվ և քաղաքական չափումները. Հարավային Կովկասի դեպքը 124

### ***Գրիգոր Արշակյան***

Թուրք-վրացական հարաբերությունները Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում 137

## ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

«Հայկական քաղաքագիտական հանդեսը» քաղաքագիտական և քաղաքագիտությանն առնչվող միջգիտակարգային հետազոտությունների արդյունքներ ներկայացնող գրախոսվող գիտական հանդես է: Հանդեսում հրապարակվող հոդվածների հիմնական ուղղություններն են՝

- Հետխորհրդային տրանսֆորմացիա. քաղաքագիտական և միջգիտակարգային հիմնախնդիրները,
- Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացը և Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության հիմնախնդիրները,
- Հակամարտությունների կարգավորումը և լուծումը,
- Պետական կառավարում. ժողովրդավարացման դժվարությունները և հեռանկարները,
- Միջազգային հարաբերությունների հիմնախնդիրները և հաշտեցման գործընթացները,
- Ինքնության պահպանման և միջազգային ինտեգրման զարգացման դիլեման,
- Հայրենիք-սփյուռք փոխշահավետ հարաբերությունների ձևավորման հնարավորություններն ու խոչընդոտները:

Տպագրության են ընդունվում այլ հանդեսներում չտպագրված (օրիգինալ), գիտական նորույթ ունեցող հոդվածներ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Խմբագրության հասցեն՝ Երևան, Թումանյան 42, ԵՊԼՀ, սենյակ 202

Հեռախոս՝ 530272-208

E-mail: t.tigran@yahoo.com

## ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ

**Հասարակական գիտությունների և այդ ոլորտում բարձրագույն կրթության հիմնախնդիրների առանձնահատկություններն ու լուծման հնարավորությունները հետխորհրդային երկրներում**

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն, ԵՊՀ*

Ստացված է 03.05.2013

Ընդունված է 06.07.2013

Հոդվածում դիտարկվում են հետխորհրդային երկրներում քաղաքական գիտությունների և այդ ոլորտում բարձրագույն կրթության զարգացման բարդություններն ու հիմնախնդիրները: Ժամանակակից հեղազոտական համալսարանների ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ու հետխորհրդային երկրների մարդկային ու ֆինանսական ռեսուրսների համեմատական վերլուծությունը վկայում է, որ այդ երկրներում նման համալսարանների ստեղծումը հնարավոր չէ հատկապես հասարակական գիտությունների ոլորտում: Այդուհանդերձ, հոդվածում առաջարկվող հայեցակարգի կիրառումը հնարավորություն կտա հաղթահարել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և հիմքեր ստեղծել հեղազայում հեղազոտական համալսարանների ձևավորման համար:

### Բանալի բառեր

Հասարակական գիտություններ, հետխորհրդային տրանսֆորմացիա, բարձրագույն կրթություն, հետազոտական համալսարան, հայեցակարգ

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային երկրների զարգացման վերաբերյալ անցած դարի 90-ականների սկզբին տրվող գնահատականները խիստ լավատեսական էին: Դրանք դիտվում էին ժողովրդավարացման երրորդ ավիքի շրջանակներում: Համարվում էր, որ բոլոր երկրներում հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր<sup>1</sup>, որոնք ապահովելու են այդ երկրների բնականոն

<sup>1</sup> **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentyeth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991.

զարգացումը: Սակայն հետագա ընթացքը ցույց տվեց, որ առկա է աննախադեպ և չափազանց բարդ գործընթաց, քանի որ փուլովել էին բոլոր համակարգերը՝ քաղաքական, տնտեսական, գիտական, կրթական, սոցիալական և այլն, և պետք էր ձևավորել միանգամայն այլ բովանդակություն ունեցող նորերը: Ամենաբարդ խնդիրը, թերևս, վերաբերում էր կրթության և գիտության փոխկապակցված ոլորտներին: Այն ուներ երկակի բնույթ: Նախ, պահանջվում էր ոլորտների կառուցվածքային տրանսֆորմացիա՝ դրանք համադրելի դարձնելով արևմտյան կառույցներին ու գործընթացներին, քանի որ ԽՍՀՄ-ի և նրա ազդեցության ներքո գտնվող տարածքում գործում էր գիտակրթական մի համակարգ, որը սկզբունքորեն տարբերվում էր արևմտյանից: Միաժամանակ, անհրաժեշտ էր այդ ոլորտների գործունեության շնորհիվ պատրաստել նոր գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներ մյուս ոլորտների վերափոխման համար: Դա նշանակում էր, որ եթե բնական գիտությունների ոլորտներում հնարավոր էր սահմանափակվել կառուցվածքային և ընթացակարգային տրանսֆորմացիայով, ապա հասարակական գիտությունների ոլորտում պահանջվում էր նաև բովանդակային տրանսֆորմացիա, քանի որ խորհրդային տարիներին գաղափարական դրդապատճառներով այդ ոլորտների ներկայացուցիչները գործնականում անհաղորդ էին Արևմուտքում առկա համակարգերին, տեսություններին և ուսումնասիրություններին: Մինչդեռ համակարգային խնդիրների առկայության պարագայում բացառիկ նշանակություն ունեն գիտելիքն ու իրավիճակի ուսումնասիրության և զարգացումների կանխատեսման գիտական գործիքները: Հետևաբար կրթության և գիտության ոլորտներում առկա հիմնախնդիրները ոչ միայն խոչընդոտում են այդ ոլորտների զարգացմանն, այլև լրջորեն բարդացնում են նաև մյուս ոլորտներում առկա հիմնախնդիրների լուծումը: Ստեղծվել է արատավոր փակ շրջան: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում հասարակական գիտությունների ոլորտում մասնագետների խիստ սակավությունը (մի քանի այլ գործոնների հետ, որոնք կներկայացվեն ստորև) հնարավորություն չի տալիս ապահովել այդ ոլորտում բարձրակարգ բարձրագույն կրթություն, իսկ դա իր հերթին հնարավորություն չի տալիս պատրաստել անհրաժեշտ թվով բարձրակարգ մասնագետներ՝ ապահովելով թե հասարակական գիտությունների, մասնավորապես, քաղաքագիտության, թե երկրի

զարգացում: Միաժամանակ, այդ երկրներում տնտեսական ոչ բարվոք վիճակը, հետևաբար և ֆինանսական սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս այդ ոլորտում ներգրավել անհրաժեշտ թվով օտարերկրյա բարձրակարգ մասնագետների: Հոդվածում առաջարկվող հայեցակարգի կիրառումը հնարավորություն կտա հաղթահարել սուղ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով պայմանավորված բարդ իրավիճակը:

### **Բարձրագույն կրթության զարգացման արդի միտումները**

Գիտելիքը, որը վերջին շրջանում ապահովում է հիմնարար մրցակցային առավելություններ նրանց համար, ովքեր կարողանում են այն օգտագործել արագ և արդյունավետ, ավելի ու ավելի է դառնում պետության կայուն զարգացման գրավական<sup>2</sup>: Ակադեմիական ոլորտը՝ գիտության և կրթության համակարգը, որը նախ և առաջ կենտրոնացված է համալսարաններում, այնպիսի ընդգրկուն ազդեցություն է ձեռք բերել տնտեսության և հասարակության վրա, որ վերջին տարիներին ակտիվորեն կարծիքներ են արտահայտվում, որ մարդկությունը թևակոխել է զարգացման նոր փուլ՝ «ակադեմիական կապիտալիզմ» անվանումով<sup>3</sup>: Ընդ որում, իրենց արդյունավետությամբ հատկապես աչքի են ընկնում հետազոտական համալսարանները, որոնց կատարելագործման ուղղությամբ վերջին տասնամյակում ակտիվ փորձեր են արվում ոչ միայն Արևմուտքում<sup>4</sup>, այլև Ասիայում և Լատինական

---

<sup>2</sup> Building Knowledge Economies: Opportunities and Challenges for EU Accession Countries. N.Y., 2002, pp. 4-6.

<sup>3</sup> **Slaughter Sh. and Rhoades G.**, Academic Capitalism and the New Economy. Markets, State, and Higher Education. Baltimor and London, 2004.

<sup>4</sup> **Baker D.**, Mass Higher Education and the Super Research University: Symbiotic Trends and Future Scenarios, *Graduate Education 2020*, Washington, DC: Council of Graduate Schools. 2007; **Levin H.M., Jeong, D. and Ou, D.**, What is a World Class University? Presentation at the Comparative and International Education Society, Honolulu, 16 March, 2006.

Ամերիկայում<sup>5</sup>: Դրանց շարքում առավել հաջողվածներից է Նոր գլոբալ մոդելը (EGM)<sup>6</sup>, որի հիմնական բնութագրերն են հետևյալները.

- այդ համալսարաններն իենց առաքելությունը տեսնում են ազգ-պետության սահմանների հաղթահարման, գլոբալ հեռանկարում դաստիարակության և գիտելիքների սահմաններն առաջ մղելու մեջ,
- այդ ինստիտուտները միտված են ավելի ինտենսիվ հետազոտությունների՝ գիտական մեթոդների կիրառմամբ,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմը, որպես նոր գիտելիք արտադրող, ստանում է նոր դերակատարություն՝ անկախ հետազոտողի ավանդական մոդելից անցնելով միջդիսցիպլինար և միջազգային գործընկերության հետազոտություններով զբաղվող թիմի անդամի,
- քանի որ գիտահետազոտական հիմնարկները չափազանց թանկարժեք են, այդ համալսարանները դուրս են գալիս պետական աջակցության և ուսանողների կրթավճարների շրջանակներից և ընդլայնում են իրենց ֆինանսական մուտքերն ի հաշիվ ընկերությունների ու մասնավոր դոնորների աջակցության, մրցութային դրամաշնորհների և ոչ առևտրային ձեռնարկությունների ստեղծման,
- համալսարանների, կառավարությունների և ընկերությունների միջև ստեղծվում են նոր հարաբերություններ տնտեսական զարգացման և հասարակության բարօրության համար գիտելիքների ստացման նպատակով,
- այդ համալսարանները որդեգրում են ռազմավարություն ամբողջ աշխարհում ուսանողների, դասավանդողների ու կառավարիչների շարքերի համալրման նպատակով,
- այդ հաստատությունների հետազոտությունների ներքին բարդությունն ավելի մեծ է, դրանք ուղղված են միջդիսցիպլինար

<sup>5</sup> **Altbach P.G. and Balan J., (eds.)** World Class Worldwide: Transforming Research Universities in Asia and Latin America, Baltimore, MD: Johns Hopkins University Press. 2007.

<sup>6</sup> **Mohrman K., Ma W., Baker D.,** The Research University in Transition: The Emerging Global Model. *Higher Education Policy*. 2008, No 21, pp. 5-27.

**Abbott A.,** Chaos of Disciplines, Chicago, IL: University of Chicago Press. 2001.



խնդիրների լուծմանը, ուսանողների կրթական ծրագրերում հետազոտական տարրերի ներգրավմանը,

- համալսարանները մասնակցում են միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների և մի քանի կառավարական կազմակերպությունների հետ համատեղ ուսումնասիրությունների, ուսանողների և դասախոսների շարժունակության և միջազգային մակարդակով շփման աջակցության ծրագրերի:

Նման համալսարաններում կատարվող գիտական հետազոտությունների բարձր մակարդակը զգալիորեն մեծացնում է ուսումնական դասընթացների դասավանդման որակը, ինչը հնարավորություն է տալիս բակալավրիատի ավագ կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներին ներգրավել գիտական ուսումնասիրությունների մեջ՝ որպես պրոֆեսորների օգնականներ: Մեկ ուսումնական հաստատությունում գիտական ուսումնասիրությունների և կրթության համադրումը մի կողմից զգալիորեն բարձրացնում է կրթական գործընթացի մակարդակն ու արդյունավետությունը, մյուս կողմից ընդլայնում է հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և կադրային հնարավորությունները<sup>7</sup>: Մինչդեռ, հետխորհրդային տարածքում ոչ միայն դեռևս հաղթահարված չէ գիտության և կրթության ճգնաժամն<sup>8</sup>, այլև հատկապես ծանր է վիճակը հասարակական գիտությունների ոլորտում: Այն դեպքում, երբ տևական ժամանակահատված է, ինչ հասարակական և հումանիտար գիտությունների հատուկ կարևորությունը շարունակաբար ընդգծվում է ինչպես Միացյալ Նահանգների և այլ առաջատար երկրների ռազմավարական ծրագրերում, այնպես էլ ոլորտին ուղղակիորեն առնչվող միջազգային կազմակերպությունների զեկույցներում<sup>9</sup>: Իհարկե,

<sup>7</sup> Кочетков Г. Б., Супян В. Б., Американские исследовательские университеты: взгляд из России. *США\*Канада*, 2009, 3, 53-66.

<sup>8</sup> Супян В. Б., Наука и образование в США: главные приоритеты развития в "экономике знаний". *США\*Канада*, 2008, 3, 23-34.

<sup>9</sup> USA Strategy Plan on Humanities.

Social Sciences and Humanities Research Council. Strategic Plan 2006-2011. Canada. [www.dsp-psd.pwgsc.gc.ca/Collection/CR22-42-2006E.pdf](http://www.dsp-psd.pwgsc.gc.ca/Collection/CR22-42-2006E.pdf)

Strategic Plan 2009-2012. Research Council for the Humanities, Arts and Social Sciences. Australia.

հետխորհրդային տարածքում ստեղծված իրավիճակն ունի թե օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներ:

### **Հիմնախնդիրները և դրանց լուծման բարդությունները**

ԽՍՀՄ-ում տնտեսագիտության, իրավագիտության և մի շարք այլ հասարակական գիտությունների գաղափարական խիստ բևեռացվածության պատճառով խորհրդային ժամանակաշրջանում կուտակված փորձն ու գիտելիքները կիրառում չունեցան նորանկախ երկրներում: Ավելին, այդ ոլորտի հին մասնագետները, որոնք շարունակում են գործել, հաճախ ամենամեծ խոչընդոտներն են ստեղծում այդ ոլորտում նոր սերնդի գիտնականների ձևավորման ճանապարհին: Թվում էր, թե ավելի հեշտ կլինի քաղաքագիտության պարագայում, քանի որ ԽՍՀՄ-ում որպես գիտություն այն ճանաչվեց միայն 1989թ.: Մինչ այդ հասարակական, քաղաքական խնդիրների լուծման միակ տեսական հիմքն էր համարվում «գիտական կոմունիզմը»<sup>10</sup>: Սակայն այս ասպարեզն արագորեն հայտնվեց այն գիտաճյուղերի ներկայացուցիչների ազդեցության ներքո, որոնց կարիքն այլևս չկար (գիտական կոմունիզմ, ԽՄԿԿ պատմություն և այլն): Միաժամանակ, առկա էր նախկին խորհրդային տարածքում հասարակական գիտությունների ճգնաժամի ևս մի քանի լուրջ պատճառ: Առաջինը պայմանավորված էր նրանով, որ հասարակական գիտությունների ոլորտում ժամանակի պահանջներին համապատասխանող գիտնականների խիստ պակասը պատճառ է ոչ միայն շատ ցածր գիտական արդյունքների (խիստ սակավ են միջազգային պահանջների բավարարող մենագրությունները, գրախոսվող հանդեսներում տպագրվող հոդվածները և այլն) անգամ

Social Sciences and Humanities – An Overview. Survey among Social Sciences and Humanities Researchers in Austria, Belgium, France, Germany, Israel, Netherlands, Poland, Sweden, United Kingdom and participant of EU FP 5 and 6. [www.iccr-international.org/ssh-futures/literature.html](http://www.iccr-international.org/ssh-futures/literature.html)

The Future of the Social Sciences and Humanities. Final International Conference, 22-23 October, 2009, Brussels, Belgium. [www.iccr-international.org/...futures/.../2009-10-22\\_23-Programme.pdf](http://www.iccr-international.org/...futures/.../2009-10-22_23-Programme.pdf)

International Social Science Council, World Social Science Report 2010, Knowledge Divides (UNESCO).

[www.unesdoc.unesco.org/images/0018/001883/188333.pdf](http://www.unesdoc.unesco.org/images/0018/001883/188333.pdf)

<sup>10</sup> **Воробьев Д.М.**, Политология в СССР: формирование и развитие научного сообщества. *Полис*, 2004, 4, 169-178.

երկրի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ, այլև համալսարանների պրոֆեսորադասախոսական պատշաճ կազմի ձևավորման լուրջ խոչընդոտի, հետևաբար և նոր մասնագետների պատրաստման միջոցով իրավիճակի բարելավման խիստ սահմանափակ հնարավորության: Երկրորդ, եթե խորհրդային տարիներին այդ ոլորտի մասնագետներից միայն ընտրյալների համար էին մատչելի արևմտյան հրատարակությունները<sup>11</sup>, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո դրանք շատերի համար անհասանելի էին, քանի որ հասկանալի պատճառներով նրանք չէին տիրապետում անգլերենին, որով հրատարակվում է մասնագիտական գրականության առյուծի բաժինը: Երրորդ, կենսամակարդակի կտրուկ անկման և կրթության ու գիտության ոլորտում խիստ ցածր վարձատրության հետևանքով ոլորտը կորցրել էր գրավչությունը խոստումնալից երիտասարդների համար: Չորրորդ, խորհրդային բարձրագույն կրթական համակարգից հրաժարումն ու արևմտյան համակարգին անցումն՝ առանց վերջինիս համակողմանի ուսումնասիրության, հանգեցրեց «հետխորհրդային» կրթական համակարգի ձևավորմանը՝ որպես մի կողմ նետված հին և չյուրացված նորի անճոռնի հիբրիդ, և իրական գիտությանն անհաղորդ «տեղային գիտության» ձևավորմանը (չգրախոսվող հոդվածներ, գրագողությամբ կազմված ատենախոսություններ և դրանք հաստատող ոչ մասնագիտական խորհուրդներ, և այլն): Եվ դա պատահական չէ, քանի որ խորհրդային, իսկ հետո՝ ռուսական կրթական համակարգը գոյություն ուներ և շարունակում է գոյություն ունենալ ամերիկյան և եվրոպական կրթական համակարգերից մեկուսի<sup>12</sup>: Չնայած առանձին տարբերություններին, այս իրավիճակը բնորոշ է նախկին խորհրդային տարածքի գրեթե բոլոր երկրներին: Ավելին, թեև ի տարբերություն այդ երկրների, 2004թ. Եվրամիությանն անդամակցած Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում (Չեխիա, Լեհաստան, Հունգարիա, Սլովենիա, Սլովակիա, Լիտվա, Լատվիա, Էստոնիա) ոլորտի կարգավորման մեխանիզմների բարեփոխման դրական ազդեցությունն ակնհայտ է, սակայն բովանդակային հիմնախնդիրները դեռևս մնում են

<sup>11</sup> **Chiva C.**, Political science in post-communist Romania, *European Political Science*, 2007, 6, 24-32.

<sup>12</sup> **O'Connor T.E.**, Russian Higher Education: in comparison USA. *Pro et Contra*, 2010, 3, 72-80.

չլուծված<sup>13</sup>: Նույնն է իրավիճակը նաև մեկ այլ մեխանիզմի հետ կապված, որը հետխորհրդային տրանսֆորմացիայի առաջին փուլում համարվում էր համադարման շատ խնդիրների համար: Խոսքն ազատականացման և մասնավոր հատվածի զարգացման մասին է: Երկու տասնամյակի փորձը վկայում է, որ թեև ազատականացումն ու մասնավոր համալսարանների ստեղծումն անհրաժեշտ էին և օգտակար եղան գիտակրթական համակարգի զարգացման համար, սակայն հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար հիմնարար նշանակություն ունեցող որակյալ բարձրագույն կրթության և հետազոտությունների ապահովման հարցը մնում է չլուծված<sup>14</sup>:

### Խնդրի լուծման հնարավորությունները

Ամերիկյան և ռուսական բարձրագույն կրթական համակարգերին քաջաձանոթ Թ. Օ'Քոննորը հետխորհրդային տարածքում կրթության և գիտության արդիականացման նպատակով առաջին հերթին առաջարկում է ամուր կազմակերպական կապ հաստատել կրթության և գիտության միջև, ստեղծել իրական հետազոտական համալսարաններ և անցնել միասնական միջազգային ստանդարտների, ապահովել ակադեմիական ազատություն<sup>15</sup>: Հետխորհրդային երկրներում առկա իրավիճակի տեսակետից հատկապես ուշագրավ է, որ ըստ Ալտբախի և Բալանի<sup>16</sup>, ակադեմիական ազատությունը կարևոր նշանակություն ունի հատկապես քաղաքական և սոցիալական բնույթի գիտական ուսումնասիրությունների մշակույթի ձևավորման համար: Միաժամանակ, հետազոտական համալսարանների պրոֆեսորներն ավելի հաճախ, քան այլ գիտնականներ, ցանկալի են որպես «իրապարակային ինտելեկտուալներ»: Իհարկե, Օ'Քոննորի գաղափարը միանգամայն տրամաբանական է՝ Արևմուտքում ազգային հետազոտական համալսարանները երկրի և հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման առանցքային շարժիչ գործոններն են<sup>17</sup> և

<sup>13</sup> Galbraith K., Towards Quality Private Higher Education in Central and Eastern Europe, *Higher Education in Europe*, 2003, 4, 540-558.

<sup>14</sup> Galbraith K., ...

<sup>15</sup> O'Connor T.E., ...

<sup>16</sup> Altbach P.G. and Balan J. (eds.), ...

<sup>17</sup> O'Connor T.E., ...

հետխորհրդային երկրներում նման համալսարանների առկայությունը ոչ միայն ճգնաժամից դուրս կբերի կրթությունն ու գիտությունն, այլև հիմնավոր լուծումներ կառաջարկի այլ բարդ իրավիճակները հաղթահարելու համար: Սակայն ակնհայտ է, որ իրավիճակը ոչ միայն ճգնաժամային է և կարոտ հնարավորինս արագ շտկման, այլև հիմնախնդիրը բազմագործոն է ու խիստ բարդ: Ըստ Չիվայի<sup>18</sup>, հասարակական գիտությունների և, մասնավորապես, քաղաքագիտության վիճակը հետկոմունիստական երկրներում պայմանավորված է երեք գործոններով՝

- կրթական և հետազոտական ծրագրերում ինովացիոն մեթոդների սակավ կիրառում,
- անբավարար պետական ներդրումներ կրթությունում,
- գիտահետազոտական գործունեության թույլ ֆինանսական աջակցություն:

Առաջին գործոնը պայմանավորված է ոլորտում բարձրակարգ մարդկային ռեսուրսների խիստ պակասով: Հատկապես մեծ է արդի լավագույն համալսարաններում կիրառվող կրթական ու գիտական ծրագրերին և ընթացակարգերին լավատեղյակ սակավաթիվ մասնագետների ներուժի համադրման կարիքը: Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ՝ ֆինանսական գործոններին, ապա այդ խնդիրների լուծումն ավելի մեծ դժվարությունների հետ է կապված: Բոլոր այդ երկրներում գիտության և կրթության ֆինանսավորումը հետխորհրդային շրջանում էապես կրճատվեց: Հետագայում դրա ծավալներն աճեցին, սակայն մնում են ցածր: Հետազոտական համալսարանները միշտ էլ եղել են թանկարժեք, իսկ միջազգային մրցակցության նոր պահանջները հանգեցնում են գիտական հետազոտությունների վրա ծախսերի նոր մակարդակի, ինչը տասը տարի առաջ անպատկերացելի էր: Օրինակ, ըստ Դ. Ուորդի<sup>19</sup>, հետազոտական համալսարանների միջին տարեկան բյուջեն 1.5 մլրդ ԱՄՆ դոլար է: Բայց, անգամ ամենահարուստ երկրներում բարձրակարգ ծրագրերի աջակցությունը շատ ուղղություններով բարդ խնդիր է<sup>20</sup>: Հետկոմունիստական երկրների համար այն առավել ևս բարդ

<sup>18</sup> Chiva C., ...

<sup>19</sup> Ward D., 'Universities as Global Institutions', Speech at the University of Manchester, 19 October, 2005.

<sup>20</sup> Mohrman K., Ma W., Baker D., The Research University in Transition: The Emerging Global Model. *Higher Education Policy*. 2008, 21, 5-27.

է: Անգամ այդ երկրների մեջ իր ֆինանսատնտեսական հնարավորություններով ու ներուժով առանձնացող Ռուսաստանի համար: Այդ երկրում ձևավորվել է ընդամենը երեք հետազոտական համալսարան՝ Ռուսական տնտեսագիտական դպրոցը, Անկախ մոսկովյան համալսարանը և Սանկտ-Պետերբուրգի եվրոպական համալսարանը<sup>21</sup>: Ընդ որում, վերջինս 2000-ականներին լուրջ բարդությունների բախվեց քաղաքական նկատառումներով: Կարող է թվալ, որ Ռուսաստանում խնդրի լուծման այլ հնարավորություն ևս կա՝ պայմանավորված պատկառելի մասնավոր կապիտալի առկայությամբ: Հայտնի է երկու նման փորձ, երբ երկու ռուս միլիարդատերեր երկու տարբեր համալսարաններում մոտ 100 մլն դոլարի ներդրումներ արեցին, սակայն երկու նախագծերն էլ տապալվեցին<sup>22</sup>: Ակնհայտ է, որ անհամեմատ ավելի համեստ ֆինանսատնտեսական հնարավորություններ ունեցող մյուս երկրներում հետազոտական համալսարանների ձևավորումը գործնականում անհնարին է: Այդ նպատակի համար խիստ սահմանափակ հնարավորություններ են ստեղծում նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերը (TEMPUS, ERASMUS MUNDUS և այլն): Ահա թե ինչու Մորմանը նվազ ֆինանսական միջոցներ ունեցող երկրներին առաջարկում է<sup>23</sup> միջազգային մակարդակ ապահովելու բարդ խնդիրը լուծելու համար ուշադրությունը կենտրոնացնել մեկ կամ մի քանի դիսցիպլինների վրա՝ զարգացնելով ռազմավարական առավելություններն ու համագործակցությունն այլ համալսարանների հետ: Միաժամանակ, նա լուծում է առաջարկում նաև մարդկային ռեսուրսների՝ համապատասխան մասնագետների սղության դեպքի համար: Մորմանը մատնացույց է անում, օրինակ, վերջին տասնամյակների ընթացքում հաջողություններ արձանագրած Լոնդոնի տնտեսագիտական դպրոցը, Հոնկոնգի, ինչպես նաև մի շարք այլ համալսարաններ, որոնց դասախոսների 80 տոկոսից ավելին օտարերկրացիներ են, և շատ այլ համալսարաններ, որտեղ նրանց թիվն անցնում է 50 տոկոսից: Դա հնարավորություն է տալիս իրականացնել ակնթարթային մոդեռնիզացիա և մեծացնել այդ համալսարանների համբավը: Սակայն դժվար չէ նկատել, որ դրա համար ևս զգալի

<sup>21</sup> Guriev S., Research Universities in Russia, *Social Research*, 2009, 76, 2, 771-728.

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Mohrman K., Ma W., Baker D., ...

Ֆինանսական միջոցներ են պետք և գրեթե բոլոր նման համալսարանները ձևավորվել են հարուստ երկրներում, մինչդեռ ֆինանսական խիստ սահմանափակ հնարավորություններ ունեցող հետխորհրդային երկրների համար այդ ճանապարհը գործնականում անհասանելի է: Այդուհանդերձ, Օ'Քոննորի առաջարկած գաղափարը կարող է իրագործվել նաև այդ երկրներում առկա հնարավորությունների պայմաններում՝ խնդրի տրանսֆորմացիայի միջոցով: Հայտնի են բարդ, բազմագործոն խնդիրների լուծման մեթոդներ<sup>24</sup>, համաձայն որոնց որոշակի կանոններով դրանք պետք է բաժանել ինքնուրույն ենթախնդիրների, որոնք պահպանում են հիմնախնդրի հատկանիշները: Այդ մոտեցման կիրառման դեպքում վերոհիշյալ հիմնախնդիրը (հետազոտական համալսարանի ստեղծում) պետք է բաժանել առանձին գիտաճյուղերի խնդիրների (հետազոտական ամբիոնների ստեղծում)՝ դրանց լուծումները դիտարկելով առանձին-առանձին, ըստ նման բարդ խնդիր լուծելու համար յուրաքանչյուրի պատրաստվածության մակարդակի: Դա հնարավորություն կտա կիրառել գրադուալիստական մոտեցում՝ նախ ձևավորել հետազոտական համալսարաններին ներկայացվող պահանջները բավարարող գիտակրթական «օազիսներ»՝ փորձարարական ամբիոն-կենտրոններ, իսկ բավարար թվով ոլորտներում դրանց կայացումից հետո ձևավորել հետազոտական համալսարաններ: Այդպիսի ամբիոն-կենտրոնն իրենից կներկայացնի համալսարանական ամբիոնի և նույն համալսարանում ստեղծված գիտական կենտրոնի հիման վրա կառուցված ամբողջական գիտակրթական համալիր: Կրթական ծրագիրը պետք է ներառի բարձրագույն կրթության բոլոր աստիճանները (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա (PhD ծրագրեր)) և պետք է իրականացվի ամբիոնի միջոցով, գիտականը՝ նույն համալսարանում ստեղծված գիտական կենտրոնի (հետազոտում՝ Կենտրոն): Դրանց բովանդակային կապը պետք է ապահովեն ամբիոնում դասավանդող և Կենտրոնում գիտական գործունեությամբ զբաղվող գիտնականները: «Ամբիոն-կենտրոն» ձևաչափով հնարավոր է լուծումներ գտնել երկու հիմնական՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների պակասով

<sup>24</sup> **Торосян Т.,** Методика разработки средств тестового диагностирования памяти. *Вопросы радиоэлектроники. Серия ЭВТ*, 1989, 12, 101-109.

պայմանավորված խնդիրների լուծման համար, քանի որ այդ դեպքում պահանջվող միջոցների չափերն էականորեն ավելի փոքր կլինեն:

Մարդկային ռեսուրսների խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է երկրում առկա ներուժի կենտրոնացմամբ ձևավորել ստեղծագործական կորիզը (լոկոմոտիվը) և մասնագիտական այնպիսի որակներ ունեցող անձնակազմ, որը պատրաստ է և ունակ իրագործելու զարգացման ծրագրերը: Լոկոմոտիվի առաքելությունն է, քաջաճանոթ լինելով արդիական ընթացակարգերին, ինովացիոն մեթոդներին, առաջատար համալսարաններում իրականացվող գիտակրթական ծրագրերին, համալիր գիտակրթական ծրագրերի մշակումը և դրանց կազմակերպման ու իրականացման գործընթացներում առաջատար դերակատարությունը: Ծրագրի հաջող իրագործման անհրաժեշտ պայման է նաև մագիստրատուրայի և ասպիրանտուրայի լավագույն ուսանողների ներգրավումը ամբիոնի և Կենտրոնի ծրագրերում՝ շարունակաբար բարելավելով անձնակազմի մասնագիտական որակները: Չափազանց կարևոր է նաև, որ և կրթական, և գիտական ծրագրերն իրականացվեն արևմտյան լավագույն համալսարանների հետ ակտիվ համագործակցությամբ: Քանի որ հետկոմունիստական երկրներից շատերում սովորաբար չեն հրատարակվում գրախոսվող գիտական համդեսներ, ապա գիտական ծրագրերի հաջող իրականացմանը մեծապես կարող է նպաստել նման հանդեսի հրատարակումը՝ խմբագրակազմում և հեղինակների կազմում ներգրավելով նաև մասնագետներ առաջատար համալսարաններից:

Ֆինանսական ռեսուրսների ներգրավման խնդրի լուծումն էապես հեշտանում է առաջարկվող մոտեցման կիրառման դեպքում: Հաշվարկները ցույց են տալիս, որ մեկ նման ամբիոն-կենտրոնի հիմնադրման և հաջող գործունեության համար այնպիսի փոքր երկրում, ինչպիսին, օրինակ, Հայաստանն է, կպահանջվի տարեկան մոտավորապես լրացուցիչ 500.000 դոլարին համարժեք ֆինանսավորում՝ ներկայումս գորյություն ունեցող ֆինանսավորումից զատ: Ակնհայտ է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող անգամ ամենափոքր չափեր և բյուջե ունեցող երկրները, որտեղ կկարևորվի հետազոտական ամբիոն-կենտրոնների ստեղծումը երկրի զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցող մի քանի ուղղություններով, կարող են դա ապահովել:



Պետք է նկատել, որ թեև գրադուալիսական մոտեցման կիրառումը մեծապես հեշտացնում է ֆինանսական ռեսուրսների խնդրի լուծումը, ինչպես նաև անձնակազմի գործունեության համար անհրաժեշտ կառույցների ու մեխանիզմների ստեղծումը, սակայն այն հիմնախնդրի ինքնաբերաբար լուծում չի կարող ապահովել մարդկային ռեսուրսների խնդրի համար: Ստեղծագործական կորիզի՝ լոկոմոտիվի առկայությունը այդ մոտեցման կիրառման հաջողության գլխավոր երաշխիքն է:

Ներկայացված հայեցակարգը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կիրառվում է Երևանի լեզվահասարակագիտական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնում՝ քաղաքագիտական մասնագիտությունների համար:

## Եզրակացություն

Հետևում են իստական երկրներում գիտության և կրթության ոլորտներում առկա հիմնախնդիրների առանձնահատկությունների և դրանց լուծման դժվարությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդյունավետ կարող է լինել հետևյալ հայեցակարգը.

1. թեև երկու տասնամյակի ընթացքում այդ ոլորտներում իրականացված օրենսդրական, կառուցվածքային և ընթացակարգային բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցել են և անհրաժեշտ էին, սակայն դրանք բավարար չէին կարող լինել ոլորտների լիարժեք զարգացման համար;
2. այդ հիմնախնդիրների լուծումն անհնարին է առանց ժամանակակից պահանջներ բավարարող բարձրագույն կրթության և գիտության՝ հետազոտական համալսարանների ձևավորման: Այդ երկրների համար խնդիրը հատկապես բարդ է հասարակական գիտությունների, մասնավորապես, քաղաքագիտության պարագայում;
3. այդ երկրներում հետազոտական համալսարանների ձևավորումը ընդունված ճանապարհով գործնականում հնարավոր չէ մեծ ֆինանսական ռեսուրսների և բարձր որակավորում ունեցող

- մարդկային ռեսուրսների ներգրավման հետ կապված դժվարությունների պատճառով;
4. այդ երկրներում գիտության և կրթության ոլորտների հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև համակարգային տրանսֆորմացիայի համար արդյունավետ լուծումներ որոնելու նպատակով կարող է կիրառվել աստիճանական լուծում՝ նախ ձևավորելով առանձին ոլորտների «հետազոտական ամբիոն-կենտրոններ», հետագայում դրանց զարգացման և տարածման արդյունքում ձևավորելով հետազոտական համալսարաններ: Նման մարտավարության դեպքում առաջին փուլում կպահանջվեն այնպիսի սահմանափակ ծավալների ֆինանսական միջոցներ, որոնց ապահովում մատչելի կլինի նաև փոքր ռեսուրսներ ունեցող երկրների համար;
  5. մարդկային ռեսուրսների ապահովման տեսակետից ևս գրադուալիստական մոտեցումը լուծման հնարավորություններ է ստեղծում: Այդուհանդերձ, պարտադիր պայման է ամբիոնում ստեղծագործական կորիզի՝ արդիական ընթացակարգերին, ինովացիոն մեթոդներին, առաջատար համալսարաններում իրականացվող գիտակրթական ծրագրերին քաջաձանոթ լոկոմոտիվի ստեղծումը, որի առաքելությունն է համալիր գիտակրթական ծրագրերի մշակումը և դրանց կազմակերպման ու իրականացման գործընթացներում առաջատար դերակատարությունը;
  6. ծրագրի հաջող իրագործման անհրաժեշտ պայման է մագիստրատուրայի և ասպիրանտուրայի լավագույն ուսանողների ներգրավումը ամբիոնի և Կենտրոնի ծրագրերում, ինչպես նաև կրթական, և գիտական ծրագրերի իրականացումն արևմտյան լավագույն համալսարանների հետ ակտիվ համագործակցությամբ: Գիտական ծրագրերի հաջող իրականացմանը մեծապես կարող է նպաստել գրախոսվող գիտական հանդեսի հրատարակումը՝ խմբագրակազմում և հեղինակների կազմում ներգրավելով նաև մասնագետներ առաջատար համալսարաններից:

---

**Particularity of Problems and their Solution Concept in the Social Sciences and Higher Education in Post-Soviet Countries**

TIGRAN TOROSYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

The article explores the development of social sciences and higher education in post-Communist countries. Comparative analysis of the conditions necessary for the creation of modern research universities, as well as the human and financial resources of these countries shows that in post-Communist countries it is almost impossible to form such universities especially in the social sciences, in particular, political science. However, the implementation of the paradigm, suggested in the article, will provide an opportunity to overcome the complicated situation, conditioned by scarce human and financial resources.

## **Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները**

**ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն, ԵՊՀ*

**ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն, ԵՊՀ*

Ստացված է 07.07.2013

Ընդունված է 12.10.2013

Հետխորհրդային տրանսֆորմացիայի մեկնարկից երկու տասնամյակ անց էլ դեռևս շարունակվում են այդ գործընթացի տեսական հիմքերի վերաբերյալ քննարկումները: Եթե մեկ տասնամյակ առաջ արդեն կարելի էր միանշանակորեն պնդել, որ այն ժողովրդավարացման երրորդ փուլի շարունակությունը չէ և մինչև ԽՍՀՄ փլուզումն արձանագրված վարչակարգերի անցումների վերաբերյալ ձևավորված տեսություններն ու մոդելները միայն առաջին մոտավորությամբ կարելի է կիրառել հետխորհրդային տրանսֆորմացիայի ուսումնասիրության նպատակով, ապա ավելի ուշ կասկածի տակ դրվեց այդ գործընթացի համար ընդհանրական հարացույցի գոյությունը: Այդուհանդերձ, գործընթացում ակնհայտ են մի շարք օրինաչափություններ և հոդվածում դիտարկվում է այդ աննախադեպ բարդ ու բազմավեկտոր գործընթացի մոդելավորման հնարավորությունը:

### **Բանալի բառեր**

Հետխորհրդային տրանսֆորմացիա, ժողովրդավարացում, փուլեր, վարչակարգեր, հարացույցներ

### **Հետխորհրդային տրանսֆորմացիա. երրորդ փուլի շարունակություն, թե՞ նոր երևույթ**

ԽՍՀՄ փլուզումով սկիզբ առած երևույթ՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի բնույթի վերաբերյալ առաջին գնահատականները չափազանց լավատեսական էին: Անգամ տրանսֆորմացիաների նախորդ գործընթացներին լավատեսյակ մասնագետներն առանձնահատուկ մոտեցումների անհրաժեշտություն չէին տեսնում ու այն վերլուծելու և մեկնաբանելու համար կիրառում էին արդեն հայտնի

տեսություններ ու մոդելներ: Մասնավորապես՝ Ս. Հանթինգթոնը<sup>1</sup> համարում էր, որ դա ժողովրդավարացման երրորդ ալիքի մի փոքր ուշացած շարունակությունն է և այդ գործընթացում գտնվող երկրներում անշեղորեն հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր: Ինչպես նշում է Ա. Մելվիլը՝ «բազմաթիվ հետազոտողներ, նկարագրելով և վերլուծելով աշխարհում քաղաքական զարգացումը, ժամանակակից քաղաքական տրանսֆորմացիաներն ընկալում էին բացառապես պարզ գծային տրամաբանության շրջանակներում՝ անցում ավտորիտարիզմից դեպի կայացած ժողովրդավարություն»<sup>2</sup>: Պատահական չէ, որ այդ գործընթացի առաջին տասնամյակի արդյունքներով ձևակերպված հարացույցում առանցքային դերակատարություն էր վերապահված ընտրություններին<sup>3</sup>: Իհարկե, ընտրությունները կարևոր մեխանիզմ են հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքն ու ձեռքբերումները գնահատելու համար, քանի որ այդ գործընթացին միաժամանակ ուղղակիորեն մասնակցում են թե իշխանությունը, թե ընդդիմությունը ներկայացնող քաղաքական ուժերը, պետական կառավարման բոլոր՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները և ընտրությունների որակը կարելի է համարել նրանց գործունեության ինտեգրալ գնահատականը: Սակայն արդեն 2000-ականների սկզբին պարզ դարձավ, որ նման բարդ, համակարգաստեղծ, բազմավեկտոր գործընթացի հարացույցում ընտրությունները չեն կարող առանցքային նշանակություն ունենալ, քանի որ դեռևս լիովին չձևավորված կամ անկատար պետական և հասարակական կառույցների առկայության պարագայում հիմնախնդիրների լուծումները կապված են ոչ միայն վարչախմբի գործունեության, այլև այդ կառույցների արդյունավետության հետ: Իսկ ընտրությունների միջոցով հնարավոր է փոխել միայն վարչախումբը, սակայն ոչ բարելավել կառույցների բնույթը: Պատահական չէ, որ գործընթացի մեկնարկից մեկ և կես տասնամյակ անց առաջարկվում էր նոր հարացույցի գաղափար՝ առանցքային նշանակություն վերագրելով համակարգաստեղծ կառույցի՝

<sup>1</sup> **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991.

<sup>2</sup> **Мельвил А.**, О траекториях посткоммунистических трансформаций, *Полис*, 2004, 2, 65-75.

<sup>3</sup> **Carothers T.**, The End of the Transition Paradigm. *Journal of Democracy*, 2002, 13, 1, 6-21.

բազմակուսակցական համակարգին<sup>4</sup>: Ոմանք էլ ընդհանրապես կասկածի տակ էին դնում հետխորհրդային տրանսֆորմացիայի համար ընդհանրական կամ գերակշռող հարացույցի գոյությունը՝ այն համարելով առասպել<sup>5</sup>: Ակնհայտ էր դառնում, որ ժողովրդավարացման երրորդ ալիքն ու հետխորհրդային տրանսֆորմացիան տարաբնույթ երևույթներ են և էական նշանակություն ունեն այդ գործընթացների միջև առկա առնվազն հինգ տարբերությունները՝

- հետխորհրդային տրանսֆորմացիան ունի երկակի բնույթ. հիմքից պետք է միաժամանակ ստեղծվեին և՛ բազմակարծիք ժողովրդավարություն, և՛ շուկայական տնտեսություն, մինչդեռ երրորդ ալիքի երկրներում հատկապես երկրորդի հիմքերն առկա էին,
- երրորդ ալիքն ընդգրկում էր սոցիալ-տնտեսական և արդյունաբերական ավելի ցածր մակարդակ ունեցող երկրներ, որտեղ ավելի հեշտ էր իրականացնել մասնավորեցում և հասարակական զարգացման ռազմավարություն,
- երրորդ ալիքն ընդգրկող երկրներում գոյություն չուներ ազգային հարց, մինչդեռ հետխորհրդային երկրների ճնշող մեծամասնությունը ստիպված էր հաղթահարել նաև այդ մարտահրավերը,
- հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում քաղաքացիական հասարակության առկայության մասին կարելի է խոսել չափազանց մեծ վերապահումներով՝ սաղմնային ձևերի մակարդակով, այն էլ ոչ թե որպես խնդիրների փոխզիջումային լուծման մեխանիզմներ, այլ հասարակական անկայունության օջախներ,
- 70-ական թվականներին միջազգային իրավիճակն ավելի կայուն և բարենպաստ էր, քան 90-ականների<sup>6</sup>:

Այս տարբերությունները վկայում են, որ երկու գործընթացները միանգամայն տարբեր բնույթ ունեն, հետևաբար էական են դրանց մեջ

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> **Gans-Morse J.**, Searching for Transitologists: Contemporary Theories of Post-Communist Transitions and the Myth of a Dominant Paradigm, *Post-Soviet Affairs*, 2004, **20**, 4, pp. 320-349.

<sup>6</sup> **Terry S.**, Thinking about Post-Communist Transition: How Are They? *Slavic Review*, 1993, **52**, 2, 333-337.

ներգրավված երկրների ու հասարակությունների առջև ծառացած խնդիրների տարբերությունները: Ավելին, էապես տարբեր խնդիրների լուծման համար պահանջվում են տարբեր միջոցներ, մոտեցումներ և մոդելներ: Այսպիսով, եթե հետխորհրդային տրանսֆորմացիայի սկզբնական փուլում, երբ դեռևս նոր էին ձևավորվում պետական և հասարակական կառույցները, այդ գործընթացի մասնակից երկրներն ունեին նույն խնդիրները, հնարավոր էր օգտագործել ընդհանուր հարացույց և արդեն գոյություն ունեցող՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի վերաբերյալ ձևավորված սկզբունքներ և մոդելներ, ապա հաջորդ՝ յուրաքանչյուր երկրի զարգացման ուղու ընտրման փուլում անհրաժեշտ էր կիրառել այդ անսխալադեպ գործընթացի համար մշակված մոդելներ և տեսություններ: Ընդ որում, արդեն ոչ թե մեկ միասնական հարացույցի շրջանակներում, այլ տարբեր ուղիներ ընտրած երկրների յուրաքանչյուր խմբի համար:

### **Ընդհանուր փուլի ավարտը և տարամիտվող ուղիների ընտրությունը. եռաբաղադրիչ գործընթաց՝ երեք հնարավոր ելքերով**

2004 թվականին տեղի ունեցած մի քանի իրադարձություններ վերջնականորեն հաստատեցին այն պնդումները, որ հետխորհրդային տրանսֆորմացիան չի կարող դիտակվել որպես ժողովրդավարացման երրորդ ալիքի շարունակություն: Այն ուրույն գործընթաց է, որը երկրների տարբեր խմբերի համար ունի տարբեր ընթացք և ուղղություն՝ միանգամայն տարբեր ելքերով: Եվրամիության ամենաընդգրկուն ընդլայնումից, ինչպես նաև մի քանի երկրներում տեղի ունեցած <<գունավոր հեղափոխություններից>> հետո հետխորհրդային երկրները բաժանվեցին երեք հիմնական խմբի՝ ըստ անցած հետագծի ու նշմարվող ապագայի.

- ԵՄ նոր անդամ երկրներ, որոնք ձևավորել էին ժողովրդավարական վարչակարգեր,
- երկրներ, որոնք ժողովրդավարական վարչակարգերի ձևավորումը հռչակել էին սահմանադրական նպատակ, այդ ուղղությամբ արձանագրել էին որոշ արդյունքներ, սակայն դեռևս պահպանում էին ավտորիտարիզմի մի շարք էական հատկանիշներ,

- երկրներ, որոնք գնում էին ավտորիտարիզմի խորացման, իսկ դրանցից որոշները՝ ամբողջատիրական վարչակարգերի հաստատման ուղղությամբ:

Ակնհայտ է, որ եթե այս երկրների կայացման առաջին տասնամյակի ընթացքում (տրանսֆորմացիայի առաջին փուլ) դրանք կարող էին ունենալ մի շարք ընդհանրություններ և դրանց ընթացքի գնահատման, մեկնաբանման ու կանխատեսման համար կարող էին կիրառվել ընդհանուր տեսություններ, ապա 2004թ. սկսված երկրորդ փուլում դա ավելի ու ավելի պետք է դժվարանար: Ավելին, երկրների բաժանումը վերոհիշյալ երեք խմբերի թույլ է տալիս արձանագրել, որ հետխորհրդային տրանսֆորմացիան առաջին և երրորդ խմբերի մեջ մտնող երկրների համար կարելի է համարել ավարտված, քանի որ այդ երկրներին բնորոշ զարգացման խնդիրներն ու դրանց ուսումնասիրությունը միանգամայն համադրելի են մինչև հետխորհրդային տրանսֆորմացիան գոյություն ունեցած և այսօր էլ գոյություն ունեցող տասնյակ այլ երկրների համար արձանագրված խնդիրների ու դրանց ուսումնասիրության հետ և առանձին հարացույցի կամ տեսության մշակման կարիք չկա: Մասնավորապես, առաջին խմբի երկրներն այլևս հարկ է դիտարկել Եվրամիության այլ անդամ երկրների հետ նույն հարթությունում՝ իրենց հատուկ խնդիրներով ու զարգացման հնարավորություններով: Երրորդ խմբի երկրների խնդիրներն էլ էապես չեն տարբերվում խորը ավտորիտար կամ ամբողջատիրական վարչակարգեր ունեցող այլ երկրների խնդիրներից և նրանց ընթացքը կարող է հետազայում դիտարկվել հետխորհրդային տրանսֆորմացիայի հարթությունից դուրս: Այլ է իրավիճակը երկրորդ խմբի երկրների համար, որոնց շարքին կարելի է դասել Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, որոշ փորձագետների գնահատմամբ՝ նաև Ադրբեջանը, մի շարք վերապահումներով: Պատահական չէ, որ հենց այս երկրներն են ընդգրկվել Եվրամիության <<Նոր հարևանության քաղաքականության>> (մեկնարկել է 2004 թվականին) և <<Արևելյան գործընկերության>> (մեկնարկել է 2008թ.) ծրագրերում: Այդ երկրների համար դեռևս հնարավոր է ժողովրդավարության ընտրությունը՝ որպես վարչակարգի ձև: Սակայն, ինչպես նշում է Վ. Գելմանը, հետխորհրդային հասարակությունների քաղաքական տրանսֆորմացիայի վերլուծության համար ժողովրդավարացման նախկինում կիրառված մոդելներն



ակնհայտորեն բավարար չեն այս երկրներում տրանսֆորմացիայի գործընթացները հասկանալու համար<sup>7</sup>: Տ. Կարոզերսի եզրակացությունն ավելի կտրուկ էր՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների փորձի ուսումնասիրությունը նախկինում ձևավորված անցումագիտության տեսության միջոցով այլևս անարդյունավետ է և դրանից պետք է հրաժարվել<sup>8</sup>:

Պետք է նկատել, որ այդ գնահատականները ձևակերպվել են 2000-ականների սկզբին, երբ վերոհիշյալ երկրորդ խմբի երկրներում սկսել էր կայունանալ և զարգացման միտումներ դրսևորել տնտեսությունը, գրեթե ամբողջությամբ ձևավորվել էին կառույցները և այլն: Սակայն, Ա. Մելվիլը միանգամայն արդարացիորեն նկատում էր, որ ինստիտուցիոնալ կայունությունը և վարչակարգային կոնսոլիդացիան, թեև կարող են ապահովել որոշ ձեռքբերումներ, սակայն շատ հեռու են համախմբված ազատական ժողովրդավարությունից<sup>9</sup>:

Ըստ Կարոզերսի՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի արդյունքում 2000-ականների սկզբին ձևավորվեցին դելեգատիվ ժողովրդավարություններ<sup>10</sup>, որոնք իրենցից ներկայացնում են ոչ միայն որոշակի հիբրիդային քաղաքական վարչակարգեր<sup>11</sup>, որոնք համակցում են ժողովրդավարական և ավտորիտար վարչակարգերի առանձին տարրեր և հատկանիշներ, այլև կեղծ ժողովրդավարություններ, որոնք միայն նմանակում են ժողովրդավարության որոշ ձևական հատկանիշներ (օրինակ՝ ընտրություններ և բազմակուսակցական համակարգ)<sup>12</sup>: Այդպիսի նմանակումների ժամանակավոր հաջողությունների պատճառներից մեկն էլ լիարժեք ուսումնասիրությունների համար անհրաժեշտ արդյունավետ մոտեցումների ու գործիքների պակասն է և առանձնահատուկ լուծումների մշակման դժվարությունները: Իսկ

<sup>7</sup> Гельман В., Постсоветские политические трансформации. Наброски к теории, *Полис*, 2001, 1, 15-29.

<sup>8</sup> Карозерс Т., Трезвый взгляд на демократию, *Pro et Contra*, № 1 (28). 2005, 73-80.

<sup>9</sup> Мельвиль А., ...

<sup>10</sup> Carothers T., ...

<sup>11</sup> Diamond L., Thinking About Hybrid Regimes, *Journal of Democracy*, 2002, 1, 2, 21-35.

<sup>12</sup> Мельвиль А., Транснационализация мировой политики и ее «противофазы». Политическая наука в современной России: время поиска и контуры эволюции. М., 2004, 136-137.

արևմտյան մոդելների պարզունակ կիրառումը հետխորհրդային տրանսֆորմացիայի խնդիրների լուծման նպատակով, հանգեցնում է ձախողման դատապարտված ձևական կառույցների ձևավորմանը, իսկ դրանից հետո՝ քաղաքական ճգնաժամերի, լուրջ սոցիալական ցնցումների, քաղաքական բևեռացումների և այլն<sup>13</sup>։ Ինչպես այլ բարդ համակարգերի ձևավորմանը միտված գործընթացներում, այնպես էլ հետխորհրդային տրանսֆորմացիայի ժամանակ մեխանիստական մտածողությունը կիրառելի չէ<sup>14</sup>։ Եվ պատահական չէ, որ երկու տասնամյակ անց էլ <<հետխորհրդային տրանսֆորմացիա>> երևույթի ուսումնասիրությանն առնչվող մոտեցումներն ու հարացույցները շարունակում են վերանայվել։ Վերոհիշյալ երեք խմբերից միայն երկրորդում ընդգրկված երկրների ընթացքի հետ կապված կարելի է խոսել հետխորհրդային տրանսֆորմացիայի նոր հարացույցի մասին՝ ժողովրդավարացման գործընթացի ենթատեքստում։ Ակնհայտ է, որ նման հարացույցում առանցքային նշանակություն պետք է ունենա բազմակուսակցական համակարգը՝ որպես համակարգաստեղծ կառույց, քանի որ այնտեղից են ձևավորվում խորհրդարանական մեծամասնությունն ու ընդդիմությունը, որոնք էլ ձևավորում են քաղաքական համակարգի կառույցները<sup>15</sup>։ Իհարկե, հետխորհրդային տրանսֆորմացիայում ընդգրկված երկրներում ձևավորված բազմակուսակցական համակարգերն ունեն էական առանձնահատկություններ<sup>16</sup> և մինչ տեղի ունեցած տրանսֆորմացիաների ուսումնասիրման նպատակով և արդյունքում ստեղծված քաղաքագիտական տեսությունների կիրառումը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների բազմակուսակցական համակարգերի ուսումնասիրությունների ժամանակ նույնպես պարբերաբար բախվում է բարդությունների<sup>17</sup>։ Խնդրի բարդությունը պայմանավորված է ոչ միայն այդ հանգամանքով, այլև, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի

<sup>13</sup> Թորոյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա։ Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 34։

<sup>14</sup> Թորոյան Տ., ..., էջ 40-43։

<sup>15</sup> Թորոյան Տ., Բազմակուսակցական համակարգի փլուզումը։ - [www.168.am/2013/03/07/192008.html](http://www.168.am/2013/03/07/192008.html)

<sup>16</sup> Պողոսյան Լ., Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գնահատման չափանիշներն ու դրանց օպտիմալացման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում։ Հայկական քաղաքագիտական հանդես, 2014, 1, 34-55։

<sup>17</sup> Նույն տեղում։

գործընթացը թևակոխել է մի նոր փուլ, որում էապես մեծացել է թե այդ գործընթացում գտնվող առանձին երկրների առանձնահատկությունների, թե այդ գործընթացի մեկնարկով միջազգային հարաբերություններում ձևավորված միանգամայն նոր իրավիճակի նշանակության կտրուկ մեծացմամբ:

### **Հետխորհրդային տրանսֆորմացիայի քաղաքական և աշխարհաքաղաքական գործոնները**

Հետխորհրդային տրանսֆորմացիայի հետագա ընթացքի կամ վերոհիշյալ երկրորդ խմբի երկրների ժողովրդավարացման տեսակետից առաջնային նշանակություն ունեն հետևյալ երկու հարցերի պատասխանները.

- հետկոմունիստական երկրները ո՞ր գործոնի ազդեցությամբ բաժանվեցին երեք տարբեր ընթացք և ուղղություն ունեցող խմբերի,
- ո՞ր գործոնները կարող են առավել ազդեցիկ լինել երկրորդ խմբի երկրների հետագա ընթացքի տեսակետից:

Ըստ Դ. Կամերոնի՝ ժողովրդավարացման գործընթացը հետխորհրդային տրանսֆորմացիայի այն երկրներում է հաջողություն ունեցել, որոնք ավելի շուտ են սկսել համագործակցությունը Եվրամիության հետ և այդ հաջողությունը պայմանավորված է այդ եվրոպական կառույցի ազդեցությամբ:<sup>18</sup> Իհարկե, եվրոպական ինտեգրման գործընթացում դժվար է գերազնահատել եվրոպական կառույցների դերը, սակայն այդ վարկածի տրամաբանությամբ Եվրամիությանն առաջինն անդամակցողների թվում պետք է լինեին Ռումինիան և Բուլղարիան, որոնք այդ կազմակերպության հետ համագործակցության պայմանագիր էին ստորագրել 1993 թվականին: Մինչդեռ, 2004թ. Եվրամիությանն անդամակցած երկրների շարքում ոչ թե այդ երկրներն էին՝ 1991-ին համաձայնագիր ստորագրած Չեխիայի, Սլովակիայի, Լեհաստանի և Հունգարիայի հետ, այլև, համապատասխանաբար, միայն 1995-ին և 1996-ին համաձայնագիր ստորագրած բալթյան երեք երկրներն ու Սլովենիան: Ավելին, վերոհիշյալ

<sup>18</sup> **Cameron D. R.**, Post-Communist Democracy: The Impact of the European Union, *Post-Soviet Affairs*, 2007, **23**, 3, 185-217.

երեք խմբերի բաժանման տեսակետից էլ Կամերունի վարկածը լիարժեք չէ: Սակայն, կարելի է առաջադրել մեկ այլ թեզ, որը լիարժեքորեն բացատրում է թե նշված հակասությունը, թե հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող երկրների բաժանումը վերոհիշյալ երեք խմբերի: Այդ թեզը հետևյալն է. հետկոմունիստական երկրների ժողովրդավարացման գործընթացում հաջողությունը մեծապես կախված է այդ երկրների նախախորհրդային ուղուց և դրա վերաբերյալ պահպանված հիշողությունից<sup>19</sup>: Պատահական չէ, որ 2004 թվականին Եվրամիությանն անդամակցած բոլոր երկրները սոցիալիստական ճամբարում հայտնվել էին երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այնտեղ ներգրավվելուց հետո էլ այդ երկրները չէին համակերպվում այդ իրողության հետ (մասնավորապես, ընդվզումները 1950-ականներին՝ Հունգարիայում, 60-ականներին՝ Չեխոսլովակիայում, 70-ականներին՝ Լեհաստանում, և այլն): ԽՍՀՄ փլուզման պահին այդ երկրներում դեռևս կար նախախորհրդային հիշողությունը և աժեքները պահպանած սերունդ: Մինչդեռ Բուլղարիայում 70-80-ականներին գործող կոմունիստական վարչակարգը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների մեջ ամենամոտն էր խորհրդային վարչակարգին, իսկ Ռումինիայում Չաուշեսկուի իշխանության օրոք հաստատվել էր կոշտ ամբողջատիրական վարչակարգ:

Արժեքային համակարգի և ավանդույթների, հետևաբար և ազգային առանձնահատկությունների որոշիչ նշանակությունը՝ հետխորհրդային տրանսֆորմացիայում գտնվող երկրների ընթացքի տեսակետից, նկատելի էր արդեն 90-ականների վերջին: Ֆ. Ռոդերը կարևորում էր ազգային փոխակերպումը, ինչը ենթադրում է ազգային պետությունների ձևավորում հասարակական գիտակցության տրանսֆորմացիայի հետ միաժամանակ<sup>20</sup>: Անգամ Ս. Հանթինգթոնը՝ 90-ականների սկզբին հետխորհրդային տրանսֆորմացիայի գծային զարգացման տեսակետի գլխավոր հեղինակներից մեկն, ավելի ուշ պնդում էր. <<արևմտյան արժեքների փոխադրումն այլ քաղաքակրթական միջավայրեր՝ դրանց վեստերնիզացիան, ոչ միայն անհնարին է, այլև անբարոյական իր հետևանքներով, քանզի

<sup>19</sup> Թորոսյան Տ., ..., էջ 94:

<sup>20</sup> Roeder Ph., People and States after 1989: The Political Costs of Incomplete National Revolutions. *Slavic Review*, 1999, **58**, 4, 854-882.

արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն պահանջում մշակութային վեստերնիզացիա և դրան չեն հանգեցնում: Ընդհանուր դեպքում եվրոպական (արևմտյան) ուղու ընտրությունը չի կարող լինել միակ և անգամ ճիշտ ճանապարհը»<sup>21</sup>: Քաղաքակրթական և արժեքային գործոնները որոշիչ ազդեցություն ունեցան հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ փուլի ընթացքում: Այդ գործընթացում գտնվող արևմտյան քաղաքակրթությանը պատկանող երկրներն ընտրեցին եվրոպական ինտեգրման ճանապարհն ու, ի վերջո, անդամակցեցին Եվրամիությանը, իսլամական քաղաքակրթությանը պատկանող երկրներն ընտրեցին ամբողջատիրական վարչակարգը, իսկ այն երկրները, որոնք պատկանում էին կամ մի քանի դար գտնվում էին ուղղափառ քաղաքակրթության միջավայրում, հայտնվեցին երկրորդ խմբում և դժվարանում էին քաղաքակրթական ընտրության հարցում: Առանձնահատուկ դիրք ունեն Ռուսաստանը՝ որպես ուղղափառ քաղաքակրթության առանցք: Ինչպես նշում է Լ. Նիկովսկայան, ռուս հասարակության համար կիրառելի չէ արևմտյան գաղափարների և քաղաքական պրակտիկայի մեխանիկական կրկնությունն<sup>22</sup> ու Ռուսաստանը շարունակում է իր առանձնահատուկ ուղու որոնումները: Դժվար չէ նկատել, որ 2000-ականների սկզբին հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների բաժանումը վերոհիշյալ երեք խմբերի և երկրորդ փուլի ընթացքը լավագույնս բացատրվում են հենց այդ երկրների քաղաքակրթական ու արժեքային ընդհանրություններով ու տարբերություններով, ինչպես նաև նախախորհրդային ժամանակաշրջանի հասարակական կյանքի կազմակերպման հիշողությամբ ու փորձով:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ՝ աշխարհաքաղաքական ազդեցությունների ուժեղացման փուլի սկիզբը խորհրդանշող իրադարձությունները երկուսն էին: Նախ, 2007-ին Մյունխենում տեղի ունեցած Անվտանգության քաղաքականության խորհրդաժողովում Ռուսաստանի նախագահի ելույթը<sup>23</sup>, որով Ռուսաստանն իր կտրուկ

<sup>21</sup> Хантингтон С., Запад уникален, но не универсален. *Мировая экономика и международные отношения*, 1997, 8, 84 - 93.

<sup>22</sup> Никовская Л., Проблемы и особенности демократической трансформации в современной России. <http://rapn.ru/?grup=573&doc=1661> /16.11.2013/.

<sup>23</sup> Putin V., 'Speech at the 43<sup>rd</sup> Munich Conference on Security Policy, February 10, 2007, available at [http://globalsecurity.org/.../2007/putin-munich\\_070210.htm](http://globalsecurity.org/.../2007/putin-munich_070210.htm)

անհամաձայնությունն արտահայտեց Միացյալ Նահանգների քաղաքականությանն՝ ուղղված միաբևեռ աշխարհի ձևավորմանը: Ապա, 2008-ի օգոստոսին տեղի ունեցած հնգօրյա ռուս-վրացական պատերազմը, որն ազդարարեց հետխորհրդային տարածքում ռուսամերիկյան մրցակցության թևակոխումը կոշտ բախումների փուլ<sup>24</sup>: Առնվազն վերջին երեք դարերի ընթացքում մաքինդերյան Եվրասիական կենտրոնում, մասնավորապես՝ Հարավային Կովկասում, իրադարձությունների զարգացման վերլուծությունը բացահայտում է երեք օրինաչափություն. յուրաքանչյուր դարասկզբին տեղի է ունենում ազդեցիկ երկրների միջև հաստատված հավասարակշռության փլուզում, հետագա 25-30 տարիների ընթացքում ծավալվում է նոր պայքար ազդեցության գոտիների վերաբաշխման համար, ապա հաստատվում է նոր հավասարակշռություն:<sup>25</sup> ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված այդ պայքարի նոր շրջանի վճռական գործողությունները մեկնարկեցին 2007-8թթ. տեղի ունեցած վերոհիշյալ իրադարձություններով: Հետագա զարգացումներում առանցքային նշանակություն ունեցավ Եվրամիության Արևելյան գործընկերության ծրագիրը: Թեև սկզբում իրադարձությունների ընթացքը հիշեցնում էր նախորդ՝ տապալված <<Նոր հարևանության ծրագիրը>>, սակայն 2013թ. նոյեմբերին տեղի ունեցած վիճակային գազաթափողովից հետո կտրուկ սրվեց իրավիճակը: Եվրամիությունը նախատեսում էր, որ այդ գազաթափողովը շրջադարձային կլինի գործընթացում ներգրավված երկրների և Եվրամիության հարաբերություններում, քանի որ այդ երկրներից չորսի հետ՝ Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, գազաթափողովի ընթացքում նախատեսվում էր ստորագրել ասոցացման և ազատ առևտրի համաձայնագրեր: Եթե կարելի էր կանխատեսել, որ Վրաստանն ու Մոլդովան համաձայնագրերը կստորագրեն, և սեպտեմբերի սկզբին արդեն պարզ էր, որ Հայաստանը դա չի անի, ապա միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց այդ քառյակում իր կարևորությամբ առանձնահատուկ դիրք ունեցող Ուկրաինայի նախագահ Յանուկովիչի պահվածքը: <<Եվրամիություն - Միացյալ Նահանգներ - Ռուսաստան>> եռանկյունու մեջ <<առևտրային>> ոլորապտույտում

<sup>24</sup> Թորոսյան Տ., Լեոնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն: Երևան, <<Տիգրան մեծ>>, 2012, էջ 53-78:

<sup>25</sup> Torosyan T., The Return of Turkey, *Russia in Global Affairs*, 2009, 3, 120-129.

արկածախնդրությամբ մոլորված Յանուկովիչը ոչ միայն չնկատեց, որ կորցնում է իրավիճակի իրատեսական պատկերացումն ու վերահսկման հնարավորությունն, իսկ հեղաշրջման արդյունքում՝ նաև իշխանությունն, այլև Ուկրաինան դարձրեց նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում ռուս-ամերիկյան մրցակցության գլխավոր թատերաբեմ: Ընդ որում, եթե ռուս-վրացական խնդիրներում Եվրամիությանը վերապահված էր ոչ հիմնական դերակատարություն, ապա Ուկրաինայի պարագայում այդ կազմակերպությունն առաջին պլանում հայտնվեց: Ընդ որում, Եվրամիության ակտիվ ներգրավվածությունն աշխարհաքաղաքական մրցակցությունում զգալիորեն նվազեցնում է այդ կազմակերպության քաղաքականությունում արժեքային համակարգի նշանակությունն, ինչը տևական ժամանակ եղել է Եվրամիության գլխավոր կերպատու գործոններից մեկը: Թեև հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում Եվրամիությունն ունեցել է զգալի փոխակերպումներ թե կազմի, թե միջազգային հարաբերություններում ունեցած ազդեցության տեսակետից, սակայն նկատելի է նաև, որ աշխարհաքաղաքական մրցակցությունում ստիպված է հաղթահարել բարդ մարտահրավեր՝ <<արժեքներ, թե՛ շահեր>> երկընտրանքի շրջանակներում<sup>26</sup>:

Վիլնյուսյան գագափաժողովն ու դրանից հետո ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ նոր աշխարհակարգի հաստատման գործընթացը թևակոխել է վճռական փուլ և դարձել է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամենաազդեցիկ գործոնը: <<Սպասման>> խմբում գտնվող երկրների (Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ադրբեջան) վերջնական քաղաքականության ընտրությամբ էլ՝ արևմտյան, թե՛ ուղղափառ քաղաքակրթություն կամ ինտեգրման միջավայր, կավարտվի հետխորհրդային տրանսֆորմացիան:

## Եզրակացություն

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկու տասնամյակների արդյունքներն ու ընթացքը ցույց են տալիս, որ այն գծային բնույթ չունի,

<sup>26</sup> **Krastev I.**, Europe's Democracy Paradox. *The American Interest*, 2012, 7, 4, 41-47; **Terzyan A.**, Normative and Political Dimensions of the European Union's Energy Policy: The Case of the South Caucasus, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 1, 123-135:

այլ բարդ, բազմավեկտոր գործընթաց է, որն ունեցել է զարգացման երեք փուլ, երեք հարացույց և այդ գործընթացում ներգրավված երկրներն՝ իրենց հետագծի և հետագա հնարավոր ընթացքի հիման վրա, կարող են բաժանվել երեք խմբի:

1. Այդ գործընթացի երեք փուլերն ունեցել են տարբեր տևողություններ, սակայն հստակորեն տարանջատվել են յուրաքանչյուրի ընթացքի ու արդյունքների տեսակետից առանցքային նշանակություն ունեցող հատկանիշներով: Ամենատևական առաջին փուլում նախկին սոցիալիստական ճամբարի մաս կազմած Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված անկախ պետություններում ձևավորվեցին միանգամայն նոր վարչակարգեր: Այդ փուլը կարելի է համարել պետականության ձևավորման փուլ: Երկրորդ փուլը կարելի է կոչել արժեքային համակարգի հիման վրա ուղիների տարամիտման փուլ, երրորդ փուլը՝ աշխարհաքաղաքական գործոնի գերիշխանության փուլ:

2. Եթե առաջին՝ պետականության ձևավորման փուլում այդ գործընթացում ներգրավված երկրների ընթացքներն էականորեն չէին տարբերվում, ապա երկրորդ փուլում այդ երկրները բաժանվեցին երեք խմբի՝ ըստ իրենց դավանած արժեքային համակարգի: Առաջինը կարելի է կոչել կայացած ժողովրդավարության խումբ, երկրորդը՝ <<սպասման>> խումբ, իսկ երրորդը՝ կոշտ ավտորիտարիզմի կամ ամբողջատիրության խումբ:

3. Եթե առաջին փուլում՝ որոշ վերապահումներով, կարելի էր խոսել հետխորհրդային տրանսֆորմացիայի համար ընդհանուր հարացույցի գոյության և նման երևույթների ուսումնասիրման համար մինչ այդ կիրառված տեսությունների ու գործիքների կիրառման հնարավորության մասին, ապա երկրորդ փուլում արդեն պետք էր դիտարկել երեք միանգամայն տարբեր հարացույցներ՝ ըստ վերոհիշյալ խմբերի: Կարելի է համարել, որ առաջին և երկրորդ խմբերի երկրների համար հետխորհրդային տրանսֆորմացիան երկրորդ փուլով ավարտվեց, իսկ երրորդ փուլը կարող է դիտարկվել միայն <<սպասման >> խմբի երկրների համար: Դրանց հետագա ընթացքի համար որոշիչ նշանակություն կունենա աստիճանաբար գերակշռող ազդեցություն ստացած աշխարհաքաղաքական գործոնը:



## **Three Stages, Three Groups and Three Paradigms of Post-Soviet Transformation**

TIGRAN TOROSYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

HAYK SUKIASYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

Two decades after the start of post-Soviet transformation, discussions on the theoretical grounds of that process are still ongoing. While a decade ago it was possible to unequivocally assert that it is not the continuation of the third wave of democratisation and that the theories and models of regime transitions, recorded before the collapse of the USSR, can only to a first approximation be applied to post-Soviet transformation study, later doubt was cast upon the existence of a general paradigm for the process. Nevertheless, several patterns are evident in the process, and the article views the modelling possibility of that exceptionally complex and multi-vector process.

## **Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գնահատման չափանիշներն ու դրանց օպտիմալացման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում**

ԼՈՒՍԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և  
եվրոպագիտության ամբիոն, ԵՊՀ*

Ստացված է 20.07.2013

Ընդունված է 17.11.2013

Բազմակուսակցական համակարգի արդյունավետությունը զգալիորեն կախված է համակարգի ինստիտուցիոնալացման մակարդակից, որն ունի երկու բաղադրիչ՝ կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացում (ԿՀ) ու կուսակցությունների ինստիտուցիոնալացում (ԿԻ): Դրանց ուսումնասիրության համար կիրառվում են ինստիտուցիոնալացման մակարդակի գնահատման տարբեր մոդելներ, չափանիշներ ու ցուցիչներ: Այդուհանդերձ, քանի որ անցած դարի 90-ականների վերջում պարզ դարձավ, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ժողովրդավարության և, մասնավորապես, բազմակուսակցական համակարգի կայացումն ունի էական առանձնահատկություններ ու բարդություններ, այդ չափանիշների ու ցուցիչների կիրառումը հետխորհրդային երկրների դեպքում արդյունավետ չէ: Պատահական չէ, որ 2000-ականները սկսած նկատելի է հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների բազմակուսակցական համակարգերի ուսումնասիրությունների կտրուկ աճ: Այդ բարդությունների բացահայտումն ու բազմակուսակցական համակարգերի ուսումնասիրման մոդելների ու չափանիշների լրամշակումը հնարավորություն կտա զգալիորեն մեծացնելու ուսումնասիրությունների արդյունավետությունը:

### **Բանալի բառեր**

Հետխորհրդային տրանսֆորմացիա, բազմակուսակցական համակարգ, գնահատում, կուսակցուն, ինստիտուցիոնալացում

Ժողովրդավարության զարգացմանը և, մասնավորապես, բազմակուսակցական համակարգերի կայացմանը նվիրված հետազոտություններում հաճախ ընդունված է պետությունները խմբավորել տարածաշրջանային հիմքով, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվել ժողովրդավարության կայացման

գործընթացը համեմատել ըստ տարածաշրջանային ընդհանրացումների<sup>1</sup>: Սակայն Ալեն Հայկենն, ուսումնասիրելով Ֆիլիպինների և Թայլանդի կուսակցական համակարգերը, համեմատելով դրանք Արևելյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի նոր, ինչպես նաև արևմտյան կայացած ժողովրդավարությունների հետ, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ, չնայած տարբերություններին, կուսակցություններն, ըստ էության կատարում են նույն գործառույթները, իսկ կուսակցական համակարգերն ունեն նույն դերակատարությունը, այն է՝ հավասարակշռում են տեղական և պետական շահերը, ինչպես նաև երկարաժամկետ առաջնահերթություններն ու կարճաժամկետ քաղաքական պահանջները<sup>2</sup>: Ընտրական և կուսակցական համակարգերը բազմապիսի և համալիր գործոնների ազդեցության արդյունք են, որոնց մի մասն առանձնահատուկ է որոշ պետությունների համար, մյուսներն, ընդհակառակը, ընդհանրական բնույթ ունեն<sup>3</sup>: Այդ գործոնները բազմազան են՝ պետությունների ավանդույթներն ու պատմությունը, մշակույթն ու հասարակության սոցիալական կառուցվածքը, կրոնական հավատալիքները, ազգամիջյան հարաբերությունները, տնտեսական կառուցվածքը և այլն: Այդ պատճառով, ցանկացած պետության կուսակցական համակարգն ուսումնասիրելիս հարկ է դիտարկել բազմաթիվ գործոններ դրա ստեղծման, կայացման զարգացման շրջաններում: Ըստ Դահլի, ոչ մի քաղաքական ինստիտուտ առավել մեծ չափով չի ձևավորում քաղաքական համակարգը, որքան դա անում են երկրի կուսակցություններն ու ընտրական համակարգը<sup>4</sup>: Նա կուսակցական համակարգերը դասակարգելիս հաշվի է առնում կուսակցությունների ներկայացվածությունը ընտրություններում և խորհրդարանում՝ համեմատելով դրանց մրցակցային կամ համագործակցող բնույթը<sup>5</sup>: Լատինական Ամերիկայի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ)

<sup>1</sup> **Spirova M.**, Political Parties in Post-Communist Societies. Formation, Persistence, and Change Houndmills: Palgrave MacMillan, 2007; **Hicken A.**, Building Party Systems in Developing Democracies, Cambridge University Press, 2009.

<sup>2</sup> **Hicken A.**, Building Party Systems in Developing Democracies, Cambridge University Press, 2009, Chapter 1

<sup>3</sup> **Дюверже М.**, Политические партии. Академический Проект, М. 2000.

<sup>4</sup> **Dahl R. A.**, On Democracy, Yale University Press, 1998, p. 130.

<sup>5</sup> **Dahl R. A.**, Patterns of Opposition, *Political Oppositions in Western Democracies*, edited by Robert Dahl, Yale University Press 1973, p. 338.

երկրներում կուսակցական համակարգերի կայացման խնդիրները քննարկվում են առավելապես կուսակցական համակարգերի և կուսակցությունների ինստիտուցիոնալացման համատեքստում՝ գնահատելով ժողովրդավարացման մակարդակը կամ պայմանավորելով ժողովրդավարության որակը կուսակցական համակարգի և կուսակցությունների ինստիտուցիոնալացման աստիճանով կամ մակարդակով<sup>6</sup>:

Ինստիտուցիոնալացման խնդիրները քննարկող աշխատանքները հատկապես անդրադառնում են կուսակցական համակարգերի, կուսակցությունների ինստիտուցիոնալացման և ժողովրդավարության որակի հարաբերության հարցերին<sup>7</sup>: Բազմակուսակցական համակարգի կայացումը, նախ և առաջ, քաղաքական գործընթաց է, սակայն այն չի կարող տեղի ունենալ առանց մի շարք այլ գործոնների առկայության: Դեռ անցյալ դարի 60-ականներին Հանթինգթոնը մատնանշում էր ժողովրդավարացող հասարակություններում քաղաքական մասնակցության աստիճանին, ինստիտուցիոնալացման մակարդակի բարձրացմանն ուշադրություն կենտրոնացնելու անհրաժեշտությունը<sup>8</sup>: Նա համարում էր, որ քաղաքական ոլորտը «կախված է քաղաքական կազմակերպությունների և ընթացակարգերի մակարդակից, ինչն իր հերթին արտացոլում է այս կազմակերպությունների կամ ընթացակարգերի ինստիտուցիոնալացման մակարդակը» քաղաքական

<sup>6</sup> **Mainwaring S., Torcal M.**, Party System Institutionalization and Party System Theory after the Third Wave of Democratization, Working Paper #319, The Helen Kellogg Institute for International Studies, April 2005, available at: <http://kellogg.nd.edu/publications/workingpapers/WPS/319.pdf>, 25.08.2013,

**Croissant A.**, Völkel Ph., Party system types and party system institutionalization. Comparing new democracies in East and Southeast Asia. *Party Politics* 2012, 18 (2), 235–265, **Randall V., Svåsand L.**, Party Institutionalization in New Democracies, *Party Politics* 2002, 8 (1), 5–29

<sup>7</sup> **Lijphart A.**, Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. Second Edition, Yale University Press/New Haven & London 2012; **Berman S.**, Lessons from Europe, *Journal of Democracy*, 2007, 18, 1, ; **Լիքս Խ. Ջ., Ստեփան Ա.**, Ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և Հետկոմունիստական Եվրոպա, Երևան, 2011

<sup>8</sup> **Huntington S.P.**, Political Development and Political Decay. *World Politics*, 1965, 17, 3, 386-430, available at:

<http://chenry.webhost.utexas.edu/core/Course%20Materials/SPH1965/0.pdf>,

08.11.2013

ու սոցիալական ինստիտուտները սահմանում էր որպես «վարքի կայուն, պարբերական և արժեքավոր մոդելներ», որոնք սովորաբար ունենում են ինստիտուցիոնալացման մակարդակներ:

Կուսակցությունների և կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման երևույթը նաև կարելի է բացատրել որպես հասարակական գիտակցության մեջ կուսակցությունների «նյութականացման» ձև, ինչի հետևանքով նրանք հաճախ կարող են գոյություն ունենալ իրենց առաջնորդներից անկախ՝ պարբերաբար ընդգրկվելով վարքագծի հայտնի մոդելներում<sup>9</sup>: Մինչդեռ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների կուսակցությունները «սկսեցին կազմավորվել ոչ այնքան գաղափարների ու սկզբունքների, որքան քաղաքական ասպարեզում այս կամ այն կերպ աչքի ընկած գործիչների շուրջ»<sup>10</sup>: Սակայն ինչպիսի բնութագրումներ էլ ունենա կուսակցական համակարգի կամ առանձին կուսակցությունների ինստիտուցիոնալացման կամ կայացման գործընթացը, այն քաղաքական զարգացումների, գործընթացի բաղկացուցիչ մասն է: Բնական է, որ կուսակցական ինստիտուցիոնալացումը, առավել ևս կայացումը երկարատև և բարդ գործընթացներ են, քանի որ դրանք տեղի են ունենում միաժամանակ և՛ քաղաքական, և՛ սոցիալական, ինչպես նաև իրավական հարթություններում՝ ներառելով բազմաթիվ բաղադրիչներ: Պարզ է, որ հարթություններից ցանկացածի ամրագրումով կամ հաստատումով միայն հնարավոր չի լինի գնահատել երևույթն ամբողջությամբ՝ իր բազմակողմանիության մեջ: Օրինակ, կոնկրետ կուսակցության իրավաբանական գրանցումը կամ բազմաթիվ կուսակցությունների առկայությունը անհրաժեշտ, բայց բազմակուսակցական համակարգի կայացման կամ նույնիսկ ինստիտուցիոնալացման համար բավարար պայման չեն: Ինստիտուցիոնալացման գործընթացը կարելի է դիտարկել որպես կուսակցությունների վերածումն այնպիսի իրավաքաղաքական ինստիտուտի, որի դեպքում դրանց ստեղծմանը, գործունեությանը,

<sup>9</sup> Джанда К., Сравнение политических партий: исследования и теория, глава из книги: Ada W. Finifter (ed.), *Political Science: The State of the Discipline II*, Washington D.C., American Political Science Association, 1993, 163-191, available at: <http://www.pavroz.ru/files/jandaparties.pdf>, 01.09.2013

<sup>10</sup> Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006, էջ 153:

լուծարմանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են իրավական միջոցներով, հաստատվում են կուսակցական համակարգերի ու կուսակցությունների կազմակերպումն ու գործունեությունը կարգավորող նորմեր, արժեքներ և վարքագծի կանոններ, երբ կուսակցությունների հարաբերությունները միմյանց հետ, ինչպես նաև պետության այլ հաստատությունների հետ կայուն, հաստատուն, կազմակերպված, կարգավորված և պարբերական բնույթ ունեն, կանխատեսելի են: Ընդ որում, եթե կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման շրջանակներն ընդհանուր առմամբ կարելի է բխեցնել սահմանադրական նորմերից, ընտրական համակարգերի բնույթից, ապա ավելի մասնավոր խնդիրներ, հատկապես ընդդիմության հետ կապված առնչությունները, կարելի է հետազոտել միմիայն նշված հարաբերությունների ուսումնասիրությունները լրացնելով սոցիալական, տնտեսական, մշակութային կամ հոգեբանական գործոնների դիտարկմամբ<sup>11</sup>:

Կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումը քննարկելիս որոշ հեղինակներ<sup>12</sup> առաջարկում են խնդիրը դիտարկել երկու տեսանկյունից՝ կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացում և կուսակցությունների ինստիտուցիոնալացում, քանի որ այս գործընթացները բխում են մեկը՝ մյուսից, սակայն մանրակրկիտ վերլուծության կարիք ունեն երկուսն էլ. մեկն անպայմանորեն չի պայմանավորում մյուսի որակները, ընդ որում, կուսակցությունների ինստիտուցիոնալացման չափանիշներն ավելի պակաս չափով են դիտարկվել<sup>13</sup>: Ինչպես նշում է Բերտոան, եթե որոշ դեպքերում կուսակցությունների կազմակերպչական կայունությունն ու անընդհատությունը կնպաստեն կուսակցական համակարգի

<sup>11</sup> **Dahl R. A.**, Some Explanations. *Political Oppositions in Western Democracies*, edited by Robert Dahl, Yale University Press, 1973, p. 349

<sup>12</sup> **Bértoa F. C.**, Party System Institutionalization and the Quality of Democracy in Eastern Europe, Center for the Study of Imperfections in Democracy, A Research Center at Central European University, DISC working Paper Series, DISC WP/2009/7, [http://pdc.ceu.hu/archive/00005498/01/fernando-paper-web\\_2.pdf](http://pdc.ceu.hu/archive/00005498/01/fernando-paper-web_2.pdf), 30.09.2013

<sup>13</sup> **Randall V., Svasand L.**, Party Institutionalization in New Democracies, *Party Politics*, 2002, 8, 1, 21-32.

ինստիտուցիոնալացմանը, այլ դեպքերում կարող է այդպես չլինել, ինչը հատկապես ճշմարիտ է նոր ժողովրդավարությունների պարագայում<sup>14</sup>:

### **Կուսակցությունների առանձնահատկությունները նոր ժողովրդավարություններում**

Արևելյան Եվրոպայի նոր ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի ուսումնասիրության արդյունքում Սպիրովան շեշտադրում է առանձին կուսակցությունների գործունեության ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ կուսակցական համակարգի արդյունավետ հետազոտության և քաղաքական համակարգի կատարելագործման նպատակով<sup>15</sup>: Նոր ժողովրդավարություններում կուսակցությունների գործունեության կարևոր առանձնահատկություն է համարվում այն հանգամանքը, որ դրանք սահմանափակում են ուժային կառույցների իշխանությունը<sup>16</sup>:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում կառավարման համակարգի յուրահատուկ դրսևորումների ու դրա կատարելագործման քաղաքականության տեսանկյունից ևս կուսակցական համակարգերի առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի էական նշանակություն<sup>17</sup>: Ռուսաստանում<sup>18</sup>, Ուկրաինայում<sup>19</sup>, Ղրղզստանում<sup>20</sup>, Բալթյան երկրներում<sup>21</sup>, Վրաստանում<sup>22</sup>,

<sup>14</sup> **Bértoa F. C.**, ...

<sup>15</sup> **Spirova M.**, Political Parties in Post-Communist Societies. Formation, Persistence, and Change Houndmills: Palgrave MacMillan, 2007

<sup>16</sup> **Hicken A.**, ...

<sup>17</sup> **Ստեփան Ա.**, «Վտանգված ժողովրդավարություններ», Երևան, 2011թ, էջ 191

<sup>18</sup> **Рогов К.**, Политические циклы постсоветского транзита, Pro et contra, июль-октябрь 2012, Холодковский К.Г. К вопросу о политической системе современной России, *Полис*, 2009, 2,

<sup>19</sup> **Межуев Б.В.** “Оранжевая революция”: восстановление контекста, *Полис*, 2006, 5

<sup>20</sup> **Базарбаев К., Жумагулов Б.**, Политические партии Кыргызстана: теория и практика., Бишкек, 2012, <http://library.fes.de/pdf-files/bueros/bischkek/09685.pdf>, 03.12.13

<sup>21</sup> **Meleshevich A.A.**, Party Systems in Post-Soviet Countries: A Comparative Study of Political Institutionalization in the Baltic States, Russia and Ukraine, Palgrave Macmillan; 2007

Մոլդովայում<sup>23</sup> և Հայաստանում<sup>24</sup> այդ խնդիրների քննարկմանը նվիրված են մի շարք աշխատանքներ, սակայն հասկանալի պատճառներով ուշադրության կենտրոնում են հատկապես Ռուսաստանի, Բալթյան երկրների և Ուկրաինայի քաղաքական խնդիրները, որոնք դիտարկվում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կուսակցական համակարգերի և կուսակցությունների ինստիտուցիոնալացման խնդիրների հետ համեմատական վերլուծության հարթությունում: Սակայն, եթե դա արդարացված է Բալթյան երկրների պարագայում, ապա մյուս երկրների դեպքում արդյունավետությունը մեծ չէ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նրանց տրանսֆորմացիայի հետագծի և ձևավորված իրողությունների արմատական տարբերությունների պատճառով: Խնդիրն, իհարկե բարդ է ոչ միայն երևույթի առանձնահատկությունների, ուսումնասիրության արդյունավետ մոդելների բացակայության, այլև տվյալների դժվար հասանելիության պատճառով: Սակայն, ժողովրդավարության կայացման գործընթացի հաջողության համար վճռական նշանակություն ունի բազմակուսակցական համակարգի կայացումը<sup>25</sup>: Հետևաբար, ժողովրդավարացման ճանապարհն ընտրած երկրների համար տրանսֆորմացիայի գործընթացների հիմնական դերակատար կարելի է համարել կուսակցությունները, կուսակցական համակարգերը, ինչի հետևանքով կուսակցությունների և կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումն ու դրանց ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունեն այդ երկրների քաղաքական համակարգերի գործունեության գնահատման և կատարելագործման

<sup>22</sup> **Tsurtsumia A., Tsutskiridze L.**, Political Party Assistance Programme, Netherlands Institute for Multiparty Democracy, Georgia Representation, Tbilisi, 2012, available at: [http://nimd.ge/old/Document/Nimd\\_Georgia\\_PPA\\_English\\_final.pdf](http://nimd.ge/old/Document/Nimd_Georgia_PPA_English_final.pdf), 03.12.2013

<sup>23</sup> Post Soviet and Asian Political Parties, Vol.3, volume editors: Baogang He, Anatoly Kulik, and Kay Lawson in: Political Parties and Democracy. 5 books set, General Editor Kay Lawson, Praeger Publishers/ABC-CLIO, 2010

<sup>24</sup> **Hess S.**, Protests, Parties, and Presidential Succession: Competing Theories of Color Revolutions in Armenia and Kyrgyzstan, *Problems of Post-Communism*, 2010, **57**, 1, 28-39,

**Թորոսյան Տ.** Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում: *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2005, 3, 12-31; **Բաղդասարյան Ա.** Ընդդիմության էությունը և դերն անցումային քաղաքական վարչակարգում, *Հայաստան*, 2005, 1, 33-47:

<sup>25</sup> **Lipset S. M.**, The Indispensability of Political Parties, *Journal of Democracy*, 2000, **11**, 1, 48-55



տեսակետից: Տրանսֆորմացիայի գործընթացի նախնական փուլում արվում էին ենթադրություններ (հաշվի առնելով միայն ԿԵ և ԱԵ մի քանի երկրների փորձը), որ ժողովրդավարության կայացման համար լիարժեք ինստիտուցիոնալացված կուսակցություններն անհրաժեշտություն չեն<sup>26</sup>: Տոկան դա հիմնավորում էր Չեխիայի Հանրապետության, Լեհաստանի, Հունգարիայի և Սլովակիայի դեպքերի հետազոտությունների արդյունքներն ամփոփելով, չնայած նա նաև նշում էր, որ ընտրությունները միայն ձևական հավասարություն են ապահովում քաղաքացիների համար, իսկ կուսակցությունները ժողովրդավարական ներկայացուցչականության կենտրոնական տարրն են: Ուսումնասիրելով այդ երկրներում ընտրական անկայունությունը, կուսակցությունների տարիքն ու կազմակերպման ոճը, կուսակցական մասնատվածությունը, ընտրական ինստիտուտների կայունությունը, սոցիալական խմբերի և կուսակցությունների միջև կապերը, կուսակցական մրցակցության ծրագրային կառուցվածքը, Տոկան եզրակացնում էր, որ ԿԱԵ երկրներում ժողովրդավարությունը կայացել է մինչև կուսակցությունների ինստիտուցիոնալացումը, թեև դրա որոշ մակարդակ, այնուամենայնիվ, ցանկալի է ժողովրդավարության որակի բարելավման համար<sup>27</sup>: Հետխորհրդային տրանսֆորմացիայի պետությունների համար բնական է այնպիսի կուսակցությունների գոյությունը, որոնք ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակներից, կամ կրկնում են խորհրդային կամ անցումային ժամանակաշրջանի կուսակցական-կազմակերպական համակարգը: Դրանք կարող են լինել մեծ և ազդեցիկ, ինչը բացատրվում է այն կարևորությամբ, որ նրանք ունեցել են որպես քաղաքական համակարգի դերակատարներ: Այդպիսի կուսակցությունները դասակարգելու համար որոշ չափանիշներ են առաջադրվել և դրանք քննարկելով, Գ. Գոլոսովը հետաքննարկում է կուսակցությունները սահմանում է որպես կուսակցություններ, որոնք հին վարչակարգի շարունակությունն են, ժառանգել են հին վարչակազմի առնվազն որոշ կազմակերպական բնութագրեր, որոշ գաղափարախոսական

<sup>26</sup> **Toka G.**, Political Parties and Democratic Consolidation in East Central Europe, Centre for Study of Public Policy, University of Strathclyde, Glasgow 1997, [http://www.personal.ceu.hu/staff/Gabor\\_Toka/Papers/Toka97Consolidation.pdf](http://www.personal.ceu.hu/staff/Gabor_Toka/Papers/Toka97Consolidation.pdf), 18.09.2013

<sup>27</sup> Նույն տեղում:

նմանություններ ունեն հին վարչակարգի հետ<sup>28</sup>։ Դա ևս մեկ անգամ ընդգծում է, որ հասարակական համակարգի տրանսֆորմացիայի ընթացքում կուսակցությունների ինստիտուցիոնալացման և կայացման խնդիրը կապված է ոչ միայն իրավական և կազմակերպական հարցերի լուծման, այլև հասարակական գիտակցության տրանսֆորմացիայի հետ, ինչը հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում ամենաբարդ խնդիրն է<sup>29</sup>։ Հետևաբար, կոնկրետ կուսակցության և ընդհանրապես համակարգի կայացումը տևական գործընթաց է և կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից։ Այն սկսվում է կուսակցությունների և համակարգի իրավական ամրագրումից, տեսական հիմնավորումներից ու կառուցվածքային կազմակերպական խնդիրների լուծումից, որոնք առավել արագ տեղի ունեցող գործընթացներն են։ Ապա պետք է իրականացվի սոցիալական տարբեր խնդիրներ ունեցող շերտերի կամ անհատների շահերի համարժեք ներկայացում քաղաքական գործընթացներում, ըստ այդմ՝ ձևավորվի հասարակական աջակցությունը։ Արդյունքը պայմանավորված կարող է լինել թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոններով, որոնք իրենց հերթին ունեն երկու բաղադրիչներ՝

- կառուցվածքային (կուսակցական այլընտրանքների անընդհատություն, ինքնավարություն, համակարգվածություն),
- վարքագծային (կուսակցություններն ընդունում են միմյանց որպես լեգիտիմ մրցակիցների)։

Ըստ Ռանդալի ու Սվասանդի<sup>30</sup>, դա կարելի է ներկայացնել Աղյուսակ 1-ի տեսքով՝

Աղյուսակ 1

| Գործոններ      | Ներքին               | Արտաքին               |
|----------------|----------------------|-----------------------|
| Կառուցվածքային | համակարգվածություն   | Որոշումների ինքնավար. |
| Վարքագծային    | արժեքների ներմուծում | «նյութականացում»      |

Բեյսդան և Ստրոն առաջարկում են հետևյալ տարբերակը<sup>31</sup>.

<sup>28</sup> Golosov G. V., Party Organization, Ideological Change, and Electoral Success: A comparative Study of Postauthoritarian Parties, Working Paper #258, The Helen Kellogg Institute for International Studies, September 1998, available at: <http://kellogg.nd.edu/publications/workingpapers/WPS/258.pdf>, 10.09.2013

<sup>29</sup> Թորոյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006


<sup>30</sup> Randall V., Svasand L., ...

Աղյուսակ 2

| Գործոններ | Կայունություն                  | Արժեքների ներմուծում |
|-----------|--------------------------------|----------------------|
| Ներքին    | արմատներ<br>հասարակության մեջ  | ինքնավարություն      |
| Արտաքին   | կազմակերպվածության<br>մակարդակ | փոխգործակցություն    |

Ընդհանուր դեպքում, ԿՀԻ և ԿԻ ինստիտուցիոնալացման կապը տարբեր գործոնների ոլորտների հետ կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի միջոցով.

Գծապատկեր 2



Ինստիտուցիոնալացման մակարդակն, ըստ Հանթինգթոնի, կարելի է չափել հետևյալ չորս առանցքների շրջանակներում՝ հարմարունակություն-կոշտություն, բարդություն-պարզություն, ինքնավարություն-ենթարկվածություն և կապակցվածություն-

<sup>31</sup> Basedau M., Stroh A., Measuring Party Institutionalization in Developing Countries: A New Research Instrument Applied to 28 African Political Parties, Edited by the GIGA German Institute of Global and Area Studies / Leibniz-Institut für Globale und Regionale Studien, N. 69, February 2008, GIGA Research Programme: Legitimacy and Efficiency of Political Systems GIGA WP 69/2008, available at: [http://www.giga-hamburg.de/en/system/files/publications/wp69\\_basedau-stroh.pdf](http://www.giga-hamburg.de/en/system/files/publications/wp69_basedau-stroh.pdf), 12.09.2013

մասնատվածություն<sup>32</sup>: Նշվածներն այն հիմնական առանցքներն են, ինչի շուրջ քաղաքագիտական գրականության մեջ տեղի են ունենում հիմնական քննարկումները քաղաքական տարբեր ինստիտուտների, հատկապես կուսակցությունների և կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման առնչությամբ: Ըստ էության, կայացածության, ինստիտուցիոնալացման վերաբերյալ հետագա բոլոր հետազոտությունների հիմքում էլ ընկած են այս չորս չափանիշները, որոնք կիրառվում են կոնկրետ իրավիճակում և լրացվում են կոնկրետ տարածաշրջանի կամ պետության բնութագրերի առանձնահատկությունները գնահատող ցուցանիշներով: Թեև այս մոտեցումը ձևավորվել է անցած դարի 60-70-ականներին, սակայն քանի որ մշակվում էր փոփոխվող հասարակության համար, այն կիրառվում է նաև հետխորհրդային երկրների դեպքերի համար:

Ժողովրդավարացման 3-րդ ավիքի և ժողովրդավարության ուղի ընտրած տարբեր պետություններում ԿԻ և ԿՀԻ առանձնահատկությունների ուսումնասիրությունների շարքում առանձնանում են Ս. Մեյնորինգի և Մ.Թորկալի հետազոտությունները: Մեյնորինգն առաջարկում է ուշադրություն դարձնել երևույթի բազմազանությանը և վերլուծել այն հետևյալ 4 հարթություններում՝ 1) ընտրական մրցակցության նմուշ-մոդելների կայունություն, 2) հասարակության մեջ կուսակցության արմատների ամրություն, 3) կուսակցությունների լեգիտիմություն և 4) կուսակցության կառուցվածքային կազմակերպում:<sup>33</sup> Միաժամանակ, թեև կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը բազմաթիվ ձևեր կարող է ստանալ, սակայն բացահայտվել է հետևյալ օրինաչափությունը. «զարգացած արդյունաբերական ժողովրդավարությունների համակարգերն ավելի ինստիտուցիոնալացված են, քան

<sup>32</sup> **Huntington S.P.**, Political order in changing societies. – New Haven; L.: Yale university press, 1968. Seventh printing, 1973, 12-24, available at: [http://projects.iq.harvard.edu/gov2126/files/huntington\\_political\\_order\\_changing\\_soc.pdf](http://projects.iq.harvard.edu/gov2126/files/huntington_political_order_changing_soc.pdf) 02.10.2013

<sup>33</sup> **Mainwaring S.**, Rethinking Party Systems Theory in the Third Wave of Democratization: The Importance of Party System Institutionalization, Working Paper #260, The Helen Kellogg Institute for International Studies, October 1998, 10-12, <http://kellogg.nd.edu/publications/workingpapers/WPS/260.pdf>, 27.08.2013

ժողովրդավարացման 3-րդ փուլի շատ երկրների»<sup>34</sup>: Այդ տարբերությունը շատ մեծ է, ինչն էական հետևանքներ է ունենում ժողովրդավարության կայացման վրա: Մասնավորապես, Հատինական Ամերիկայի կամ Արևելյան Եվրոպայի երկրների ժամանակակից ժողովրդավարական կուսակցական համակարգերն ուսումնասիրելիս ինստիտուցիոնալացման մակարդակի հետազոտությունները նույնքան կարևորվում են, որքան կուսակցությունների քանակի ու դրանց բևեռացման<sup>35</sup>: Քննարկվում են զարգացած արդյունաբերական ժողովրդավարությունների և պակաս զարգացած ժողովրդավարությունների ու թերի ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման երեք յուրահատուկ տարբերություններ: Նախ, պակաս զարգացած ժողովրդավարություններում նկատվում է ավելի բարձր ընտրական հոսունություն (փոփոխականություն) և ավելի պակաս ընտրական կայունություն, քան զարգացած ժողովրդավարություններում: Երկրորդ, հասարակության մեջ կայուն արմատներ ունեցող կուսակցական համակարգերի առկայությունը կանխորոշում է կուսակցությունների և ընտրողների միջև արմատական ծրագրային և գաղափարախոսական կապվածություն: Այս դեպքում, քվեարկողներն ընտրում են կուսակցություն կամ թեկնածու իրենց ծրագրային կամ գաղափարախոսական նախապատվության հիման վրա: Նման կապվածությունը թերի ժողովրդավարություններում պակաս չափով է առկա: Այս երկրներում կուսակցությունների և ընտրողների կապերն ավելի պակաս են հիմնված կուսակցական ծրագրերին կամ գաղափարախոսություններին հավանություն տալու վրա, ինչը ենթադրում է ավելի թույլ կուսակցական արմատներ հասարակության մեջ: Երրորդ, ընտրողների և թեկնածուների կապը թերի ժողովրդավարություններում ավելի անձնավորված է, քան զարգացած ժողովրդավարություններում<sup>36</sup>: Ինստիտուցիոնալացման ցածր մակարդակը ներկայացուցչականության և ընտրական հաշվետվողականության հետ առնչվող խնդիրներ է առաջացնում: Թույլ ինստիտուցիոնալացում ունեցող համակարգերում

<sup>34</sup> **Mainwaring S., Torcal M.**, Party System Institutionalization and Party System Theory after the Third Wave of Democratization, Working Paper #319, The Helen Kellogg Institute for International Studies, April 2005, p. 24-25, available at: <http://kellogg.nd.edu/publications/workingpapers/WPS/319.pdf>, 25.08.2013

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>36</sup> Նույն տեղում:

ավելի հավանական կարող է լինել որևէ կուսակցություն չներկայացնող թեկնածուի հաղթանակը<sup>37</sup>: Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման չափանիշներ կամ բաղադրիչներ կարելի է համարել նաև քաղաքական ազատությունը, քաղաքական գործընթացների կուսակցական վերահսկողությունը, կուսակցությունների մրցակցությունն՝ ըստ իրենց վարած քաղաքականության<sup>38</sup>:

Պարզելու համար, թե որքանով է ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգը, բնականաբար անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն կուսակցության ներքին զարգացումների հարցը, այլև պետության մյուս հաստատությունների հետ հարաբերությունների բնույթն ու տեսակը: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների պարագայում առավել կարևորվող է կուսակցությունների և իշխանության փոխհարաբերության հարցն այն իմաստով, թե որքանով են կուսակցություններն անկախ իշխանությունից:

Արևմտաեվրոպական կուսակցական համակարգերի ուսումնասիրության մոդելների կիրառելիության բարդությունները Կենտրոնական և Արևելաեվրոպական երկրների կուսակցական համակարգերի նկատմամբ որոշ հետազոտողների հանգեցնում է այն գաղափարին, որ կարելի է հատուկ մոդել ձևավորել նշված երկրների կուսակցական համակարգերն ուսումնասիրելու համար՝ այն լրացնելով տվյալ տարածաշրջանին բնորոշ յուրահատուկ չափանիշներով: Օրինակ, Թ. Սաարթսը առաջարկում է կիրառել հետևյալ հիմնական չափանիշները՝

1. կուսակցական համակարգի կայունություն,
2. կուսակցական համակարգի մասնատվածություն,
3. կուսակցությունների ներթափանցում հասարակության մեջ,
4. հիմնական կուսակցությունների գաղափարախոսություն ու ծագում,
5. կուսակցական մրցակցությունը ձևավորող գերիշխող շերտավորումների համախումբ,

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 24-26:

<sup>38</sup> **Grzymala-Busse A.**, The Programmatic Turnaround of Communist Successor Parties in East Central Europe, 1989-1998, <http://www-personal.umich.edu/~abusse/CPCStudies.pdf>, 10.10.2013

6. կուսակցությունների կազմակերպական հզորություններ<sup>39</sup>:

Այդ չափանիշներն առանձնացվել են ինչպես ընդհանրապես, այնպես էլ, հատկապես ԿԱԵ կուսակցական համակարգերի վերլուծության և համեմատության համար: Չափանիշներն արտացոլում են այն հիմնական առանձնահատկությունները, որոնք կարող են տարբերել ավանդական ժողովրդավարությունների և հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների կուսակցական համակարգերը: Չնայած այս չափանիշներն առաջարկվել են դիտարկելու համար նախ և առաջ Բալթյան երկրների կուսակցական համակարգերը, սակայն, հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ, հնարավոր է դրանք կիրառել մյուս հետխորհրդային պետությունների կուսակցական համակարգերն ուսումնասիրելիս: Խնդիրն այն է, որ չափանիշները մշակելիս հաշվի են առնվել հենց այն առանձնահատկությունները, որոնցով հետխորհրդային պետությունների՝ որպես նոր ժողովրդավարություններ, կուսակցություններն ու կուսակցական համակարգերն էապես տարբերվում են կայացած ժողովրդավարական պետությունների կայացած և ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգերից և կուսակցություններից: Ընդ որում, ինչպես նշում են Մեյնորինգն ու Տորկալը, զարգացող ժողովրդավարությունների և թերի ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի հիմնական առանձնահատկությունը ոչ միայն և ոչ այնքան նրանց գաղափարախոսական տարածայնություններն են, որքան ինստիտուցիոնալացման ցածր մակարդակը:

Մեկ այլ հետխորհրդային տարածաշրջանում՝ Ադրբեջանում, Ղրղզստանում և Տաջիկստանում ԿՀԻ և ԿԻ խնդիրներն ուսումնասիրության նպատակով Զ. Իշիյաման ինստիտուցիոնալացման հետազոտությունները լրացնում է նոր չափանիշներով և ցուցիչներով՝ հաշվի առնելով այդ երկրների առանձնահատկությունները<sup>40</sup>: Նա դիտարկել է նախազահական և խորհրդարանական ընտրություններին

<sup>39</sup> **Saarts T.**, Comparative Party System Analysis in Central and Eastern Europe: the Case of the Baltic States, *Studies of Transition States and Societies*, 2011, **3**, 3, 83-104, available at: [http://www.tlu.ee/stss/wp-content/uploads/2011/11/stss\\_nov\\_2011\\_saarts.pdf](http://www.tlu.ee/stss/wp-content/uploads/2011/11/stss_nov_2011_saarts.pdf), 02.11.2013

<sup>40</sup> **Ishiyama J.**, Political Party Development and Party “Gravity” in Semi-Authoritarian States . The Cases of Azerbaijan, Kyrgyzstan, and Tajikistan, *Taiwan Journal of Democracy*, 2008, **4**, 1: 33-53.

մասնակցության տվյալներն՝ օգտագործելով ընտրազանգվածի կողմից կուսակցության «ձգողականության» հասկացությունը: Իշիյաման առանձնացնում է կուսակցությունների զարգացման 3 չափանիշներ, որոնք ներկայացվում են 9 ցուցիչների միջոցով.

1. կուսակցությունների կազմակերպական և քաղաքական շարունակականություն, այն է՝ կուսակցությունների կազմակերպման և քաղաքական որոշակի աստիճանի պահպանում մեկից ավելի ընտրությունների ընթացքում,
2. քանի որ պարբերական ընտրությունները կուսակցություններից պահանջում են պաշարների առկայություն, կուսակցությունների ակնհայտ «գրավչության» և շարունակական գոյության աստիճանի պահպանում,
3. կուսակցական համակարգում մնալու աստիճանը՝

ա) տրանսֆորմացիայի առանձնահատկություններ տվյալ պետության համար, բ) կլանային կուսակցության առկայություն/գերակշռում, գ) նավթի/բնական գազի նշանակալից արտադրություն, դ) նախագահական իշխանության միավորը (Հելման – Տակերի ցուցիչի կիրառությամբ)<sup>41</sup>, ե) օրենսդիր ընտրական համակարգ, զ) կուսակցության «գրավչության» աստիճան, է) հիմնական շարունակական կուսակցությունների գրաված տեղերը ը) կուսակցություն ներկայացնող հաղթած թեկնածուների տոկոսը, թ/անկախ թեկնածուների կողմից գրաված տեղերը<sup>42</sup>:

Զարգացող երկրներում կուսակցությունների ինստիտուցիոնալացումը վերլուծելու համար Բեյսդոն և Ստրոն ներմուծել են «Կուսակցությունների ինստիտուցիոնալացման ցուցիչներ» (ԿԻՑ) հասկացությունը, ընդ որում այդ ցուցիչները, հեղինակների համոզմամբ, հնարավորություն են տալիս գնահատել ցանկացած կուսակցության ինստիտուցիոնալացման աստիճանը<sup>43</sup>.

<sup>41</sup> Այս ցուցիչը կարող է փոխարինվել Ջ. Ֆորտինի ցուցիչով՝ **Fortin J.**, Measuring Presidential Powers: Revisiting Existing Aggregate Measurement. *International Political Science Review*, 2013, **34**, 1, 91-112,

<sup>42</sup> **Ishiyama J.**, ...

<sup>43</sup> **Basedau M., Stroh A.**, ...



Աղյուսակ 3

|                                                                                                                                                                    | Ցուցիչներ                                                                                                                                                                                                                                                                                                             |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Արմատներ</b><br><b>հասարակության մեջ.</b><br>Կուսակցությունն ամուր<br>հիմքեր ունի<br>հասարակության մեջ                                                          | <ul style="list-style-type: none"> <li>Կուսակցության տարիք/պետության անկախության տարիներ</li> <li>Կուսակցության տարիք/ բազմակուսակցականության ժամանակահատված</li> <li>աջակցության հարաբերական փոփոխություն վերջին երկու ընտրությունների ժամանակ</li> <li>Կապը քաղաքացիական հասարակության կազմակերպութ. հետ</li> </ul> |
| <b>Ինքնավարություն</b>                                                                                                                                             | <ul style="list-style-type: none"> <li>Կուսակցության առաջնորդների փոփոխություններ</li> <li>Կուսակցության առաջնորդների փոփոխությունից հետո ընտրական աջակցության փոփոխություններ</li> <li>Որոշումների կայացման ինքնուրույնություն</li> <li>Կուսակցության նկատմամբ համակրանք զանգվածների կողմից</li> </ul>               |
| <b>Կազմակերպվածություն.</b><br>գոյություն ունի<br>կազմակերպական<br>ապարատ, որն անընդհատ<br>ներկա է բոլոր վարչական<br>օղակներում և գործում է ի<br>շահ կուսակցության | <ul style="list-style-type: none"> <li>Անդամության կայունություն</li> <li>Կուսակցությունների պարբերական համագումարներ</li> <li>Նյութական և անձնական ռեսուրսներ</li> <li>Կաառույցների առկայություն երկրի ամբողջ տարածքով, գործունեության շրջանակը սահմանափակված չէ ընտրարշավով</li> </ul>                              |
| <b>Փոխգործակցություն</b>                                                                                                                                           | <ul style="list-style-type: none"> <li>Խորհրդարանական խմբակցության փոխգործակցություն</li> <li>Չափավոր հարաբերություններ ներկուսակցական խմբերի միջև</li> <li>Ներկուսակցական այլախոհության հանդուրժում</li> </ul>                                                                                                       |

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների ԿՀԻ և ԿԻ խնդիրների ուսումնասիրություններում այսօր դրանց մակարդակը դիտարկող չափանիշներից հատկապես կարևորվում են ընտրական

հոսունությունը, կուսակցությունների քանակը<sup>44</sup>: Պատճառները մի քանիսն են: Նախ, եթե ընտրական հոսունությունը կայացած ժողովրդավարություններում համեմատաբար հաստատուն է, քանի որ առկա ենքիմնականում արդեն ձևավորված կուսակցությունների և ԿՀ հետ, ապա հետխորհրդային երկրների դեպքում այն որպես չափանիշ դիտարկելն ու դրա մաթեմատիկական չափումն արձանագրելը դժվարություններ և տարընթերցումներ է առաջացնում: Հիմնական դժվարությունները կայմանավորված են այն հանգամանքով, որ

ա) անհրաժեշտություն է առաջանում քննարկել ընտրություններին հին ու նոր կուսակցությունների մասնակցությունը (այս չափանիշը դիտարկում է հաջորդական ընտրություններում կուսակցությունների ներկայացվածությունը),

բ) հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում անընդհատ կարելի է տեսնել հին կուսակցությունների ելք և նոր կուսակցությունների մուտք՝ ընտրությունների նախաշեմին, ինչը պարբերականության հաշվարկներ անելիս բարդություններ է առաջացնում: Այս չափանիշը նաև իր ազդեցությունն է ունենում ընտրական կայունության վրա, քանի որ ընտրողների կապը կոնկրետ կուսակցության հետ թուլանում է, իսկ նոր կուսակցության հետ դեռ արմատացած չէ: Քանի որ հասարակության մեջ կայուն արմատներ ունեցող կուսակցությունների առկայությունն է կանխորոշում կուսակցությունների և ընտրողների միջև կապվածություն, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վերաբերյալ այս չափանիշը ևս կիրառելիս ցույց է տալիս, որ ընտրողները, կարելի է ասել, դատապարտված են դառնում ընտրել ոչ թե կուսակցություն, այլ՝ թեկնածու:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրները, լինելով բավական տարբեր, այնուամենայնիվ ունեն որոշակի ընդհանրություններ, հատկապես տրանսֆորմացիայի գործընթացի դժվարությունների տեսանկյունից, որոնք թույլ են տալիս ուսումնասիրությունն իրականացնել այդ տեսանկյունից. ա) ընդհանուր խորհրդային պատմություն՝ միակուսակցական համակարգով, բ) անկախանալուց հետո տնտեսական խնդիրներ, գ) կոմունիստական

<sup>44</sup> **Powell E. N. and Tucker J. A.**, Revisiting Electoral Volatility in Post – Communist Countries: New Data, New Results and New Approaches, *British Journal of Political Science*, 2013, 1, 1-25, available at:

[http://journals.cambridge.org/abstract\\_S0007123412000531](http://journals.cambridge.org/abstract_S0007123412000531) 27.11.2013

կուսակցության դերակատարության պարագայում ընտրողների անվստահության ձևավորում կուսակցությունների նկատմամբ ընդհանրապես, դ) քաղաքական մշակույթի բացակայություն, ե) հետխորհրդային տարիների ընթացքում սահմանադրական փոփոխությունների կատարման անհրաժեշտություն, ընդ որում հիմնականում պայմանավորված նախագահական կառավարման ձևից խորհրդարանականի անցմամբ, զ) ժողովրդական հուզումներ, գունավոր հեղափոխություններ, է) տարբեր կոնֆլիկտների առկայություն՝ միջէթնիկական, քաղաքացիական և այլն, ը) անկախության և ժողովրդավարացման միևնույն ժամանակահատված:

Այդուհանդերձ, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ԿՀԻ և ԿԻ գնահատման համար առաջարկվում են մեծ թվով մոտեցումներ ու ցուցիչներ, որոնք կարելի է ներկայացնել ստորև բերված աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 4

| Գործոններ/<br>ոլորտներ                   | Չափանիշներ                                                      | Ցուցիչներ                                                                                                | Տվյալնե<br>րի<br>աղբյուր                                           |
|------------------------------------------|-----------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------|
| <b>Արտաքին<br/>սոցիալ/<br/>տնտեսական</b> | 1. պետու-<br>թյան տնտե-<br>սական իրա-<br>վիճակի գնա-<br>հատական | ՀՆԱ և այլ տնտեսական<br>ցուցիչների պաշտոնական<br>տվյալներ                                                 | Freedom<br>House,<br>UNDP<br>(Human<br>Develop-<br>ment<br>Report) |
|                                          | 2. պետու-<br>թյան էթնիկ,<br>կրոնական,<br>սոցիալական<br>պատկերը  | Էթնիկ կազմ,<br>Կրոնական<br>կազմակերպությունների<br>առկայություն, Սոցիալական<br>ստրատիֆիկացիա             | Վիճա-<br>կագրա-<br>կան<br>տվյալներ                                 |
|                                          | 3. պետու-<br>թյան<br>ժողովրդավա-<br>րացման<br>աստիճան           | Մարդու իրավունքների,<br>ազատությունների<br>պաշտպանություն, ազատ<br>արդար ընտրությունների<br>կազմակերպում | Freedom<br>House,<br>UNDP                                          |
| <b>Արտաքին<br/>սահմա-<br/>նադրա-</b>     | 4. պետու-<br>թյան կառա-<br>վարման ձև                            | Նախագահ./կիսանախ./<br>խորհրդարանական                                                                     | Սահմա-<br>նադրու-<br>թյուն                                         |

|                                          |                                                               |                                                                                                                    |                                                                         |
|------------------------------------------|---------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------|
| <b>իրավական</b>                          | 5. պետության կառուցվածք                                       | Ունիտար/դաշնային                                                                                                   | Սահմանադրություն                                                        |
|                                          | 6. ընտրակ. ինստիտուտների կայունություն                        | Ընտրակարգերի փոփոխություններ                                                                                       | Սահմանադրություն, Ընտրակ. օրենսգիրք                                     |
| <b>Արտաքին գաղափարախոսական քաղաքական</b> | 7. ներկայացուցչական մարմիններ, կուսակցութ. ներկայացվածություն | Խորհրդարանում կուսակցությունների առկայություն, անկուսակցական թեկնածուների/պատգամավորների առկայություն              | Պաշտոնական տվյալներ                                                     |
|                                          | 8. գործադիր մարմիններ. կուսակցությունների ներկայացվածություն  | Գործադիր պորտֆելների բաշխում ըստ կուսակցական պատկանելության                                                        | Պաշտոնական տվյալներ, նախագահ. իշխանության ինդեքսի հաշվում <sup>45</sup> |
|                                          | 9. կուսակցությունների ներկայացվածություն ՏԻՄ-երում            | ՏԻՄ ընտրություններում, պաշտոններում կուսակցական առկայություն, անկուսակցական թեկնածուների/պաշտոնյաների առկայություն | Պաշտոնական տվյալներ                                                     |
| <b>Ներքին սոցիալական տնտեսական</b>       | 10. սոցիալական խմբերի և կուսակցությունների կապերը             | համացանցային կամ պարբերական պաշտոնական մամուլի առկայություն, ազգային կամ կրոնական կուսակցությունների               | Պաշտոնական տվյալներ                                                     |

<sup>45</sup> Fortin J., Measuring Presidential Powers: Revisiting Existing Aggregate Measurement. *International Political Science Review*, 2013, 34 (1), 91-112.

|                                      |                                                 | առկայություն                                                                             |                                                                 |
|--------------------------------------|-------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|
|                                      | 11. բազմակուսակցական համակարգ                   | Բազմակուսակցական համակարգում կուսակցությունների արդյունավետ թվաքանակի հաշվարկում         | Հաակսոյի և Տաաջեպերայի ինդեքսը և Գոլոսովի ինդեքսը <sup>46</sup> |
|                                      | 12. կուսակցության ֆինանսավորում                 | Կուսակցությունների ֆինանսավորումը ընտրարշավ. ընթացքում, կուսակցական միջոցների գոյացում   | Պաշտոնական տվյալներ, օրենք                                      |
| <b>Ներքին իրավական սահմանադրական</b> | 13. մասնակցություն համապետական ընտրություններին | Օրենսդիր մարմնում կուսակցական թեկնածուների առաջադրում, Մասնակցություն ընտրություններին   | Պաշտոնական տվյալներ <sup>47</sup>                               |
|                                      | 14. միջկուսակցական կապեր                        | Կոալիցիաների, ընտրական դաշինքների կազմում, այլ կուսակցության ներկայացուցիչներին սատարում | Պաշտոնական տվյալներ                                             |
|                                      | 15. կուսակցական մասնատվածություն                | Կուսակցությունների թվաքանակի և դրանց անդամների թվի հարաբերություն                        | Պաշտոնական տվյալներ                                             |

<sup>46</sup> **Golosov G. V.**, The Effective Number of Parties: A New Approach, *Party Politics*, 2010, 16, March, 171-192, available at: <http://ppq.sagepub.com/content/vol16/issue2/>, 05.12.2013; **Taagepera R., Laakso M.**, The "Effective" Number of Parties: "A Measure with Application to West Europe", *Comparative Political Studies*, 12, 1, 1979, available at: [http://www.pratiquesciencesociales.net/exposes/S12.%20The%20Effective%20Number%20of%20Parties%20A%20Measure%20with%20Application%20to%20West%20Europe%20\(Laakso%201979\).pdf](http://www.pratiquesciencesociales.net/exposes/S12.%20The%20Effective%20Number%20of%20Parties%20A%20Measure%20with%20Application%20to%20West%20Europe%20(Laakso%201979).pdf) 03.12.2013

<sup>47</sup> Կարող է օգտագործվել հետևյալ աշխատանքում հաշվարկված ինդեքսը՝ **Powell E. N. and Tucker J. A.**, ...

|                                                        |                                                        |                                                                                                                                                      |                     |
|--------------------------------------------------------|--------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------|
| <b>Ներքին<br/>գաղափարա-<br/>խոսական,<br/>քաղաքական</b> | 16. կուսակցությունների տարիքն ու կազմակերպման ոճը      | Կուսակցության գրանցման տարեթիվը<br>Անկախության տարիների և կուսակցության գոյության հարաբերությունը                                                    | Պաշտոնական տվյալներ |
|                                                        | 17. կուսակցության կազմակերպական հզորություն            | Կուսակցությունների գործունեության սկզբունքներ, Տարածքային մարմինների առկայություն, Անդամների թիվ                                                     | Պաշտոնական տվյալներ |
|                                                        | 18. կուսակցությունների գաղափարախոսական ուղղվածությունը | Կուսակցական ծրագրերի վերլուծություն, համեմատություն ընտրությունների ընթացքում և ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածի ծրագրային դրույթների միջև | Պաշտոնական տվյալներ |

## Եզրակացություն

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ԿՀԻ և ԿԻ վիճակի և դրանց գնահատման չափանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում

1. արդյունավետ բազմակուսակցական համակարգերի հիմքով կառավարման համակարգերի ձևավորումն ունի բացառիկ նշանակություն կայացած ժողովրդավարության ձևավորման տեսակետից,
2. ԿՀԻ և ԿԻ ունեն էական առանձնահատկություններ կայացած ժողովրդավարության երկրների համեմատ,
3. ԿՀԻ և ԿԻ ուսումնասիրությունների համար կարող են հիմք ծառայել այն մոտեցումներն ու չափանիշները, որոնք մշակվել են կայացած ժողովրդավարական երկրների համար, սակայն դրանք պետք է լրամշակվեն հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների առանձնահատկությունները հաշվի առնող չափանիշներով,
4. ԿՀԻ և ԿԻ ուսումնասիրությունների համար առաջարկվող առանձնահատուկ մոտեցումներն ու չափանիշները մեծաքանակ են,

երբեմն՝ հակասական, ինչը դրանց կիրառումը դարձնում է բարդ ու քիչ արդյունավետ, և պահանջվում է դրանց համադրում և օպտիմալացում:

## **The Multi-Party System Institutionalisation Evaluation Criteria and Their Optimisation Problems in Post-Soviet Transformation Countries**

LUSINE POGHOSYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

The efficiency of the multi-party system significantly depends on the system institutionalisation level, which has two components: party system institutionalisation (PSI), and institutionalisation of political parties (IPP). Different models, criteria and indications for the evaluation of their institutionalisation levels are used for their study. Nevertheless, in the late 1990s it became clear that in post-Soviet transformation countries the establishment of democracy and, in particular, multi-party systems have essential features and difficulties, and that the employment of those criteria and indicators is ineffective. It is no coincidence that a sharp increase in the study of multi-party systems in post-Soviet transformation countries has been evident since 2000. The revelation of those difficulties and the revision of models and criteria for the evaluation of multi-party systems will significantly increase research productivity.

## Ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները հետխորհրդային Հայաստանում

ԷՄԻԼ ՕՐԴՈՒՒՆՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության  
և եվրոպագիտության ամբիոն, ԵՊԼՀ

Ստացված է 22.07.2013

Ընդունված է 9.11.2013

Ժողովրդավարացումը որպես պետության կազմակերպման ուղի ընտրած հետխորհրդային երկրներում ոչ գծային բնույթ ունեցող այդ գործընթացը դինամիկայի վրա ազդող գլխավոր գործոններից մեկը ընտրական ինստիտուտի արդյունավետությունն է: Հոդվածում քաղաքական մասնակցության և քաղաքական խոսույթի ենթաբեքում ուսումնասիրվել են Հայաստանում 1991-2013թթ. տեղի ունեցած ընտրական գործընթացները և բացահայտվել են ընտրական ինստիտուտի զարգացման դինամիկան, բնութագրիչ կողմերը, ինչպես նաև կայացման խոչընդոտները: Այդ ինստիտուտը կայուն չէ և ունի կոնֆլիկտային բնույթ, քաղաքական ուժերը հիմնականում անձնավորված են և չունեն գաղափարական տարբերություններ: Հետխորհրդային երկրներում ընտրական ինստիտուտի գործունեության բարելավման և դրա նկատմամբ հասարակական վստահության վերականգնման հիմնական քայլերն ուղղված են օրենսդրության բարելավման և կառուցվածքային փոփոխությունների ուղղությամբ, մինչդեռ առաջնային են բազմակուսակցական համակարգի կայացումն ու հասարակական գիտակցության մեջ համապատասխան արժեքների արմատավորումը:

### Քանալի բառեր

ընտրական ինստիտուտ, բազմակուսակցական համակարգ, հետխորհրդային տրանսֆորմացիա, խորհրդարանական և նախագահական ընտրություններ

Խորհրդային Միության փլուզումն, առաջացնելով աննախադեպ հասարակական-քաղաքական իրավիճակ հետխորհրդային տարածքում, նորաստեղծ պետություններին պարտադրեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային փոխակերպումներ<sup>1</sup>: Ստեղծված իրավիճակը պահանջում էր հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորման արդիական մեխանիզմների որոնում և մշակում, քանի որ նախկին խորհրդային մեխանիզմների և

<sup>1</sup> Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, «Գիտություն» հրատ., Երևան, 2006: **Погосян Г.**, Армянское общество в трансформации, изд. "Лусабад", Ереван, 2003.



մոտեցումների կիրառումն այլևս հնարավոր չէր: Հասարակական կարգի փոփոխությունը, քաղաքական վարչակարգի փոխակերպումը պահանջում էին նոր ձև ու բովանդակություն ունեցող քաղաքական ինստիտուտների և նոր քաղաքական մշակույթի ձևավորում, որն, ըստ 90-ականների սկզբին տիրապետող մասնագիտական կարծիքի<sup>2</sup>, պետք է հիմնվեր ժողովրդավարական-ազատական գաղափարների վրա: Ժողովրդավարության արևմտյան փորձն ու քաղաքական ինստիտուտները դիտարկվում էին որպես մոդելներ նորանկախ հանրապետությունների քաղաքական արդիականացման համար: Արևմուտքն էլ, իր հերթին, շահագրգիռ էր նորաստեղծ պետություններում ներդնելու իր հասարակական և քաղաքական արժեհամակարգը, քանի որ փլուզվել էր երկբևեռ աշխարհակարգը և հետխորհրդային տարածքում հնարավորություն էր ստեղծվել ազդեցության և վերահսկողության գոտիների վերանայման համար: Արևմտյան հասարակական և քաղաքական կյանքին հատուկ քաղաքական բազմակարծությունը, ընտրական մրցակցային ինստիտուտը և այլ ժողովրդավարական մեխանիզմներ, ինստիտուտներ և արժեքներ, որոնք գոյություն չունեին խորհրդային տարիներին, սկսեցին աստիճանաբար ներդրվել նորանկախ պետություններում: Խորհրդային միակուսակցական քաղաքական համակարգը, որը մերժում էր քաղաքական բազմակարծությունն ու մրցակցությունը, ինքնին ի չիք էր դարձնում իրական ընտրական մրցակցային ինստիտուտի գոյության հնարավորությունը: Խորհրդային կենտրոնացված քաղաքական իշխանությունը հասարակության քաղաքականապես ակտիվ հատվածին բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներով հեռացնում էր իրական քաղաքականության ոլորտից, սակայն խորհրդային վերջին տարիներին՝ վերակառուցման շրջանում, արդեն նկատվում էին քաղաքական բազմակարծության ճանաչման, շուկայական տնտեսության տարրերի կիրառման, կառավարման ապագաղափարականացման միտումներ<sup>3</sup>: Եվ պատահական չէ, որ անգամ խորքային պատկերացումներ չունենալով ժողովրդավարական արժեքների, մեխանիզմների ու ինստիտուտների մասին, հետխորհրդային տարածքի ժողովուրդները խանդավառությամբ էին վերաբերվում հասարակական կյանքի կտրուկ փոփոխություններին: Էական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ արևմտյան ու կոնունիստական արժեհամակարգերի մրցակցությունում հաջողություն

<sup>2</sup> **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentyeth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991.

<sup>3</sup> **Крыштановская О.** Трансформация старой номенклатуры в новую российскую элиту. *Общественные науки и современность*, 1995, 1, 63-73.

ունեցավ բարեկեցիկ կյանք և ազատություններ ապահովող արևմտյան համակարգը և փլուզվեց ԽՍՀՄ-ը:

Քաղաքական մրցակցությունը և բազմակարծությունը գործնականում դրսևորվում են այլընտրանքային ընտրական ինստիտուտի միջոցով, որը, լինելով ժողովրդավարության արտացոլման կարևոր գործիք, կարևոր նշանակություն ունի ներպետական քաղաքական կառույցների ու գործընթացների արդյունավետության գնահատման, թերությունների բացահայտման, հետևաբար և դրանց հավասարակշռման, կայունացման և բարելավման գործում: Ընտրական ինստիտուտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու և վերլուծելու ընտրական գործընթացների խնդիրներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքական մասնակցության և քաղաքական վարքագծի ազդեցությունն այդ գործընթացների վրա: Ավելին, քանի որ այն եզակի գործընթաց է, որին միաժամանակ մասնակցում են քաղաքական և պետական կառավարման համակարգերը, ընտրական գործընթացների ընթացքն ու արդյունքները հնարավորություն են տալիս ձևավորելու այդ համակարգերի ինտեգրալ գնահատականը: Պատահական չէ, որ 90-ականներին համարվում էր, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի միասնական հարացույցում առանցքային նշանակություն ունեն ընտրությունները<sup>4</sup>: Իհարկե, թե միասնական հարացույցի, թե ժողովրդավարացման գործընթացի համար ընտրությունների առանցքային նշանակության գաղափարները հետագայում վերանայվեցին<sup>5</sup>, սակայն ընտրությունները շարունակում են մնալ ժողովրդավարության մակարդակը բնութագրող կարևոր գործոն:

Ընտրական ինստիտուտի համար բնութագրիչ մի շարք տարրերի հետազոտությունը կարող է թույլ տալ ընդհանուր պատկերացում ձևավորել կոնկրետ քաղաքական ինստիտուտի մասին, բացահայտել դրանում առկա խնդիրները և դրանց պատճառները: Այս հոդվածում այդ նպատակով դիտարկվում են ընտրական գործընթացներին քաղաքացիների և քաղաքական ուժերի մասնակցության բացարձակ և հարաբերական դինամիկան, ընտրությունների արդյունքների կապը թեկնածուների և իշանությունների միջև առնչությունների հետ, ընտրությունների ժամանակ քաղաքական խոսույթի ազդեցությունը հետընտրական զարգացումների վրա և այդ խոսույթի առանձնահատկությունները տարբեր տեսակի համապետական ընտրական գործընթացների ժամանակ:

<sup>4</sup> Carothers T., The End of the Transition Paradigm. *Journal of Democracy*, 2002, 13, 1, 6-21.

<sup>5</sup> Թորոյան Տ., Սուքիասյան Հ., Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները: *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 1, 20-33:

## Ընտրողների ակտիվությունն ըստ ընտրական գործընթացի տեսակի

Հետխորհրդային երկրներում բազմակուսակցական համակարգերի ներդրումը և սահմանադրությունների ու ընտրական օրենսդրությունների ընդունումը ստեղծեցին բոլոր անհրաժեշտ կառուցվածքային հիմքերն ու կանոններն այդ երկրներում ընտրական ինստիտուտների ձևավորման համար: Սակայն այդ ինստիտուտը ոչ թե պետական կառավարման համակարգի ձևավորման պարզունակ մեխանիզմ է, այլ ժողովրդավարական քաղաքական մշակույթի արդյունք, որի արդյունավետությունը մեծապես կախված է ընտրական գործընթացի երկու գլխավոր դերակատարների՝ ընտրողների (հասարակություն) և ընտրվողների (քաղաքական ուժեր) ձգտումների ու պատկերացումների համապատասխանությունից ժողովրդավարական միջավայրի համար բնորոշ արժեհամակարգին: Որպես դրա անուղղակի ցուցիչ հողվածում օգտագործվում է ընտրական գործընթացների շրջանում կիրառվող քաղաքական խոսույթը: Հայաստանում ընտրական ինստիտուտի արդյունավետության հետազոտության նպատակով օգտագործվել են 1991-2013 թթ. տեղի ունեցած 16 համապետական ընտրական գործընթացների (<< Նախագահի ընտրություններ, ԱԺ ընտրություններ, Սահմանադրության հանրաքվեներ) ժամանակ արձանագրված քաղաքական մասնակցության տվյալները<sup>6</sup>, ինչպես նաև քաղաքական խոսույթի դրսևորումներն այդ գործընթացների ժամանակ:

<sup>6</sup> << Ազգային արխիվ՝ 1. << Գերագույն Խորհրդի Պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողով, 1991թ. հոկտեմբերի 16-ի << Նախագահի ընտրության արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 52, 2. Վերլուծական տեղեկանք, << ԱԺ ընտրությունների և << Սահմանադրության հանրաքվեի արդյունքների ամփոփման մասին, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 31, 3. << Նախագահի ընտրությունների ընտրական հանձնաժողովների արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 97, 4. 1998թ. << Նախագահի արտահերթ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքների մասին << կենտրոնական ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 143, 5. 1999թ. մայիսի 30-ի << ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 6. 2003թ. փետրվարի 19-ի << Նախագահի ընտրությունների 1-ին փուլի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 7. 2003թ. մարտի 5-ի << Նախագահի ընտրությունների 2-րդ փուլի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 8. 2003թ. մայիսի 25-ի << ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 9. 2003թ. մայիսի 25-ի (<< Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ,


Աղյուսակ 1-ն արտացոլում է համապետական քվեարկություններին քաղաքացիների մասնակցության պատկերը:

**Աղյուսակ 1**

| Տարեթիվ                 | ՀՀ<br>ընտրողների<br>ընդհանուր<br>թիվը | Քվեարկությանը<br>մասնակցած<br>ընտրողների թիվը | Մասնակցության<br>տոկոսը |
|-------------------------|---------------------------------------|-----------------------------------------------|-------------------------|
| 1991 թ. ՆԸ              | 2. 155. 698                           | 1. 518. 090                                   | 70.4%                   |
| 1995 թ. ՍՀ              | 2. 189. 804                           | 1. 217. 531                                   | 55.6%                   |
| 1995 թ. ԱԺԸ             | 2. 461. 700                           | 1. 283. 573                                   | 52.1%                   |
| 1996 թ. ՆԸ              | 2. 201. 999                           | 1. 331. 029                                   | 60.4%                   |
| 1998 թ. ՆԸ<br>1-ին փուլ | 2. 300. 816                           | 1. 449. 004                                   | 62.9%                   |
| 1998 թ. ՆԸ<br>2-րդ փուլ | 2. 300. 816                           | 1. 567. 702                                   | 68.1%                   |
| 1999 թ. ԱԺԸ             | 2. 198. 544                           | 1. 137. 660                                   | 51.7%                   |
| 2003 թ. ՆԸ<br>1-ին փուլ | 2. 315. 410                           | 1. 462. 383                                   | 63.1%                   |
| 2003 թ. ՆԸ<br>2-րդ փուլ | 2. 331. 507                           | 1. 595. 702                                   | 68.4%                   |
| 2003 թ. ԱԺԸ             | 2. 340. 744                           | 1. 233. 757                                   | 52.7%                   |
| 2003 թ. ՍՀ              | 2. 339. 704                           | 1. 215. 908                                   | 51.9%                   |
| 2005 թ. ՍՀ              | 2. 317. 462                           | 1. 514. 545                                   | 65.3%                   |
| 2007 թ. ԱԺԸ             | 2. 319. 722                           | 1. 391. 540                                   | 59.9%                   |
| 2008 թ. ՆԸ              | 2. 311. 917                           | 1. 671. 027                                   | 72.2%                   |
| 2012 թ. ԱԺԸ             | 2. 522. 906                           | 1. 572. 858                                   | 62.3%                   |
| 2013 թ. ՆԸ              | 2. 528. 050                           | 1. 521. 489                                   | 60.2%                   |

<http://elections.am/Default.aspx>, 10. 2005թ. նոյեմբերի 27-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 11. 2007թ. մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 12. 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, <http://elections.am/Default.aspx>, 13. 2012 թ. մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://www.elections.am/proportional/>, 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, <http://www.elections.am/presidential/>:


## Գծապատկեր 1



2008 թ. ՀՀ Նախագահի ընտրություններ՝ 72.20% կամ 1. 671. 027 ընտրող, ամենացածրը՝ 1999 թ. ՀՀ ԱԺ ընտրություններ՝ 51.70% կամ 1. 137. 660 ընտրող):

Հարաբերական մասնակցության միջին ցուցանիշներն ըստ ընտրական գործընթացների, բերված են գծապատկեր 2-ում:

## Գծապատկեր 2



Ընտրողների ակտիվության հստակ օրինաչափությունն ըստ ընտրական գործընթացների տեսակների (նախագահական, սահմանադրական և խորհրդարանական) կարող է բացատրվել մի քանի պատճառներով: Առաջինն այն կարծրատիպի կենսունակությունն է, որը ձևավորվել էր պետական կառավարման մարմինների վերաբերյալ խորհրդային տասնամյակների ընթացքում: Խորհրդային տարիներին հասարակությունը որպես պետական կառավարման բարձրագույն մարմին ընկալում էր Խորհրդային միության կոմունիստական կուսակցության (Կոմկուս) կենտրոնական կոմիտեի բյուրոն, իսկ ավելի հաճախ՝ գլխավոր քարտուղարին: Պատահական չէ, որ պետական կառավարման վերաբերյալ անձնավորված պատկերացումները հաճախ ունենում էին խիստ ծայրահեղ դրսևորումներ. համատարած ողբ՝ Ստալինի մահվան կապակցությամբ, նամակներ՝ Լենինի դամբարանին անգամ 70-80-ական թվականներին, տարատեսակ խնդիրների լուծման ակնկալիքով, և այլն: Մինչդեռ խորհրդարանի նկատմամբ վերաբերմունքը հաճախ անտարբեր էր, իսկ վերջին տասնամյակներին՝ քամահրական: Հարկ է նկատել, որ կառավարման հիմնական լծակներ ունեցող կուսակցական մարմիններն էլ նպաստում էին դրան՝

խորհրդարանի համալրման համար սահմանելով և կիրառելով ձևական չափանիշներ ու չափաբաժիններ՝ ըստ զբաղմունքի բնույթի: Բնական է, որ նման արժեքային կարծրատիպերի փոփոխությունը տևական ժամանակ է պահանջում անգամ այն ժամանակ, երբ ջանքեր են գործադրվում այդ ուղղությամբ: Մինչդեռ հետխորհրդային երկրներում ձևավորվող կուսակցությունների ճնշող մեծամասնությունը ստեղծվում էր հար և նման Կոմկուսին, քանի որ դա անում էին մարդիկ, ում գիտելիքներն ու փորձը սահմանափակվում էին խորհրդային տարիներով:

Նախագահական ընտրությունների ժամանակ ավելի մեծ ակտիվությունը պայմանավորված է ևս մեկ հանգամանքով: Քանի որ այդ ընտրություններն անձնավորված են, ապա ավելի բարձր է քաղաքական խոսույթի կոնֆլիկտայնության ցուցանիշը: Որքան կոնֆլիկտային է քաղաքական խոսույթը, այնքան մեծ է քաղաքական ակտիվությունն ընտրությունների ժամանակ, և հակառակը<sup>7</sup>:

Կարելի է արձանագրել, որ ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ, երբ դրանք անցկացվել են երկու փուլով, երկրորդ փուլում քաղաքացիների մասնակցության ցուցանիշները միշտ եղել են ավելի բարձր առաջին փուլի ցուցանիշներից: Սա վկայում է այն մասին, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, երբ ընտրապայքարին մասնակցում են առաջադրված թեկնածուներից միայն երկուսը, հասարակությունն առավել ակտիվությամբ է մասնակցում քաղաքական կյանքին, քանի որ այդ պարագայում անհատն ավելի հեշտ է կողմնորոշվում՝ իր քվեն տալով երկու թեկնածուներից մեկի օգտին: Այս պարագայում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա ավելի է մեծանում, քանի որ երկրորդ փուլ անցած թեկնածուները հնարավորություն են ստանում իրենց ընտրական ելույթների, քննարկումների և բանավեճերի միջոցով ավելի մեծ ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի վրա: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ քաղաքական խոսույթը կարող է լուրջ ազդեցություն թողնել ընտրազանգվածի քաղաքական վարքագծի վրա՝ դրանով պայմանավորելով ընտրական գործընթացին նրա մասնակցությունը: Նախագահական ընտրությունների ժամանակ նկատելի է հասարակական-քաղաքական քննարկումների տիրույթի, տեղեկատվության տարածման ծավալների և հասարակության կողմից դրանց ուղղված արձագանքների ավելի լայն շրջանակ, քանի որ հասարակության գրեթե բոլոր շերտերը ցուցաբերում են ավելի բարձր քաղաքական ակտիվություն, շահագրգռվածություն՝ հենց այդ

<sup>7</sup> Օրդուխանյան Է., Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան, 2010, էջ 127-128:

ընտրությունների հետ հիմնականում կապելով իրենց շահերի ներկայացման, իրացման, պահանջների բավարարման, սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունները: Հատկանշական է, որ այդ տեսակետից նախագահի ինստիտուտի ընկալումն էական փոփոխություններ չի կրել անգամ 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որի արդյունքում էականորեն կրճատվեցին նախագահի լիազորությունները և ձևավորվեց լիարժեք հակակշիռների ու զսպումների սահմանադրական համակարգ:

Ըստ ընտրական գործընթացների տեսակների հստակ արտահատված առանձնահատկություններ ունի ոչ միայն մասնակցության գործոնն, այլև նախընտրական և հետընտրական զարգացումների բնույթը:

Բացառությամբ 1991 և 1998թ., մյուս բոլոր նախագահական ընտրություններն ուղեկցվել են քաղաքական անկայունությամբ, մեծ լարվածություն ունեցող կոնֆլիկտային քաղաքական խոսույթով, բողոքի զանգվածային ցույցերով, երբեմն՝ իրավապահների հետ բախումներով: Սակայն Ազգային ժողովի նախընտրական և հետընտրական գործընթացները, թերևս բացառությամբ 1995թ., հիմնականում ընթացել են մեղմ մթնոլորտում՝ չհանգեցնելով կտրուկ դիմակայության: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ նախագահական ընտրություններն առանձնահատուկ տեղ ունեն ոչ միայն հետխորհրդային հասարակության, այլև քաղաքական ընդդիմության ընկալման մեջ, քանի որ նախընտրական և հետընտրական զարգացումներում լարվածության հիմնական խթանողը, բնականաբար, ընդդիմադիր քաղաքական ուժերն են:

Մի շարք առանձնահատկություններով աչքի ընկան 2013թ. նախագահական ընտրությունները: Թեկնածուներ առաջադրեցին ընդամենը մեկ տարի առաջ տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրության արդյունքում խորհրդարան անցած 6 կուսակցություններից միայն երկուսը՝ առավելագույն և նվազագույն ծայեր հավաքած ՀՀԿ-ն և <<Ժառանգությունը>>: Այդ փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների թիվն ավելի քան երկու անգամ զիջում էր նախորդ խորհրդարանական ընտրություններին մասնակցածների թվին, վկայում է, որ բազմակուսակցական համակարգում առկա է ճգնաժամ<sup>8</sup>: 2013թ. նախագահական ընտրությունն առանձնացավ ևս մեկ բացասական երևույթով: Նախընտրական շրջանում տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն՝ թեկնածուներից մեկի դեմ իրականացվեց մահափորձ, որն, ըստ իրավապահ մարմինների, կազմակերպել էր մեկ այլ թեկնածու:

<sup>8</sup> Թորոսյան Տ., Յո՞ւ երթաս, Հայաստան, <http://168.am/2013/03/07/192008.html>



Թեև այդպես էլ անհայտ մնաց մահափորձի դրդապատճառը, սակայն ակնհայտ էր, որ քաղաքական ենթատեքստի առկայության հավանականությունը խիստ ցածր է, քանի որ ի սկզբանե պարզ էր, որ երկու թեկնածուներն էլ դուրս են իրական մրցակցությունից, որը ծավալվեց երկու խորհրդարանական ուժերի առաջնորդների միջև: Ընտրության արդյունքները ևս ուշագրավ են՝ մեկ տարի առաջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրության արդյունքների ենթատեքստում: Եթե գործող նախագահի ստացած ձայները համեմատելի են խորհրդարանական ընտրություններում իր գլխավորած ՀՀԿ-ի ստացած ձայների հետ, ապա Ր. Հովհաննիսյանի երկրորդ արդյունքը մեծապես գերազանցում է իր գլխավորած <<Ժառանգության>> մեկ տարվա վաղեմության արդյունքը: Թեև հետընտրական շրջանն այս անգամ ևս ուղեկցվեց արդյունքները վիճարկող ցույցերով, երթերով և հանրահավաքներով, ինչպես նախորդ գրեթե բոլոր նախագահական ընտրություններից հետո, սակայն զարգացումներն ունեցան մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես, նկատելի էր քաղաքական խոսույթի էական տարբերություն նախորդ նախագահական ընտրությունների համեմատ: Արդյունքում հաստատվեց վերոհիշյալ օրինաչափությունը՝ քաղաքական խոսույթի, ներքաղաքական լարվածության և դիմակայության դրսևորումների միջև: Առաջին անգամ հետընտրական զարգացումները, հագեցած լինելով բողոքի գործողություններով և հասարակական դժգոհություններով, չհանգեցրին լուրջ բախումների: Ընդդիմության առաջնորդը հաճախ իր ելույթներում քաղաքակիրթ, իրավական պայքարի և զսպվածության կոչեր էր անում՝ հանդարտեցնելով իր համակիրներին: Ի վերջո, երբ պարզ դարձավ, որ իշխանափոխություն չի լինելու, Ր. Հովհաննիսյանի օգտին քվեարկածների զգալի մասն այլևս նրան չէր աջակցում:<sup>9</sup>

Այդ ընտրություններն առանձնացան նաև արևմտյան ընտրական տեխնոլոգիաների լայն ներդրմամբ, որոնք հատկապես կիրառում էր ընդդիմության լիդերը: Սակայն միայն հետագա ընտրությունների արդյունքներն ու հետընտրական զարգացումները ցույց կտան, թե այդ դրսևորումները կմնան որպես 2013թ. ընտրության առանձնահատկությունը, թե կվերածվեն Հայաստանում ընտրական մշակույթի ավանդույթի: Այդուհանդերձ, քանի որ քաղաքական ավանդույթի ձևավորման գլխավոր դերակատարը քաղաքական ուժերն

<sup>9</sup>Քաղաքագետները վերջին իրադարձություններից հետո Րաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշի անկում են նկատում /16 ապրիլի 2013/, <http://armenpress.am/arm/news/715388/qaxaqagetnery-verjin-iradardzutyunneric-heto-raffi-hovhannisyani.html>; Դեպի Ազատության հրապարակ. «Րաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշը կտրուկ անկում է ապրել, և այդ տեղը փորձում են զբաղեցնել այլ քաղաքական ուժեր» /19.04.2013/ <http://medialab.am/news/id/563>;

են, ապա այդ հարցադրման պատասխանը որոշ չափով կարող է տալ մինչ այժմ տեղի ունեցած 5 խորհրդարանական ընտրությունների վերլուծությունը:

### **Խորհրդարանական ընտրությունների օրինաչափություններն ու առնձնահատկությունները**

Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ տվյալները բերված են Աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2**

| Աժ գումարում  | Ընտր. մասնակցած քաղաքական ուժեր | Խորհրդարանական քաղաքական ուժեր | Կուսիցիոն ուժերի թիվը | Ընդդիմադիր ուժերի թիվը | Կուսիցիոն ուժեր          | Ընդդիմադիր ուժեր                             | Իշխանական ուժերի ստացած տոկոսներ | Ընդդիմադիր ուժերի ստացած տոկոսներ |
|---------------|---------------------------------|--------------------------------|-----------------------|------------------------|--------------------------|----------------------------------------------|----------------------------------|-----------------------------------|
| I<br>1995թ.   | 13                              | 5                              | 2                     | 3                      | Հանրապետ.,<br>Շամիրամ    | ՀԿԿ<br>ԱԺՄ<br>ԱԽՄ                            | 59.5%                            | 25.2%                             |
| II<br>1999թ.  | 21                              | 6                              | 1                     | 5                      | Միասնություն<br>դաշինք   | ՀԿԿ, ՀՅԴ,<br>ԱԺՄ, Իրավ.<br>և միաբան.,<br>ՕԵԿ | 41,7%                            | 38.3%                             |
| III<br>2003թ. | 21                              | 6                              | 3                     | 3                      | ՀՀԿ<br>ՕԵԿ<br>ՀՅԴ        | Արդարութ.,<br>Ազգային<br>միաբան.,<br>ՄԱԿ     | 47.7%                            | 28.3%                             |
| IV<br>2007թ.  | 23                              | 5                              | 3                     | 2                      | ՀՀԿ<br>ՕԵԿ<br>ԲՀԿ<br>ՀՅԴ | Ժառանգություն (2009-ից՝ նաև ՀՅԴ)             | 80.0%<br>(67.2 )                 | 5.8%<br>(18.6)                    |
| V<br>2012թ.   | 9                               | 6                              | 2                     | 3+(1)                  | ՀՀԿ<br>ՕԵԿ               | Ժառանգություն, ՀՅԴ,<br>ՀԱԿ, (ԲՀԿ),           | 47.5%                            | 17.8%<br>+<br>(29%)               |

Անմիջապես նկատելի է երկու օրինաչափություն. խորհրդարան անցած քաղաքական ուժերի թիվն ունի մեծ կայունություն՝ 5-6, և առաջին չորս ընտրություններին մասնակցել է մոտ երկու տասնյակ կուսակցություն ու դաշինք: Սակայն բերված տվյալները վկայում են նաև, որ 2012թ. Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած քաղաքական ուժերի թիվն ավելի քան երկու անգամ նվազել է, իսկ 2007թ. ընտրությունից հետո խորհրդարան անցած 5 ուժերից 4-ը ձևավորել են կոալիցիոն կառավարություն և խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնում էր միայն փոքրաթիվ խմբակցություն ունեցող <<Ժառանգություն>>: Ճիշտ է, երկու տարի անց խորհրդարանական մեծամասնության կազմից դուրս եկավ ՀՅԴ-ն, սակայն այդ խմբակցությունը ևս փոքրաթիվ էր և իրավիճակը չփոխվեց: Բերված տվյալները ցույց են տալիս ևս մեկ օրինաչափություն, որը խախտվել է 2007թ. ընտրությունների արդյունքում: 1999թ. սկսած խորհրդարանական յուրաքանչյուր ընտրության արդյունքում Ազգային ժողով է անցել մեկ նոր քաղաքական ուժ (համապատասխանաբար՝ ՕԵԿ, ՄԱԿ, <<Ժառանգություն>>, ՀԱԿ)՝ ստանալով գրեթե անցման շեմային ծայրեր: Այդ օրինաչափությունը խախտվել է 2007-ին, երբ խորհրդարանում տեղեր ստացավ ևս մեկ նոր քաղաքական ուժ՝ ԲՀԿ-ն: Այդ կուսակցությունն առաջին իսկ փորձի արդյունքում, ինչպես նաև հաջորդ ընտրություններում ունեցավ 2-րդ ցուցանիշը: Այդ հաջողությունը, թերևս, պայմանավորված էր կուսակցությունների համար աննախադեպ ֆինանսական հնարավորություններով և կուսակցության առաջնորդի անձնական հատկանիշներով: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ փորձագետների պնդումների համաձայն, ԲՀԿ-ի ստեղծման նախաձեռնողներից մեկը եղել է այն ժամանակ երկրի գործող նախագահը, ինչն ապահովել է լուրջ աջակցություն: 2012թ. ընտրությունների արդյունքում ԲՀԿ-ն չմասնակցեց կոալիցիոն կառավարության ձևավորմանը, սակայն կուսակցությունը դժվար է միանշանակորեն դասել ընդդիմադիր խմբակցությունների շարքում, քանի որ այն դեռևս չի դրսևորում լիարժեք ընդդիմադիր քաղաքական կեցվածք: Անգամ խուսափում է <<ընդդիմադիր>> կոչվելուց՝ իր կարգավիճակը բնորոշելով որպես <<այլընտրանք>>: Կուսակցությունը հիմնականում մասնակցում է ընդդիմության նախաձեռնած միջոցառումներին, սակայն սահմանափակ նպատակադրումները՝ երկու գումարումների ընթացքում իր թվաքանակով երկրորդ խմբակցությունն ունենալով, մեծապես նվազեցնում է ԲՀԿ ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այդ հանգամանքը լրջորեն ազդում է ոչ միայն այդ կուսակցության գործունեության արդյունավետության վրա, այլև էական խոչընդոտ է բազմակուսակցական համակարգի կայացման համար: Պատահական չէ, որ պետական և տեղական ինքնակառավարման

ներկայացուցչական մարմիններում բացարձակ մեծամասնություն ունի ՀՀԿ-ն: Պետական ներկայացուցչական մարմիններում իրական քաղաքական մրցակցության խիստ ցածր մակարդակը ոչ միայն լրջորեն խաթարում է իշխանության ճյուղերի միջև հակակշիռների ու զսպումների սահմանադրական համակարգի լիարժեք գործունեությունն, այլև խոչընդոտում է բազմակուսակցական համակարգի կայացմանն ու արդիական սկզբունքների հիման վրա գործող ընդդիմադիր և կառավարող կուսակցությունների ձևավորմանը: Իրավիճակը բնորոշ է ոչ միայն Հայաստանին, այլև հետխորհրդային մյուս երկրներին, որտեղ առկա է ոչ թե բազմակուսակցական համակարգ, այլ կուսակցությունների համախումբ, ինչը սկզբունքորեն տարբերվում է առաջինից: Չլինելով համակարգի մաս, կուսակցությունները պատասխանատվություն չեն կրում ոչ միայն այդ համակարգի մյուս տարրերի, այլև ընդհանրապես հասարակության առաջ՝ տուրք տալով անպատասխանատու հոետորությանը և ամբոխավարությանը<sup>10</sup>:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում բազմակուսակցական համակարգի չկայացման մեկ այլ պատճառ է հայեցակարգային գաղափարական բազմակարծության գրեթե իսպառ բացակայությունը: Քաղաքական դաշտում ակտիվություն ցուցաբերող ուժերի ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից:<sup>11</sup> Արդյունքում՝ քաղաքական ուժերը հենվում են ոչ թե հասարակական տարբեր խմբերի վրա՝ բացահայտելով նրանց հուզող խնդիրներն ու առաջարկելով լուծումներ, այլ իրենց առաջնորդի անձնական որակների և հեղինակության վրա: Այդ պատճառով քաղաքական ուժերի ներկայությունը և ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում մեծապես պայմանավորված է քաղաքական առաջնորդով: Այդ կերպ դեկավարվող կուսակցություններում լիդերային դետերմինիզմի բացասական և վտանգավոր կողմն այն է, որ առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորվում նաև ամբողջ քաղաքական ուժի վարքագիծը և հասարակության մոտ վերջինիս նկատմամբ վերաբերմունքը:<sup>12</sup>

Ակնհայտ է, որ հետխորհրդային երկրներում ընտրական ինստիտուտների գործունեության վերլուծությունն անհնարին է առանց մի շարք խորքային խնդիրների, մասնավորապես, բազմակուսակցական համակարգի կայացածությանն անդրադարձի: Ահա թե ինչու թեն

<sup>10</sup> Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 144:

<sup>11</sup> Օրդուխանյան Է., Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան, 2010, էջ 158:

<sup>12</sup> Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ., Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, «Լուսաբաց» հրատ., Երևան, 2012, էջ 42:

ընտրական ինստիտուտների գործունեության գնահատման տեսակետից օգտակար են ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կառույցների, մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցները, սակայն դրանք, ըստ առաքելության նպատակների, առաջին հերթին ձևավորում են ընտրությունների որակի ընդհանուր գնահատականները<sup>13</sup>։ Այդուհանդերձ, այդ զեկույցները պարունակում են ընտրությունների մասին մի շարք տվյալներ, որոնց հիման վրա որոշ հետազոտողներ փորձում են գնահատել իրավիճակը հետխորհրդային երկրներում։ Մասնավորապես, Մաքս Բադերը, հիմք ընդունելով ԵԱՀԿ դիտորդական եզրակացությունները, նշում է, որ հետխորհրդային տարածքն առանձնանում է իր թերի ընտրական գործընթացներով։ Համեմատելով 1998-2008թթ. Հայաստանում, Ադրբեյջանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Ղազախստանում, Բելառուսում, Ղրղզստանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունները՝ նա նշում է առանձին երկրներում նկատվող դանդաղ դրական տեղաշարժերի մասին՝ դանդաղության պատճառը հատկապես համարելով այդ երկրներում ձևավորված վարչակարգերի ավտորիտար բնույթը<sup>14</sup>։ Հետաքրքիր է, որ Բադերի ուսումնասիրությունն այլ երկրների համար ևս հաստատում է վերը բերված վերլուծության արդյունքում Հայաստանի համար բացահայտված օրինաչափությունը, որ խորհրդարանական և նախագահական ընտրություններն ունեն մի շարք էական տարբերություններ։ Մասնավորապես, ըստ Բադերի մոտեցման, Վրաստանում, Ռուսաստանում և Ղրղզստանում դիտարկվող ժամանակահատվածում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները համարվել են մրցակցային, իսկ նախագահական ընտրությունները՝ հեգեմոնիկ։

Անդրադառնալով Հարավային Կովկասի երեք ճանաչված պետություններում նախագահական և խորհրդարանական ընտրություններին՝ հեղինակը նշում է, որ Հայաստանում 1998թ. նախագահական, 1999թ. խորհրդարանական, 2003թ. նախագահական և խորհրդարանական, 2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունները եղել են մրցակցային, ի

<sup>13</sup> OSCE, *Armenian Presidential Elections*, September 24, 1996, Final Report; OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, March 16 and 30, 1998, Final Report; OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 19 February and 5 March, 2003, Final Report; OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 19 February, 2008, Final Report; OSCE, *Republic of Armenia, Presidential Elections*, 18 February, 2013, Final Report.

<sup>14</sup> **Bader M.**, Trends and Patterns in Electoral Malpractice in Post Soviet Eurasia. *Journal of Eurasian Studies*, 2012, 3, 49-57.

տարբերություն Ադրբեջանի, որտեղ բոլոր նախագահական և խորհրդարանական ընտրությունները 2000-2010 թթ. կրել են հեգեմոնիկ բնույթ: Իսկ Վրաստանի դեպքում 1999-2010 թթ. կայացած ընտրությունների մի մասը՝ 1999թ. խորհրդարանական, 2000 թ. նախագահական, 2004 թ. նախագահական և խորհրդարանական, եղել են հեգեմոնիկ, իսկ 2003թ. խորհրդարանական, 2008թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունները՝ մրցակցային:<sup>15</sup> Սակայն դժվար է նկատել, որ Բադերի առաջարկած մոտեցման դեպքում տվյալները բավարար չեն բացահայտելու համար Հայաստանի պարագայում նախագահական և խորհրդարանական ընտրությունների առանձնահատկությունները, որոնք ի հայտ եկան վեր բերված վերլուծության արդյունքում, որոնցում, ի տարբերություն Բադերի, օգտագործվել են ոչ միայն ընտրությունների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ, այլև կուսակցությունների վարքային դրսևորումները և բազմակուսակցական համակարգի գործունեությունը բնութագրող տվյալներ:

### **Եզրակացություն**

Հայաստանի ընտրական ինստիտուտի արդյունավետության վերլուծության արդյունքների համեմատությունը հետխորհրդային երկրների ընտրությունների վիճակագրական ցուցանիշների վերլուծության ժամանակ բացահայտված օրինաչափությունների հետ վկայում է, որ

1. հետխորհրդային երկրներում անցկացվող նախագահական և խորհրդարանական ընտրությունները միմյանցից տարբերվում են թե՛ մրցակցայնությամբ, թե՛ նախընտրական և հետընտրական զարգացումների ժամանակ դրսևորված քաղաքական խոսույթով, թե՛ այդ զարգացումների լարվածությամբ,
2. հետխորհրդային տարածքում հասարակական ընկալման մեջ նախագահական ընտրությունների ժամանակ նկատվում է ավելի բարձր ակտիվություն, հետևաբար և ավելի է կարևորվում այդ ընտրությունների արդյունքը հասարակական զարգացումների տեսակետից: Ընդ որում, այդ օրինաչափությունը նկատվում է ոչ միայն նախագահական ինստիտուտի զգալիորեն գերակշռող լիազորությունների, այլև խորհրդարանի ու նախագահի լիազորությունների սահմանադրական լիարժեք հավասարակշռվածության դեպքում,

<sup>15</sup> Bader M., ...

3. Թեև ընտրական գործընթացները կարևոր նշանակություն ունեն հետխորհրդային երկրներում ժողովրդավարացման վիճակի գնահատման տեսակետից, այդուհանդերձ պետականության կայացման համար առանցքային է բազմակուսակցական համակարգի կայացածությունը,
4. հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ընտրական ինստիտուտի գործունեության արդյունավետության ուսումնասիրությունը թերի է, երբ այն հիմնված է միայն ընտրական գործընթացների վիճակագրական տվյալների վրա: Այն կարող է բացահայտել իրական հիմնախնդիրները, երբ վերլուծության ժամանակ հաշվի են առնվում նաև կուսակցությունների վարքային դրսևորումները և բազմակուսակցական համակարգի գործունեությունը բնութագրող տվյալներ,
5. թեև Հայաստանի ընտրական ինստիտուտն ունի մի շարք առանձնահատկություններ, սակայն այդ ինստիտուտի զարգացման հիմնական խոչընդոտներն ու հնարավորությունները (բազմակուսակցական համակարգի կայացումն ու հասարակական գիտակցության մեջ համապատասխան արժեքների արմատավորում), նույնն են, ինչ ժողովրդավարացման ուղին ընտրած մյուս հետխորհրդային երկրներում (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա):

## **The Problems of Electoral Institute Effectiveness in Armenia**

EMIL ORDUKHANYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

In the Post-Soviet countries, the process of democratization does not happen smoothly, and it gives rise to various conflicts, rarely engaging consensual political processes. The electoral institute as one of necessary elements of the electoral political culture, plays a very important role in the formation of political process. Nowadays, the study of the democratization process, excluding electoral institute is impossible, because this institution is one of the main catalysts of democratization. From this perspective, in the context of political participation and political discourse, we examine the electoral processes in Armenia from 1991 to 2013, identifying the problems, the dynamics and the characteristics of the electoral institute in Armenia. The electoral institute in Armenia is not stable and has a conflict nature, mainly the political forces are personalized and have no ideological differences. All these processes have a negative impact on the functioning of the electoral institute, which is essential for the democratization and development of civil society. To improve the functioning of the electoral institute and to restore public confidence in it, except for legislative reforms that make power, we must also raise the level of political consciousness of the political forces and society.

## **Economy Versus Ecology: A Human Rights Perspective on the Proposed Copper Mine in Teghut, Armenia**

BENJAMIN JAMES BARNARD  
*Essex University, United Kingdom*

Received 25.08.2013

Accepted 27.11.2013

*This paper explores the concerns raised regarding the proposed copper and molybdenum mine in Teghut, Armenia from a human rights perspective. It aims to assert that a human-rights-based morality is the most universally-accepted global morality, and thus the one which may be most justifiably used by outsiders to judge the actions of other cultures. It examines which of the complaints against the proposed mine can be upheld due to their status as human rights violations. More importantly, however, it aims to explain why supporters of a human-rights-based morality must reject some of the more obvious and seemingly valid criticisms of the mine. In doing so, the paper aims to highlight a potentially catastrophic flaw in the logic of the human rights doctrine which may well prevent its supporters from adequately combatting climate change.*

### **Key words**

Ecology, human rights protection, morality, climate change, Teghut

### **Introduction**

In recent years, Armenia has witnessed the emergence of a large, passionate, and organised environmental movement, protesting against all manner of state-sanctioned constructions - from hydro-power stations on waterfalls to shops in parks – with varying levels of success. The phenomenon raises many issues surrounding democracy, freedom of speech, and corruption. Most of all, it highlights a clash of interests between today's economic needs and tomorrow's ecological requirements; a clash which is becoming more and more common throughout the developing world. As Humphreys notes,

More than any previous issue, climate change places the question of human rights fulfilment firmly within the context of development policy. This is because tackling climate change will require revisiting development models and making far-reaching decisions



about access to the use of resources, questions which in turn have direct human rights consequences<sup>1</sup>.

The proposed copper and molybdenum mine in Teghut represents an intriguing microcosm of just such an issue. While the employment opportunities the mine will create within a desperately impoverished rural community will prove invaluable to local residents, environmentalists fear that the ecological damage caused to the site will be devastating for both the environment and its inhabitants (human and otherwise) for decades to come. It is a scenario which raises complex ethical issues surrounding the moral status of non-human creatures and the moral weight held by future persons. Such issues will be difficult to pass judgement upon, particularly for those who remain unaffected by the poverty that apparently necessitates the aforementioned ecological damage. If we are to judge the actions of others at all, we must judge them against some sort of pre-defined standards. Adopting the standards of human rights as our moral yardstick enables such judgements to be made on the basis of standards that the Armenian government is already bound by. Moreover, in addition to highlighting the most important ethical issues with the proposed mine, a human-right-based approach to the problem will also help to demonstrate the limitations of the doctrine that many hold so dear.

## Disclaimer

Before going any further, it should be noted that, although great effort has been taken to verify all sources used within this paper, some of the standards of evidence are not of the highest level. While every attempt has been made to refer to the most up-to-date and respected academic and scientific sources, this has simply not always been possible with regard to some of the Armenia-specific information which follows. As such, the information available from texts has been supplemented with a series of interviews with experts in the Armenian environmental field, including: Jeff Masarjian and Armine Tokhmakhyan of Armenia Tree Project (ATP), and Kirk Wallace of Armenian Environmental Network (AEN).

This problem of limited academic resources is itself demonstrative of an initial discrepancy between the developed and the developing when it comes to climate change. As *The Stern Report* notes; “All countries will be affected by climate change, but the poorest countries will suffer earliest and

---

<sup>1</sup> **Humphreys S.**, Introduction: Human Rights and Climate Change, *Humphreys S., Human Rights and Climate Change*, Cambridge University Press, Cambridge, 2010, p.11

most.”<sup>2</sup> Despite this fact (or, indeed, as a partial explanation of it), information on how climate change will affect (and, indeed, *is* affecting) human rights is much less available in relation to developing countries, which often lack the necessary resources to carry out such research<sup>3</sup>. This leaves their citizens vulnerable to the serious human rights violations which will result from climate change since, even if developing countries did have the resources necessary to mitigate against such problems, they have no way of identifying what such problems will be. It is not surprising that this issue, which is pervasive throughout the developing world, affects Armenia. One example of this is demonstrated in a 2009 report published by the government’s Ministry of Nature Protection, which highlights the fact that “(t)here is no Armenian-specific research available that forecasts the scale of the likely increase in incidence of water-borne diseases with climate change.”<sup>4</sup>

### Why a Human Rights Perspective?

One of the major problems with judging the practices of any culture as an outsider is that ‘morality’ is not a universal concept. Cultural practices which are the norm in one country may be considered abhorrent in the next. For example, while many in the West would consider the killing of a cow to eat at a community barbecue unremarkable, such a practice would be considered reprehensible by many in India.

This problem of locating a universal morality is further amplified by the vast disparities in wealth which are witnessed throughout the globe. There doubtlessly exist certain scenarios which people of all cultures find unacceptable, but where approaches to combatting such issues vary greatly. No child deserves to perish from malaria, yet while the majority of countries have devoted great resources to eradicating the disease within their territory, many African children do not receive even a minimum level of preventative care. This difference in approach does not speak of a difference of opinion over the value of human life, but of a difference in resources. The fact is that tough decisions will need to be made more often in developing countries – leading to policies that many in the West might find unacceptable.

<sup>2</sup> **Osborne H.**, *Stern Report: The Key Points*, (guardian.co.uk, 30/10/2006)

Available at: <http://www.guardian.co.uk/politics/2006/oct/30/economy.uk> (Accessed Online, March 2012)

<sup>3</sup> **Humphreys S.**, ..., p.17

<sup>4</sup> Ministry of Nature Protection of the Republic of Armenia, *Vulnerability of Water Resources in the Republic of Armenia Under Climate Change*, Yerevan, 2009, p.12

As Griffin asserts, “(t)he belief is widespread that human rights mark what is most important in morality”.<sup>5</sup> The doctrine represents a value system that crosses cultures, religions, and national borders. It is the closest thing to a universal morality that humanity has ever had. If we cannot judge the behaviours of others by the standards of human rights, it is difficult to see how we can judge them at all.

Perhaps more importantly, Armenia has ratified many international human rights treaties, including the two major 1966 treaties – the International Covenant on Civil and Political Rights (ICCPR) and the International Covenant on Economic, Social, and Cultural Rights (ICESCR). As such, its government has accepted that it holds certain duties in relation to human rights; duties which have been enshrined in law and which the international community have a responsibility to ensure are met. As such, if the environmentalists who oppose the situation in Teghut could demonstrate that the government’s activities in the area amount to a violation of human rights, their demands for the cessation of such activities would carry great moral and legal weight.

## The Logic and Structure of Human Rights

It is important to bear in mind a general idea of the way in which human rights are structured before considering whether they have been violated.

The first thing to note is that the concept of human rights is a fundamentally non-legal one.<sup>6</sup> While there may be good reasons for seeking to encode them in law, such a condition is neither necessary nor sufficient to demonstrate their existence. This is not to say that the law is unimportant, particularly in the case of Teghut. Firstly, as I have already mentioned, the fact that the Armenian government has signed up to many human rights treaties adds weight to the legitimacy of judging its actions in accordance with the basic moral standards of human rights which underline such treaties. Secondly, there exists a widely held opinion among environmentalists that the proposed mine is in violation of the law.<sup>7</sup> Regardless of the content of such laws, there is a human right that the law should be consistently and fairly followed by everybody, and upheld by the government. It is for this reason that I highlight the significance of the legal

<sup>5</sup> **Griffin J.**, *On Human Rights*, Oxford University Press, Oxford, 2008, p.92

<sup>6</sup> **Jones P.**, *Rights*, Macmillan Press Ltd, London, 1994, p.82

<sup>7</sup> In the opinion of Socio-Ecological Association President, Srбуhi Harutyunyan, the operation in Teghut is currently in violation of seventy-seven different articles of law, *Copper Mine Menaces Armenia's Teghut Fores*), Available at: <http://www.ens-newswire.com/ens/jul2007/2007-07-11-01.asp> (Accessed online March 2012)

issues surrounding the mine. This paper, however, focusses upon the moral logic of the human rights doctrine. As such, the specific issue of the mine's legality will not be discussed.

Չինաստան, Մերձավոր Արևելք, <<արաբական գարուն>>, նոր աշխարհակարգ, նոր քաղաքականություն

#### **Չինաստանի տեղն արաբական աշխարհում մինչ «արաբական գարուն» մեկնարկը**

Տարածաշրջանում Պեկինի գլխավոր մրցակիցն ԱՄՆ-ն է, ինչն ինքնին պայմանավորում է ՉԺՀ-ի մերձավորարևելյան քաղաքականության բովանդակությունն ու բնույթը։ Ինդիրն այն է, որ ՉԺՀ-ն իր արագ աճող տնտեսության համար պահանջվող նավթային պահանջարկի 50%-ը, հակառակ էներգիայի ներկրման աղբյուրների տարրորշման ուղղությամբ գործադրած ջանքերին, ապահովում է ՄԱ-ից ներկրվող նավթի հաշվին, որի միայն 30%-ը՝ Իրանից և Սաուդյան

Արաբիայից<sup>1</sup>: Միջազգային էներգետիկ գործակալության համաձայն, ԶԺՀ-ը ներկայիս 50%-ի փոխարեն իր նավթի պահանջարկի 70%-ը 2015թ. կներկրի այլ, հատկապես ՄԱ-ի երկրներից<sup>2</sup>: Հետևաբար, ՄԱ-ի երկրների էներգետիկ հատվածում չինական նավթային ընկերությունների համար ամուր դիրքերի ապահովումը ԶԺՀ-ի մերձավորարևելյան քաղաքականության գերակա ուղղությունն է<sup>3</sup>:

Սակայն Չինաստանի էներգետիկ «մեծ պահանջարկն» ԱՄՆ-ի, ինչպես նաեւ Արեւմուտքի այլ երկրների կողմից սպառնալիք է դիտվում համաշխարհային էներգետիկ շուկայի կայունությանն ու գլոբալ նավթագազային աշխարհաքաղաքական հավասարակշռությանը, այսինքն՝ մեծ քանակությամբ էներգիա սպառող երկրների կենսական շահերին<sup>4</sup>: Ավելին, Չինաստանի տնտեսության դինամիկ աճը նավթի գների բարձրացման, էներգետիկ պաշարների համար մղվող պայքարի սրման, շրջակա միջավայրի աղտոտման եւ գլոբալ տաքացման պատճառ է համարվում<sup>5</sup>:

Հարկ է նկատել, որ Չինաստանը միակն է ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամներից, որը սերտ գործընկերային հարաբերություններ ունի մի կողմից՝ ՄԱ-ում ԱՄՆ-ի ավանդական գործընկերների՝ արաբական չափավոր վարչախմբեր ունեցող Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Քաթարի, ԱՄԷ-ի, Օմանի և այլ երկրների հետ, մյուս կողմից՝ Վաշինգտոնի հետ "բարդ հարաբերություններ" ունեցող երկրների՝ Սիրիայի, Սուդանի, Լիբիայի, Իրաքի եւ Իրանի հետ<sup>6</sup>: Պեկինն էներգետիկ և առևտրատնտեսական շահեր ունի նաև ՀԱ-ի արաբական երկրներում<sup>7</sup>: ԶԺՀ-ի և այդ երկրների միջև քաղաքական, տնտեսական,

<sup>1</sup> **Li Weijian**, Energy of the Middle East and Peaceful Rise, International Energy Security and Cooperation, SIIS, Shanghai, June 24-25, 2004, p. 121; **Bhadrakumar M.K.**, China Becomes Increasingly Involved in the Middle East, Power and Interest News Report, 10.03.2006.

[http://www.pinr.com/report.php?ac=view\\_report&report\\_id=455&language\\_id=1](http://www.pinr.com/report.php?ac=view_report&report_id=455&language_id=1)

<sup>2</sup> **Lee Hudson Teslik**, What are the Implications of a Reemerging "Silk Road"? The Council On Foreign Relations, A, 04.06.2008. <http://www.cfr.org/publication/16398/>

<sup>3</sup> **Blumenthal D.**, Providing Arms China and the Middle East, *The Middle East Quarterly*, 2005, XII, 2, Spring. <http://www.meforum.org/article/695>

<sup>4</sup> **Zhao Hongtu**, New Features of Int'l Energy Security Situation, *Contemporary International Relations, Beijing*, 2005, 15, 7, 23-35.

<sup>5</sup> **Ma Zhengang**, China's Responsibility and the "China Responsibility" Theory, *China International Studies*, 2007, Summer, 7-8.

<sup>6</sup> **Guang Pan**, China's Success in the Middle East, *The Middle East Quarterly*, 1997, IV, 4, December. <http://www.meforum.org/373/chinas-success-in-the-middle-east>

<sup>7</sup> **Shinn David H.**, North African Revolutions and Protests Challenge Chinese Diplomacy, *China Brief*, Vol.: XI, Issue 6, The Jamestown Foundation, 08.04.2011, p. 2, [http://www.jamestown.org/uploads/media/cb\\_11\\_6\\_01.pdf](http://www.jamestown.org/uploads/media/cb_11_6_01.pdf)

գիտամշակութային, տեխնոլոգիական, հատկապես էներգետիկ ոլորտներում հաստատված սերտ համագործակցությունը նպաստում է ՉԺՀ-ի համար ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջանում վերջինիս ներկայության ու ազդեցության ընդլայնմանը<sup>8</sup>:

ՄԱ-ի երկրների զգալի մասը, թե՛ ԱՄՆ-ի դաշնակիցները, եւ թե՛ վերջինիս հետ "բարդ հարաբերություններ" ունեցող երկրները, Չինաստանին դիտում են տարածաշրջանում Վաշինգտոնի ազդեցությանը հակազդող գործոն: Վերջիններս Պեկինի հետ կիսում են ԱՄՆ-ի գլոբալ տիրապետությունը եւ իրենց ներքին գործերին Արեւմուտքի միջամտությունը սահմանափակելու ընդհանուր ցանկությունը, հատկապես այնպիսի հիմնախնդիրներում, ինչպիսին մարդու իրավունքների խախտումների մեջ մեղադրանքներն են<sup>9</sup>: Պեկինը պատրաստ է աջակցել այդ երկրների տնտեսությունների ազատականացման հետ կապված գործընթացներին՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով շրջանցել ԱՄՆ-ի ճնշումները քաղաքական բարեփոխումների իրականացման ուղղությամբ<sup>10</sup>: Պեկինը կիսում է արաբական աշխարհի ժողովրդավարացումն ու անհրաժեշտ բարեփոխումները սեփական նախաձեռնությամբ եւ իսլամական քաղաքակրթության վրա հիմնված արժեհամակարգերին, իրողություններին եւ ազգային շահերին համապատասխան իրականացնելու ուղղությամբ արաբական վարչախմբերի զբաղեցրած դիրքորոշումը<sup>11</sup>:

ՉԺՀ-ը ձգտում է տարածաշրջանի հետ հարաբերություններ զարգացնել ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ դիվանագիտական ձեւաչափով՝ արաբական պետությունների հետ համագործակցելով Չին-

<sup>8</sup> **Lei Wu and Youyong Wang**, Comparative Analysis of China's Energy Activities in the Middle East and Africa, *Journal of Middle Eastern and Islamic Studies* (in Asia), Shanghai International Studies University, 2009, 3, 1, 50-61.

<http://mideast.shisu.edu.cn/picture/article/33/b7/b8/aca1fbd24175a68760eeb598408c/0252f54e-4ffc-4acd-8248-ebbb1b6ec13e.pdf>

<sup>9</sup> The Sino-Saudi Energy Rapprochement: Implications for U.S. National Security, The Gracia Group, New York, 08.01.2002, p. 2.

<http://large.stanford.edu/publications/coal/references/baker/testimony/docs/SinoSaudiStudyFinal.pdf>

<sup>10</sup> **Calabrese J.**, Saudi Arabia and China Extended Ties Beyond Oil, China Brief, Vol.: 5, Issue 20, The Jamestown Foundation, 31.12.2005, p. 3.

[http://www.jamestown.org/programs/chinabrief/single/?tx\\_ttnews\[tt\\_news\]=3895&tx\\_ttnews\[backPid\]=195&no\\_cache=1#UbmYDthtbXQ](http://www.jamestown.org/programs/chinabrief/single/?tx_ttnews[tt_news]=3895&tx_ttnews[backPid]=195&no_cache=1#UbmYDthtbXQ)

<sup>11</sup> **Yao Kuangyi**, Arab Countries; Reform and Development of China-Arab Relations, China International Studies, CIIS, Beijing, Winter 2005, p. 90-92.



արաբական համագործակցության համաժողովի<sup>12</sup>, Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի և Չին-աֆրիկյան համագործակցության ֆորումի շրջանակներում: Չինաստանը կայուն երկկողմ հարաբերություններ է զարգացնում ոչ միայն տարածաշրջանի ռազմավարական նշանակություն ունեցող երկրների, այլ Չինաստանի համար էներգետիկ և ռազմավարական կարևորություն չներկայացնող երկրների հետ: Պեկինը ձգտում է ՄԱ-ում հնարավորինս ընդլայնել իր տնտեսական ներկայությունը տարածաշրջանի երկրների հետ առեւտրային կապերի զարգացման միջոցով: Չինաստանը շահագրգռված է ոչ միայն ՄԱ-ի երկրների տնտեսություններում հնարավորինս մեծ ներդրումներ իրականացնելու մեջ, ընդ որում՝ առանց քաղաքական նախապայմանների, այլև խրախուսում է սեփական տնտեսության մեջ մերձավորարեւելյան, հատկապես արաբական երկրների կողմից իրականացվող կապիտալ ներդրումները:

Պեկինն աստիճանաբար ընդլայնում է իր հնարավորությունները ոչ միայն իր մերձավորարեւելյան քաղաքականության ամրապնդման, այլև տարածաշրջանի քաղաքական գործընթացների վրա իր ազդեցության միջոցների ընտրության հարցում: 2000-ականների սկզբներից ի վեր Չինաստանը սերտ կապեր հաստատեց ՄԱ-ի առաջատար երկրների հետ՝ գլխավորապես իր երկարատև աշխարհաքաղաքական հավակնություններին հասնելու նպատակով<sup>13</sup>:

ԶԺՀ-ը նման քաղաքական և տնտեսական հաջողությունների է հասել նվազագույն ռեսուրսներով՝ միաժամանակ ձեռնպահ մնալով բարձր հռետորաբանությունից և ցուցադրական գործողություններից: 2011թ. սկզբից ի վեր ՀԱ-ում և ՄԱ-ում ծավալված իրադարձությունների պատճառները չին փորձագետներն իրենց նախնական գնահատականներում հիմնականում պայմանավորում էին ՀԱ-ի և ՄԱ-ի երկրների քաղաքական համակարգերով ու սոցիալական հակասություններով, ինչպես նաև տնտեսության և աշխատանքի զբաղվածության բարդ իրավիճակով, մշակութային ու կրոնական հիմնախնդիրներով, արտաքին միաջմտությամբ և այլ գործոններով: Չին փորձագետների համաձայն՝ այդ «պայթյունը» երկար ժամանակ կուտակված հին խնդիրների հետ մեկտեղ ի դերև հանեց

<sup>12</sup> Yao Kuangyi, ..., էջ 103:

<sup>13</sup> Mordechai Chaziza, The Arab Spring: Implications for Chinese Policy, The Global Research in International Affairs (GLORIA) Center, 04.08.2013, p. 74.  
<http://www.gloria-center.org/2013/08/the-arab-spring-implications-for-china-policy/>

տարածաշրջանում զարգացման մոդելի ձևափոխության միտումներն ու անխուսափելիությունը<sup>14</sup>:

Չինաստանը բախվեց արագ փոփոխվող զարգացումների հետ և ստիպված էր ըստ այդմ վերանայել իր արտաքին քաղաքականությունը: Սակայն Պեկինին մտահոգում էին ոչ միայն այդ երկրների հետ իր հարաբերությունների հեռանկարի հետ կապված խնդիրներն, այլև մերձավորարևելյան զարգացումների վարակիչ անդրադարձը սեփական երկրում<sup>15</sup>: Պեկինը մտավախություն ուներ, որ միջազգային հանրության կողմից արաբական երկրների նկատմամբ մարդասիրական ձևակերպումով միջամտության հնարավորությունը նախադեպ կծառայի հետագայում Չինաստանի ներքին գործերին միջամտելու համար<sup>16</sup>: Այդ պատճառով Պեկինի արձագանքը ծավալվող իրադարձություններին երկբաղադրիչ էր. անհապաղ միջոցներ ձեռնարկվեցին Չինաստանի ներսում հնարավոր զարգացումների կանխարգելման և ներքին կայունության ապահովման, ինչպես նաև արաբական աշխարհում իր աճող տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանության ու ԺԺՀ-ի հնարավոր տնտեսական կորուստների նվազեցման ուղղությամբ<sup>17</sup>:

ԺԺՀ-ի նախագահ Հու Չինթաոն 2011թ. փետրվարին նահանգային և նախարարական մակարդակի պաշտոնատար անձանց հետ հանդիպման ընթացքում պահանջեց լուծել «առկա խնդիրները (բնակարանային հարկերի, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման հետ կապված), որոնք կարող են վտանգել հասարակության ներդաշնակությունն ու կայունությունը», ժողովրդին առավել որակյալ սոցիալական ծառայություններ մատուցել և բարելավել համացանցի տեղեկատվության կառավարումը՝ «հասարակական կարծիքն ուղղորդելու

<sup>14</sup>Влияние беспорядков в ближневосточном регионе на Китай, 04.03.2011.

<http://russian.people.com.cn/31520/7308133.html>

<sup>15</sup> **Parello-Plesner J.**, China and the Arab Spring: External and Internal Consequences and Implications for EU-China Cooperation, Instituto Per Gli Studi Di Politica Internazionale, (ISPI), Analysis, No. 53, May 2011, p. 1.

[http://www.ispionline.it/it/documents/Analysis\\_53\\_2011.pdf](http://www.ispionline.it/it/documents/Analysis_53_2011.pdf)

<sup>16</sup> **Kandil A.**, China and the “Arab Spring”: A New Player in the Middle East? Brief N. 47, European Institute of the Mediterranean, 05.07.2012, p. 1.

<http://www.euromesco.net/images/briefs/euromescobrief47.pdf>

<sup>17</sup> **Jing-Dong Yuan**, The Arab Spring and China’s Evolving Middle East Policy, Arab Spring, Global Repercussions, *World Politics Review*, 20.12.2011, p. 8. [http://www.relooney.info/SI\\_FAO-Africa-2012/Africa\\_7.pdf](http://www.relooney.info/SI_FAO-Africa-2012/Africa_7.pdf); **Baker R.**, Dispatch: Middle East Unrest and China’s Resource Interests, Stratfor, 23.02.2011.

<http://www.stratfor.com/analysis/20110223-dispatch-middle-east-unrest-and-chinas-resource-interests#axzz2VYX7rMnB>

նպատակով»<sup>18</sup>: Խնդիրն այն է, որ համացանցի միջոցով երկրի բնակիչներին կոչ էր արվում իրականացնել «Համիկի հեղափոխություն»՝ իշխանություններին ներկայացնելով «սննդի, բնակապահովման, աշխատանքի, արդարության, ազատության, ժողովրդավարության, քաղաքական բարեփոխումների, բազմակուսակցական կառավարման և այլ» պահանջներ<sup>19</sup>:

Փետրվարին չին իրավապահները ստիպված եղան ցրել Չինաստանի մեկ տասնյակից ավելի քաղաքներում, այդ թվում՝ Պեկինում ու Շանհայում, չարտոնված ցույցերը, որոնց ընթացքում ձերբակալվեց հարյուրից ավելի ակտիվիստ: Իշխանությունները սահմանափակեցին զանգվածային բողոքներով համակված երկրներից ստացվող փողոցային ելույթների վերաբերյալ լրահոսքը<sup>20</sup>: Անկասկած, վերոնշյալ երկրների և չինացի ցուցարարների հնչեցրած դժգոհությունների միջև բազմաթիվ ընդհանրություններ կային, սակայն Պեկինին հաջողվեց խիստ վերահսկողություն սահմանել ՋԼՄ-երի, համացանցի և այլ ֆորումների նկատմամբ, ինչը բարդություններ ստեղծեց զանգվածային ցույցերի կազմակերպման համար<sup>21</sup>:

Ակնհայտորեն հորդորելով զանգվածներին չենթարկվել Արևմուտքի սադրանքներին, չինական հայտնի վերլուծական կենտրոնները հանդես եկան "Արևմտյան դավադրության վերաբերյալ նախազգուշացումներով, որի նպատակն է զարգացող Չինաստանի թուլացումը՝ գործի դնելով Վաշինգտոնի ռազմավարական լծակները՝ "արժեքային համակարգն ու փափուկ ուժը":

Անշուշտ, ՀԱ-ում ու ՄԱ-ում բողոքի ցույցերն ու հեղաշրջումները լուրջ փորձություն դարձան նաև Չինաստանի արտաքին քաղաքականության համար, որի հիմքում չմիջամտության հայեցակարգն էր<sup>22</sup>: Այդ սկզբունքը Պեկինը համարում է իր արտաքին քաղաքականության անկյունաքարը (ոչ միայն ՄԱ-ում)՝ այն համարելով գլխավոր երաշխիք տարածաշրջանային և գլոբալ կայունության պահպանման գործում՝ միաժամանակ մտքում ունենալով "Չինաստանի

<sup>18</sup> China Tries to Stamp out 'Jasmine Revolution', *The Washington Post*, 20.02.2011. <http://www.washingtontimes.com/news/2011/feb/20/china-tries-stamp-out-jasmine-revolution/>

<sup>19</sup> **Richmond J.**, Dispatch: China's 'Jasmine' Rallies, Stratfor, 28.02.2011. [#](http://www.stratfor.com/analysis/20110228-dispatch-chinas-jasmine-rallies)

<sup>20</sup> **Parello-Plesner J., ...**, էջ 2:

<sup>21</sup> **Jing-Dong Yuan**, ...

<sup>22</sup> African Revolutions Challenge Chinese Diplomacy, *Intelligence Quarterly*, 11.04.2011. <http://www.intelligencequarterly.com/2011/04/north-african-revolutions-challenge-chinese-diplomacy/>

ներքին գործերին չմիջամտության” իր պահանջները Թայվանի ու Տիբեթի հիմնախնդիրների առնչությամբ<sup>23</sup>:

Այդ պատճառով «արաբական գարնան» սկզբում Պեկինը հետամուտ էր իր ավանդական “նստիւր և սպասիւր” մարտավարությանը՝ ձգտելով հնարավորինս զերծ մնալ որևէ գնահատականից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին ուղղված հաշտություն կնքելու և խաղաղությունը վերականգնելու կոչերով: Պեկինը գերադասում էր հեռու մնալ ՄԱ-ի վերակազմավորման գործում որևէ ակտիվ դերակատարությունից և ԱՄՆ-ի հետ ուղիղ առնակատման հնարավորությունից: Միաժամանակ, Պեկինի նախնական պասիվությունը պայմանավորված էր ինչպես տարածաշրջանի հեռավորությամբ, այնպես էլ ընթացիկ գործընթացների վրա ներգործելու Պեկինի ոչ բավարար ներուժով<sup>24</sup>:

ՄԱ-ի և ՀԱ-ի իրադարձությունները Պեկինի համար դարձան միաժամանակ թե՛ մարտահրավեր, և թե՛ հնարավորություն՝ տարածաշրջանում սեփական դիրքերի պահպանման և ամրապնդման տեսանկյունից:

### **Չինաստանի արձագանքն «արաբական գարնան» մեկնարկին**

«Թունիսյան գարնան» սկզբում Պեկինը, ի տարբերություն Արևմուտքի, հիմնականում ձեռնպահ էր մնում որևէ մեկնաբանությունից և գնահատականից: Ավելին, հուզումների սկզբնական շրջանում խնդրին առանձնահատուկ ուշադրություն չդարձվեց՝ մասամբ երկրի զարգացումների վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայության պատճառով:

Թունիսից Բեն Ալիի հեռանալուց հետո պաշտոնական Պեկինը հայտարարեց, որ «Թունիսը Չինաստանի բարեկամն է: Չինաստանը մտահոգված է թունիսյան իրադարձություններով և հույս է հայտնում, որ երկրում կայունությունը հնարավորինս կարճ ժամկետում կվերականգնվի»<sup>25</sup>: Մարտի սկզբին Չինաստանի արտգաքին գործերի նախարարի տեղակալը ժամանեց Թունիս՝ նոր կառավարության հետ կապերի հաստատման և համագործակցության ամրապնդման

<sup>23</sup> Пахомова М., КНР: к вопросу о «политике невмешательства во внутренние дела», Политбюро, 09.10.2012. <http://www.inomnienie.ru/debate/11903/>

<sup>24</sup> Unease from Afar, The Brookings Institution, 18.11.2011.

<http://www.brookings.edu/research/articles/2011/11/18-arab-awakening-china-pollack>

<sup>25</sup> China Hopes Stability in Tunisia Restored: FM, *China Daily*, 15.01.2011.

[http://www.chinadaily.com.cn/imqq/china/2011-01/15/content\\_11868329.htm](http://www.chinadaily.com.cn/imqq/china/2011-01/15/content_11868329.htm);

նպատակով<sup>26</sup>: Պաշտոնական Պեկինը հանդես եկավ թունիսցի ժողովրդի ընտրությունը հարգելու և Թունիսի հետ ավանդական բարեկամական հարաբերությունները խորացնելու, ինչպես նաև Թունիսի հետագա զարգացման նպատակով 6 մլն ԱՄՆ դոլարի անվարձափառույց օգնություն տրամադրելու մտադրության վերաբերյալ հայտարարություններով<sup>27</sup>:

Պատասխան արձագանքը համարժեք էր և Չինաստանի համար միանգամայն բարենպաստ: 2012թ. հունիսի սկզբին Թունիսի վարչապետն իր չինացի գործընկերոջ հետ հանդիպման ընթացքում նշեց, որ Թունիսը միջազգային նոր իրավիճակում շատ ավելի է կարևորում Չինաստանի դերն ու երկու երկրների միջև ռազմավարական, փոխշահավետ և «խիստ փոխլրացնող» համագործակցությունը՝ միաժամանակ խոստանալով Թունիսում չինական ընկերությունների ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծել<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է **«Եգիպտական գարնան»** նկատմամբ պաշտոնական Պեկինի դիրքորոշմանը, ապա նախքան Եգիպտական ընդդիմության կողմից պետական հեղաշրջման իրականացումը, չինական մամուլը քննադատում էր Եգիպտոսի հակակառավարական ելույթները՝ դրանք որակելով իբրև “ավազակային փողոցային ժողովրդավարություն”<sup>29</sup>: Չինաստանը վստահություն էր հայտնում իրադրությունը սեփական ուժերով, առանց արտաքին միջամտության կարգավորելու Կահիրեի կարողության հանդեպ՝ միաժամանակ ակնկալելով, որ չին-եգիպտական հարաբերությունները չեն տուժի անկարգությունների հետևանքով<sup>30</sup>: Պեկինը քննադատում էր ԱՄՆ-ի ճնշամիջոցները Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի նկատմամբ՝ վերջինիս ստիպելով հեռանալ իշխանությունից<sup>31</sup>: Սակայն խնդիրը Մուբարաքի և իր վարչակազմի պաշտոնանկությունը չէր: Չինական իշխանությունները տարածաշրջանի զարգացող երկրների համար «արևմտյան ժողովրդավարական մոդելի» կիրառումն արդյունավետ չէին համարում: Չինական մամուլը գրում էր, որ ամերիկյան և եվրոպական

<sup>26</sup> China Respects Choice of Tunisian People, *China Daily*, 08.03.2011.  
[http://www.chinadaily.com.cn/china/2011-03/08/content\\_12134764.htm](http://www.chinadaily.com.cn/china/2011-03/08/content_12134764.htm)

<sup>27</sup> Xinhua News Agency, 07.03.2011.

<sup>28</sup> China, Tunisia Confident in Prospect of Bilateral Ties, 02.06.2012.  
[http://www.gov.cn/misc/2012-06/02/content\\_2151509.htm](http://www.gov.cn/misc/2012-06/02/content_2151509.htm)

<sup>29</sup> Bodeen C., China, Wary of Arab Spring, Hosts Egypt's Morsi, *The Jakarta Post*, 29.08.2012.  
<http://www.thejakartapost.com/news/2012/08/29/china-wary-arab-spring-hosts-egypts-morsi.html>

<sup>30</sup> Xinhua News Agency, 10.02.2011.

<sup>31</sup> Kandil A., ...

կառույցներն ու նորմերը չեն կարող համապատասխանել աֆրիկյան և մերձավորարևելյան իրականությանը, մանավանդ, որ «գունավոր հեղափոխությունները» երբևէ իրական ժողովրդավարության չեն հանգեցրել: Եգիպտոսում և հարևան երկրներում ժողովրդավարական ընտրությունների դեպքում հնարավոր էր դիտվում իսլամիստ առաջնորդների իշխանության գալու փաստը, որոնք ոչ միայն «արհամարհում են ամերիկյան ժողովրդավարությունն, այլև սպառնում դադարեցնել նավթային առաքումներն» ԱՄՆ: Մատնանշվում էր, որ Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո մուսուլմանական երկրներում գրեթե բոլոր ժողովրդավարական ընտրությունների արդյունքում իշխանության էին եկել Արևմուտքին և Իսրայելին թշնամաբար տրամադրված իսլամական վարչակարգեր<sup>32</sup>: Չինաստանն ի սկզբանե թերահավատությամբ էր վերաբերվում «արաբական գարնան» արդյունքում ՄԱԿ-ի ժողովրդավարացման հնարավորությանը, Պեկինին ավելի շատ մտահոգում էին իսլամի առավել արմատականացման հետ կապված գործընթացները<sup>33</sup>:

Մյուս կողմից, Պեկինում ենթադրում էին, որ «իսլամիստական ցենտրիզմը», պայքարելով Արևմուտքի կողմից «իսլամական սպառնալիքի» տեսության և ներքին ծայրահեղականության ու ահաբեկչության դեմ, կարող է իսլամի վերաբերյալ պատկերացումների վերանայման գործում դրական դեր խաղալ: Իսլամիստական կենտրոնամետ ուժերի ընդլայնումը, վերջիններիս վարած չափավոր և կուսակցական-քաղաքական ուղեգիծը որոշ իմաստով ցույց են տալիս, որ այս ուժերի գլխավոր խնդիրը ծայրահեղականությունից և կոշտ արմատականությունից հրաժարումն ու իրենց ազգային առանձնահատկություններին ու իրողություններին համապատասխան զարգացման նոր գաղափարների և ուղիների որոնումն ու իրագործումն է<sup>34</sup>:

Պեկինը չսահմանափակվեց զուտ հայտարարություններով, այլ արագ անցավ գործնական դիվանագիտության: Չին բարձրաստիճան

<sup>32</sup> **Lam W.**, Beijing Wary of “Color Revolutions” Sweeping Middle East/North Africa, China Brief, Vol.: XI, Issue 3, The Jamestown Foundation, 10.02.2011, pp. 2-3. [http://www.jamestown.org/uploads/media/cb\\_11\\_3\\_04.pdf](http://www.jamestown.org/uploads/media/cb_11_3_04.pdf)

<sup>33</sup> **Shichor Yitzhak**, Storm in a (Jasmine) Teacup: China’s Response to the Middle East Upheavals, Paper prepared for the German Marshal Fund’s China Forum, Stockholm, 09.06.2011, p. 3.

<sup>34</sup> **Yao Kuangyi**, The Upheaval in the Middle East and China’s Middle East Policy, *Journal of Middle Eastern and Islamic Studies* (In Asia), Shanghai International Studies University, 2012, 6, 3, 5-14. <http://mideast.shisu.edu.cn/picture/article/33/5e/9c/9fc0f54c4453bbeca59f4f718aa2/3c548194-582d-4ce6-8b55-268a5eaebea8.pdf>

դիվանագետները 2011թ. մարտին և 2012թ. մայիսին արդյունավետ այցեր կատարեցին մի շարք արաբական երկրներ (Ալժիր, Թունիս և Սաուդյան Արաբիա), այդ թվում՝ Եգիպտոս: Պեկինը Կահիրեին աջակցություն հայտնեց առաջիկա դժվարությունների հաղթահարման գործում<sup>35</sup>, միաժամանակ ընդգծելով Եգիպտական զարգացումների ընթացքում Չինաստանի դրսևորած չմիջամտության քաղաքականությունը<sup>36</sup>: Պեկինը շնորհավորեց Մուհամմեդ Մուրսիին՝ Եգիպտոսի նախագահի պաշտոնում ընտրվելու, իսկ Եգիպտոսի ժողովրդին ՉԺՀ-ի հարգանքն արտահայտեց՝ ինքնուրույն ընտրություն կատարելու կապակցությամբ<sup>37</sup>:

2012թ. օգոստոսի վերջին Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսիի՝ ՉԺՀ կատարած այցը երկու երկրների միջև հարաբերությունների վերահաստատման լավագույն առիթ ծառայեց<sup>38</sup>: Հատկանշական էր, որ միայն ՉԺՀ այցից հետո էր Եգիպտոսի նախագահը պատրաստվում այցելել ԱՄՆ՝ Նյու Յորք և Վաշինգտոն՝ ՄԱԿ-ի ԳԱ-ի նստաշրջանին մասնակցելու և ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ բանակցություններ վարելու նպատակով<sup>39</sup>: Սա նախագահական պաշտոնը ստանձնելուց հետո Մ.Մուրսիի առաջին պետական այցն էր ՄԱ-ի և Աֆրիկայի շրջանակներից դուրս, որով ընդգծվում էր Եգիպտոսի համար Չինաստանի կարևորությունն իբրև ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամի և ռազմավարական գործընկերոջ, ինչպես նաև իբրև առևտրային գլխավոր գործընկերոջ ու ներդրումային կենսական աղբյուրի: Այցը դիտվում էր նաև իբրև ԱՄՆ-ի ուղղությամբ խիստ սևեռումից Եգիպտոսի արտաքին քաղաքականության վերակողմնորոշում դեպի ՉԺՀ<sup>40</sup>: Ըստ չինական պաշտոնական մամուլի, Եգիպտական կողմը ցանկանում էր վերանայել Արևմուտքից չափազանց կախման մեջ գտնվող իր արտաքին քաղաքականությունը, և Արևելքի ու Արևմուտքի հետ հարաբերություններում հավասարակշռված մոտեցում

<sup>35</sup> Очередная пресс-конференция 10 марта 2011 г. у официального представителя МИД КНР Цзян Юй, Посольство Китайской Народной Республики в Республике Армения, 10.03.2011.

<http://am.chineseembassy.org/rus/ztlm/fyrth/t806056.htm>

<sup>36</sup> Пахомова М., ...

<sup>37</sup> Очередная пресс-конференция 25 июня 2012 г. у официального представителя МИД КНР Хун Лэя, МИД КНР, 25.06.2012. <http://www.fmprc.gov.cn/rus/xwfw/fyrth/lxjzhzhdh/t945889.shtml>

<sup>38</sup> Китай предложил Египту программу развития отношений между странами, РИА Новости, 28.08.2012.

<http://ria.ru/world/20120828/732406506-print.html?ria=022j2vaa411rvpne6b5humapudfh5d1g>

<sup>39</sup> Президент Египта М. Мурси 23 сентября совершит визит в США, Жэньминь Жибао, 23.08.2012. <http://russian.people.com.cn/31520/7920893.html>

<sup>40</sup> Bodeen Ch., ...

դրսևորել: ՉԺՀ-ը որակելով որպես աշխարհում հավասարակշռություն ապահովող կարևոր երկիր, Մ.Մուսին գտնում էր, որ այն չափազանց կարևոր դեր է խաղում միջազգային հանրության ուշադրության կենտրոնում գտնվող սիրիական ճգնաժամի և այլ խնդիրների կարգավորման գործում<sup>41</sup>: Երկու երկրներն անընդունելի համարեցին Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտությունը<sup>42</sup>, հակառակ Եգիպտոսի կողմից սիրիական իշխանությունների խիստ քննադատության ու նախագահական պաշտոնից Բաշար ալ-Ասադի հրաժարման օգտին հանդես գալու փաստին<sup>43</sup>: Չինաստանն անվանելով «լավ եղբայր, բարեկամ և գործընկեր», Մուսին նշեց, որ Եգիպտոսը «գնահատում և հարգում է ՉԺՀ-ի արդար դիրքորոշումը տարածաշրջանային և միջազգային լուրջ խնդիրների նկատմամբ և պատրաստ է տարբեր մարտահրավերների դիմակայման նպատակով ամրապնդել կապերն ու համակենտրոնացնել ջանքերը չինական կողմի հետ»<sup>44</sup>: «China Daily» կառավարական օրաթերթն անգամ գրեց, որ «Մ.Մուսիի չինական այցը կարող է փոխել ՄԱ-ի քաղաքական լանդշաֆտը»<sup>45</sup>:

Ըստ եգիպտական ՋԼՄ-ների՝ Մուսիի այցի հիմնական նպատակն էր Եգիպտոսում չինական ներդրումների ավելացումն ու ներգրավումը: Իբրև համաշխարհային տնտեսության երկրորդ սուբյեկտ, Չինաստանը կարող էր Մուսիի կառավարությանն օգնել կենսագործելու երկրի «վերածննդի ծրագիրը»<sup>46</sup>: Կողմերը գյուղատնտեսության, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, շրջակա միջավայրի և այլ ոլորտների վերաբերալ 8 պայմանագիր ստորագրեցին<sup>47</sup>: Ընդհանուր առմամբ ստորագրվեց 4,9 մլրդ ԱՄՆ դոլարի չինական վարկերի և ներդրումների, այդ թվում՝ Վերին Եգիպտոսում էլեկտրակայանի և «Կահիրե-Ալեքսանդրիա» արագընթաց մայրուղու կառուցման վերաբերյալ մի շարք պայմանագրեր: Նշենք, որ Եգիպտոսին տրամադրվելիք

<sup>41</sup> Комментарий: Визит М. Мурси в КНР открывает новую страницу в китайско-египетских отношениях, *Жэньминь Жибао*, 29.08.2012.

<http://russian.people.com.cn/31520/7927350.html>

<sup>42</sup> Bodeen Ch, ...

<sup>43</sup> Egyptian President Hails «Syrian Revolution» in Tehran Non-Aligned Summit, *Al-Arabiya News*, 30.08.2012.

<http://english.alarabiya.net/articles/2012/08/30/235082.html>

<sup>44</sup> Китай...

<sup>45</sup> Подкопаева М., Египет между США и Китаем, *Dao Ke Dao*, 29.01.13.

<http://www.daokedao.ru/2013/01/28/egipet-mezhdu-ssha-i-kitaem/>

<sup>46</sup> Комментарий: ...

<sup>47</sup> Bodeen Ch., ...



չինական օգնությունն ընդհանուր առմամբ գնահատվում էր 2 մլրդ ԱՄՆ դոլար, որի մեջ մտնում էր 450 մլն չինական յուան (70 մլն ԱՄՆ դոլարին համարժեք)՝ որպես անհատույց օգնություն և Եգիպտոսի Ազգային Բանկին տրամադրվող 200 մլն ԱՄՆ դոլարի արտոնյալ վարկ<sup>48</sup>:

Ուշագրավ է, որ Չինաստանից Մ.Մուրսիի վերադառնալուց հետո ԱՄՆ-ի նախագահ Բ.Օբամայի հետ Եգիպտոսի նախագահի՝ սեպտեմբերին նախատեսվող հանդիպումը չկայացավ: Մինչ այդ, միջազգային լրատվամիջոցներում քննարկվում էր Եգիպտոսին 1 մլրդ ԱՄՆ դոլար պարտքի մարման ԱՄՆ-ի մտադրության հարցը: Սակայն ԱՄՆ-ը հայտարարեց Եգիպտոսի պարտքերի մարման կամ ֆինանսական այլ օգնություն հատկացնելու մտադրությունից Վաշինգտոնի հրաժարվելու մասին<sup>49</sup>:

Փաստորեն Եգիպտոսում ԱՄՆ-ի հանդեպ ոչ բարյացակամ տրամադրված իսլամիստների իշխանության գալու հետ կապված չին փորձագետների նախնական կանխատեսումներն ու նախազգուշացումներն անհիմն չէին: Մինչդեռ Եգիպտոսի հետ ՉԺՀ-ի հարաբերությունների ամրապնդման գործընթացը ոչ միայն չկասեցվեց «արաբական գարնան» հետևանքով, այլ առավել խորացման միտումներ դրևորեց: Չին փորձագետները գտնում էին, որ եկել է ՄԱ-ում «նախկին, չափազանց խաղաղ և «փափուկ քաղաքականությունը» վերանայելու ժամանակը»: Վերջիններիս համաձայն՝ ՉԺՀ-ը պետք է վերաճակերպի իր եգիպտական քաղաքականությունը և ԱՄՆ-ին երկրից դուրս մղի՝ եգիպտական իսլամիստներին ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով: Եվ եթե դա ՉԺՀ-ին հաջողվի, ապա «եգիպտական մողելն» արաբական արևելքում չինական քաղաքականության համար կարող է դառնալ ունիվերսալ<sup>50</sup>: Այս առումով միանգամայն ուշագրավ են ՉԺՀ կատարած այցի ընթացքում Եգիպտոսի նախագահի խոսքերն՝ ուղղված չինացի իր գործընկերներին. «Եթե դուք պաշտպանեք մեր շահերը, մենք կպաշտպանենք՝ ձերը...»<sup>51</sup>:

Արևմտյան փորձագետների մի մասը հակված է այն մտքին, որ Չինաստանը կփորձի «տարածաշրջանում գործողությունների ազատություն» ձեռք բերել ոչ միայն հին ու նոր գործընկերների, այլև ՄԱ-

<sup>48</sup> **Лузянин С.**, Политика Китая на Ближнем Востоке: "накормить волков и сохранить овец", *Голос России*, 7.12.2012. [http://rus.ruvr.ru/2012\\_12\\_17/Politika-Kitaja-na-Blizhnem-Vostoke-nakormit-volkov-i-sohranit-ovec/](http://rus.ruvr.ru/2012_12_17/Politika-Kitaja-na-Blizhnem-Vostoke-nakormit-volkov-i-sohranit-ovec/).

<sup>49</sup> **Подкопаева М.**, ...

<sup>50</sup> **Лузянин С.**, ...

<sup>51</sup> **Chen J.**, The Emergence of China in the Middle East, The Center for Strategic Research, The Institute for National Strategic Studies, SF No. 271, December 2011, p. 6. <http://www.ndu.edu/press/lib/pdf/StrForum/SF-271.pdf>

ի գործերում Իրանին ակտիվ ներգրավելու հաշվին: Դժվար է գնահատել, թե ինչքան իրական է ԱՄՆ-ի դեմ իրանաեզիպատական տանդեմի ձևավորման հնարավորությունը, սակայն նման փորձերը չեն կարող աննկատ մնալ Վաշինգտոնում: Այնուհանդերձ, եթե Չինաստանի ձեռքին բավականաչափ միջոցներ կան ՄԱ-ում և ՀԱ-ում իր ռազմավարական դիրքերի ամրապնդման համար, ապա ԱՄՆ-ի ձեռքին էլ բավականաչափ ռեսուրսներ կան տարածաշրջանի ապակայունացման համար:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Պեկին կատարած այցից հետո 2012թ. օգոստոսին Եգիպտոսի նախագահ Մուսիին Թեհրանում մասնակցեց «Չմիացման շարժմանը» նվիրված գագաթնաժողովին, որն ԻԻՀ-ի հիմնադրումից և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո Եգիպտոսի առաջնորդի առաջին այցն էր Իրան<sup>52</sup>: Իր հերթին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադն Իրանի առաջին նախագահն էր, որն ԻԻՀ-ի հիմնադրումից հետո առաջին անգամ այցելեց Եգիպտոս և 2013թ. փետրվարին մասնակցեց Իսլամական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովին<sup>53</sup>:

Չի բացառվում, որ Պեկինը կօգտագործի եգիպտաամերիկյան հարաբերությունների լարվածության և եգիպտական կառավարության արտաքին քաղաքականության վերանայման ձգտումները՝ «տարածաշրջանում իր դիրքերի առավել ամրապնդման և գործողությունների ազատության» ձեռք բերման նպատակով: Դրան կարող է նպաստել ՄԱ-ում և ՀԱ-ում ՉԺՀ-ի ռազմավարական շահերի տեսնակյունից ստեղծված բարենպաստ միջավայրը: Խնդիրն այն է, որ ՄԱ-ի ավտորիտար վարչակարգերը, Մութարաբի ճակատագրին ականատես լինելուց և իրենց իշխանությունը պահպանելու ուղղությամբ ԱՄՆ-ի տված խոստումների հանդեպ վստահությունը կորցնելուց հետո այսուհետ «խաղաղույքներ կարող են կատարել» հօգուտ Պեկինի՝ առավել խորացնելով վերջինիս հետ համագործակցությունը<sup>54</sup>:

<sup>52</sup> После 30-летнего разрыва дипотношений иранский президент впервые прибыл в Египет с визитом, Жэньминь Жибао, 06.02.2013.

<http://russian.people.com.cn/31519/8123732.html>

<sup>53</sup> **Qin Zhongwei**, Iran and Egypt in Landmark Meeting, *China Daily*, 04.02.2013. [http://www.chinadaily.com.cn/world/2013-02/04/content\\_16197104.htm](http://www.chinadaily.com.cn/world/2013-02/04/content_16197104.htm)

<sup>54</sup> **Mordechai Chaziza**,...

**«Լիբիական գարուն». մարտահրավեր ԶԺՀ-ի չմիջամտության քաղաքականությանը**

Լիբիան “արաբական գարնան” հորձանուտում հայտնված հյուսիսաֆրիկյան հաջորդ պետությունն էր, որի հակակառավարական ելույթների սկզբնական շրջանում ԶԺՀ-ը փորձում էր ձեռնպահ մնալ որևէ գնահատականից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին ուղղված հաշտության հորդորներով, և, ի տարբերություն Արևմուտքի, չարտահայտվելով հոգուտ իշխանությունից Քադդաֆու հեռացման<sup>55</sup>:

Փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ն ընկած ժամանակահատվածում Պեկինը կազմակերպեց Լիբիայից ցամաքային, ծովային և օդային ուղիներով ԶԺՀ-ի մոտ 36.000 քաղաքացիների տարահանումը<sup>56</sup>: ԶԺՀ-ի պատմության մեջ առաջին անգամ էր Զինաստանի Ժողովրդական ազատագրական բանակի նավատորմի արագընթաց հաժանավը մուտք գործում Միջերկրականի ջրեր<sup>57</sup>, որը չինական ռազմական էքսպեդիցիոն հնարավորությունների համար կարևոր փորձություն էր:

ԶԺՀ-ը ստիպված եղավ հաղթահարել իր քաղաքացիներին աջակցելու և տարահանելու հետ կապված բազում խոչընդոտներ: Պեկինը դրանք կապում էր երկրում ստեղծված քաոսին վերջ դնելու ուղղությամբ Քադդաֆու անկարողության հետ, որի արդյունքում խախտվում էր Պեկինի սրբազույն սկզբունքը՝ կայունությունը<sup>58</sup>: Թերևս այդ պատճառով փետրվարի վերջին ԶԺՀ-ը ՄԱԿ-ի ԱԽ-ի մյուս անդամների հետ քվեարկեց հոգուտ 1970-րդ բանաձևի ընդունման, որով քաղաքացիական բնակչության պաշտպանություն, զենքի առաքման էմբարգո, ոչ-թռիչքային գոտի, թռիչքների արգելք և Լիբիայի ակտիվների սառեցում էր սահմանվում<sup>59</sup>: Իրականում Պեկինը հայտնվել էր պատժամիջոցներին դիմակայելու և Քադդաֆու կառավարության դեմ

<sup>55</sup> **Шекоян И.**, Китай подбирается к Ливии, *Коммерсантъ*, 02 (4643), 08.06.2011. <http://www.kommersant.ru/doc/1655949>

<sup>56</sup> Чудесная операция Китая по эвакуации своих граждан из Ливии получила одобрение широкой общественности, Жэньминь Жибао, 08.03.2011. <http://russian.people.com.cn/31521/7311410.html>

<sup>57</sup> **Collins G., Erickson Andrew S.**, Implications of China’s Military Evacuation of Citizens from Libya, China Brief, Vol.: 11, Issue: 4, The Jamestown Foundation, 10.03.2011, p. 8. [http://www.jamestown.org/uploads/media/cb\\_11\\_4.pdf](http://www.jamestown.org/uploads/media/cb_11_4.pdf)

<sup>58</sup> **Parello-Plesner J.**, Libya Shows China the Burdens of Being a Great Power, Economics, Politics and Public Policy in East Asia and the Pacific, East Asia Forum, 06.03.2011. <http://www.eastasiaforum.org/2011/03/06/libya-shows-china-the-burdens-of-being-a-great-power/>

<sup>59</sup> S/RES/1970 (2011), 26 февраля, Мир и безопасность в Африке, <http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html>

ավելի ակտիվ գործողություններ պահանջող Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) հետ իր դիրքորոշումը համաձայնեցնելու դժվարին երկրներանքի առջև<sup>60</sup>:

Չնայած Լիբիայի նկատմամբ օտարերկրյա միջամտության վերաբերյալ Պեկինի զբաղեցրած բացասական դիրքորոշմանը, ՉԺՀ-ը (ինչպես նաև Ռուսաստանը) մարտին չօգտագործեց իր վետոյի իրավունքը՝ կանխելու ՄԱԿ-ի ԱԽ-ի 1973-րդ բանաձևի ընդունումը<sup>61</sup>: Ըստ ՄԱԿ-ում ՉԺՀ-ի մշտական ներակայուցիչ և ԱԽ-ի մարտ ամսվա նախագահող Լի Բաոդոնի՝ Պեկինը թեև մտահոգված էր Լիբիայի իրադրության վատթարացման հարցում, հատկապես ոչ-թոփչքային գոտու էությունը բանաձևի հովանավորների կողմից ոչ բավարար չափով պարզաբանելու առիթով, այնուհանդերձ ՉԺՀ-ը հաշվի էր նստել Աֆրիկյան երկրների միության (ԱԵՄ) և Լիբիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանազնացի դիրքորոշումների հետ<sup>62</sup>: Սակայն, երբ մարտի վերջին ՉԺՀ-ի նախագահ Հու Չինթաոն բացահայտ քննադատեց Լիբիայում ՆԱՏՕ-ի գործողությունները, Արևմուտքում տպավորություն ստեղծվեց, որ ՉԺՀ-ն և Արևմուտքը գործնականում համակրում են Լիբիայի հակամարտության հակադիր ճամբարների<sup>63</sup>:

«Լիբիական գարնան» նկատմամբ Պեկինի պասիվ դիրքորոշումը քննադատության ենթարկվեց թե՛ Չինաստանում, և թե՛ արտերկրում: Ներսում այն կապված էր 1973-րդ բանաձևի ընդունմանը ձեռնպահ քվեարկելու հետ, որն, ըստ չին ազգայնականների, զիջում էր Արևմուտքին և Լիբիայի նկատմամբ ՆԱՏՕ-ական ռազմական գործողությունների իրականացման ուղի հարթեց: Միաժամանակ, այդ դիրքորոշումը շահարկումների առիթ դարձավ՝ Պեկինին մեղադրելով չմիջամտության սկզբունքից նահանջի մեջ: Միջազգային մակարդակում Արևմուտքն ու արաբական որոշ երկրներ Պեկինին մեղադրեցին Լիբիայի դեմ ռազմական գործողություններին չմիանալու մեջ՝ այն գնահատելով իբրև «անպատասխանատու երկրի» վարքագիծ<sup>64</sup>:

Ինչպես ներքին ու արտաքին մեղադրանքներն, այնպես էլ Քաղդաֆու հաղթանակի շուրջ աճող կասկածները Պեկինին ստիպեցին ակտիվացնել դիվանագիտությունն ու բանակցել ոչ միայն պաշտոնական

<sup>60</sup> **Zhang Yuwei, Ai Yang**, Libya Declares Cease-Fire after UN Resolutions Vote, *China Daily*, 19.03.2011, p. 8. [http://www.chinadaily.com.cn/cndy/2011-03/19/content\\_12195541.htm](http://www.chinadaily.com.cn/cndy/2011-03/19/content_12195541.htm)

<sup>61</sup> 17 марта Положение в Ливии, [S/RES/1973\(2011\),   
http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html](http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html)

<sup>62</sup> **Zhang Yuwei, Ai Yang**, ...

<sup>63</sup> **Габуев А.**, У Китая к Ливии дело на \$19 млрд, *Коммерсантъ*, 111 (4652), [22.06.2011](http://www.kommersant.ru/doc-rss/1664384). <http://www.kommersant.ru/doc-rss/1664384>

<sup>64</sup> **Kandil A.**, ..., p. 3.

Տրիպոլիի, այլև ընդդիմության հետ: Պեկինը ստանձնեց լիբիական հակամարտության միջնորդությունը և պաշտոնապես հայտարարեց իր խաղաղապահ հավակնությունների մասին՝ ակտիվ բանակցություններ սկսելով երկու կողմերի հետ միաժամանակ:

Տրիպոլիի և Բենգազիի հետ շփումների մակարդակով և «հաշտության բանակցություններին նպաստելու» գործում Պեկինը գերազանցեց մյուս պետություններին, այդ թվում լիբիական ճգնաժամի հաղթահարման հարցում պաշտոնական միջնորդի դեր ստանձնած ՌԴ-ին և ԱԵՄ-ին<sup>65</sup>: Խնդիրն այն է, որ Պեկինը, անկախ առճակատման ելքից, Լիբիայում իր գործարար շահերի պաշտպանության կարիքն ուներ և զգուշանում էր, որ լիբիական զարգացումները չինական գործարար շրջանակների համար տնտեսական անդառնալի կորուստների չհանգեցնեն: Չինաստանի ազգային նավթային ընկերությանը (CNPC) պատկանող նախագծերը իրականացվում էին Արևմուտքում՝ Քադդաֆիի զորքերի վերահսկողության ներքո, իսկ Լիբիայի Արևելքում չինական մասնակցությամբ մի շարք ենթակառուցվածքային նախագծեր հայտնվել էին ապստամբների վերահսկողության տակ: ՉԺՀ-ը պատրաստ էր չինական նախագծերի անվտանգության երաշխքների դիմաց Քադդաֆուն աջակցություն ապահովել ՄԱԿ-ի ԱԽ-ում, իսկ ապստամբներին՝ անհրաժեշտ ֆինանսական օգնություն տրամադրել<sup>66</sup>: Վերջիններիս աջակցելու դեպքում շահավետ պայմանագրերով փոխհատուցվելու ուղղությամբ տրված բազմաթիվ խոստումները ևս նպաստում էին, որպեսզի Պեկինը «նահանջի» իր չմիջամտության սկզբունքից<sup>67</sup>: Առավել ևս, որ Պեկինին դուր չէր եկել ընդդիմության դեմ «Տիանանմեն» կազմակերպելու ուղղությամբ Քադդաֆու հնչեցրած սպառնալիքները<sup>68</sup>: ՉԺՀ-ին չէր կարող չմտահոգել նաև երկրի էներգետիկ ոլորտը վերակառուցելու ուղղությամբ Անցումային ազգային խորհրդի (ԱԱԽ) հայտարարությունները, որոնց համաձայն՝ վերջինս մտադիր էր Քադդաֆու դաշնակից չինական և ռուսական էներգետիկ ընկերությունները փոխարինել ապստամբներին աջակցություն

<sup>65</sup> China Says Libya Rebels as Important Political Force, China Military Power Mashup, 22.06.2011. <http://www.china-defense-mashup.com/china-says-libya-rebels-as-important-political-force.html>

<sup>66</sup> Габуев А., ...

<sup>67</sup> Ливия: Китай пытается поладить и с мятежниками, и с Каддафи, RTKORR.com, 08.06.2011.

<http://www.rtkorr.com/news/2011/06/08/243487.new?ref=rss>

<sup>68</sup> Higgs A., For China, Relations with Libya a Balancing Act, *The Washington Post*, 26.08.2011. [http://www.washingtonpost.com/world/middle-east/libya-policy-a-balancing-act-for-china-as-moammar-gaddafis-rule-collapses/2011/08/26/gIQAnlKKgJ\\_story.html](http://www.washingtonpost.com/world/middle-east/libya-policy-a-balancing-act-for-china-as-moammar-gaddafis-rule-collapses/2011/08/26/gIQAnlKKgJ_story.html).

ցուցաբերած արևմտյան ընկերություններով<sup>69</sup>: Ավելին, սեպտեմբերի սկզբին, լիբիական ապստամբների զինվորական կոմիտեի ղեկավարը Պեկինին մեղադրեց Քադդաֆիի բանակին զենք մատակարարելու և Լիբիայի հաշիվների արգելափակումը կանխելու փորձերի մեջ<sup>70</sup>: Սակայն, ՉԺՀ-ի ԱԳՆ-ը հերքեց զինամթերքի վաճառքի, առավել ևս դրա՝ Լիբիա արտահանման վերաբերյալ որևէ պայմանագրի ստորագրման փաստ՝ ընդգծելով, որ Պեկինն ի սկզբանե, խստորեն հետևել է ՄԱԿ-ի ԱԽ-ի 1970-րդ և 1973-րդ բանաձևերին<sup>71</sup>:

Ամեն դեպքում, ՉԺՀ-ը սեպտեմբերի սկզբին դիտորդի կարգավիճակով մասնակցեց Փարիզում «Լիբիայի բարեկամների» համաժողովին<sup>72</sup>: Սեպտեմբերի 12-ին, Պեկինը պաշտոնապես ճանաչեց ԱԱԽ-ը՝ որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն և լիբիական ժողովրդի ներկայացուցիչ՝ ակնկալելով, որ նախկինում ստորագրված չին-լիբիական բոլոր համաձայնագրերը կմնան ուժի մեջ և բարեխղճորեն կիրառործվեն<sup>73</sup>: Պեկինը խոստացավ Լիբիայում խաղաղության և կայունության վերականգնման գործում աջակցել միջազգային հանրությանը<sup>74</sup>: ԱԱԽ-ի ճանաչումից անմիջապես հետո ՉԺՀ-ը ձեռնամուխ եղավ Լիբիայում իր դիրքերի ամրապնդմանը՝ աջակցություն առաջարկելով երկրի հետպատերազմյան վերականգնման գործին: Դեռևս հուլիսին Պեկինը հայտարարել էր Լիբիայի ժողովրդին 55 մլն ՉԺՀ յուանի (7.7 մլն ԱՄՆ դոլար) մարդասիրական օգնություն տրամադրելու իր որոշման մասին<sup>75</sup>:

<sup>69</sup> New Leaders May Expel Russia and China from Libyan Energy Sector, *World Tribune*, USA, 25.08.2011.

[http://www.worldtribune.com/worldtribune/WTARC/2011/me\\_libya10660825.asp](http://www.worldtribune.com/worldtribune/WTARC/2011/me_libya10660825.asp)

<sup>70</sup> Серова Н., Китайская перестройка потрясет мир, *Центр Азия*, 08.09.2011. <http://www.centrasia.ru/newsA.php?st=1315455420>

<sup>71</sup> Китайская сторона не экспортировала в Ливию военную продукцию-официальный представитель МИД-а, *Жэньминь Жибао*, 06.09.2011. <http://russian.people.com.cn/31521/7589023.html>

<sup>72</sup> Китай будет в качестве наблюдателя принимать участие в конференции "друзей Ливии" в Париже, *Жэньминь Жибао*, 01.09.2011. <http://russian.people.com.cn/31521/7585433.html>

<sup>73</sup> Farge E., Turner L., Irish J., How to Win Business in Libya, *Fox News*, USA, 23.09.2011; <http://wincountry.com/news/articles/2011/sep/23/special-report-how-to-win-business-in-libya/>

<sup>74</sup> Своевременное регулирование политики Китая по отношению к Ливии свидетельствует о зрелом и стабильном дипломатическом стиле КНР, 13.09.2011. [http://russian.china.org.cn/news/txt/2011-09/13/content\\_23404709.htm](http://russian.china.org.cn/news/txt/2011-09/13/content_23404709.htm)

<sup>75</sup> Китай предоставит ливийскому народу гуманитарную помощь в размере 50 млн юаней, *Жэньминь Жибао*, 11.07.2011. <http://russian.people.com.cn/31521/7435837.html>

2013թ. փետրվարին Լիբիայում չին դիվանագետների հետ հանդիպման ժամանակ Լիբիայի ժամանակավոր կառավարության վարչապետը նշեց, որ Լիբիայի կառավարությունն ու ժողովուրդը ողջունում են չինական ձեռնարկությունների հնարավորինս արագ վերադարձը Լիբիա և չինական ընկերությունների ընդհատված արտադրությունների վերսկսումը<sup>76</sup>:

Այսպիսով, ՉԺՀ-ի տարածաշրջանային քաղաքականությունն ամենամեծ փորձության ենթարկվեց «լիբիական գարնան» ընթացքում՝ կապված Պեկինի որդեգրած տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, չմիջամտության հայեցակարգի հետ: Վերջինիս հետամուտ լինելու դեպքում Պեկինի համար կբարդանար ոչ միայն Լիբիայի, այլև ՀԱ-ի հետ համագործակցության խորացման, մայրցամաքի ենթակառուցվածքային, էներգետիկ, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում իր հսկայական ծրագրերի իրականացման, ինչպես նաև Չինաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների զբաղվածության խնդիրը<sup>77</sup>: Իր տարածաշրջանային շահերի պաշտպանության ուղղությամբ ակտիվ միջնորդական առաքելություն ստանձնելով, Պեկինը հիմնարար փոփոխություն մտցրեց տասնյակ տարիների ընթացքում հետևողականորեն կիրառված չմիջամտության հայեցակարգում: Եթե մինչ այդ Չինաստանը տարածաշրջանում մեկը մյուսի հետևից առևտրային գործարքներ կնքող չեզոք տերություն էր, ապա լիբիական զարգացումների ընթացքում այն միջազգային նոր՝ միջնորդական կարգավիճակ ստանձնող երկիր դարձավ: Լիբիայի քաղաքացիական պատերազմը դարձավ իրադարձություն, որը ստիպեց Չինաստանին դուրս գալ իր «պատյանից»<sup>78</sup>:

«Արաբական գարնան» հետ կապված իրադարձությունները ցույց տվեցին, որ ՄԱ-ում և ՀԱ-ում, հատկապես՝ Լիբիայում, Չինաստանի ոչ բավարար քաղաքական ազդեցության, ինչպես նաև ռազմական ներկայության բացակայության պայմաններում Պեկինը դժվարություններ ունեցավ իր տնտեսական անվտանգությունն ու ներդրումային շահերն ապահովելու հարցում: Գիտակցելով այդ «բացը», Չինաստանը ձգտում է առավել խորացնել համագործակցությունը համեմատաբար կայուն Շոնի

<sup>76</sup> Правительство Ливии приветствует возвращение китайских предприятий в Ливию, Жэньминь Жибао, 06.02.2013.

<http://russian.people.com.cn/31520/8123703.html>

<sup>77</sup> Parello-Plesner J., China's Desert-Dance in Libya, European Council on Foreign Relations, 31.10.2011.

[http://www.ecfr.eu/content/entry/commentary\\_chinas\\_desert\\_dance\\_in\\_libya](http://www.ecfr.eu/content/entry/commentary_chinas_desert_dance_in_libya)

<sup>78</sup> Dresdner G., China, the Arab Spring, and Context, Institute of Strategic Thinking, 23.08.2011. <http://www.sde.org.tr/en/news/1612/china-the-arab-spring-and-context.aspx>

երկրների հետ՝ ընդլայնելով չինական նավատորմի ներկայությունն Ադենի ծոցում, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում՝ հակաժողովրդավարական գործողություններ վարելու հիմնավորմամբ: Ավելին, 2011թ. Պեկինն աջակցություն ցուցաբերեց Պակիստանի Գվադար նավահանգստում (չինական նավերն այստեղ մշտապես կայանելու իրավունք ունեն) ռազմահանգրվան կառուցելու գործին, որը ոչ միայն Չինաստանի տարածաշրջանային հակառակորդ Հնդկաստանի զսպման ռազմավարության մաս է կազմում, այլև մոտեցնում է չինական ռազմածովային ուժերի դիրքերը Հորմուզի նեղուցին ու Պարսից ծոցին: Փաստորեն, նոր հենակետերի հաստատման, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում ու Ադենի ծոցում հակաժողովրդավարական գործողություններում փորձառություն ձեռք բերելու միջոցով Պեկինը փորձում է ընդլայնել իր ռազմածովային ուժերի ներկայությունը ՄԱ-ում<sup>79</sup>:

### **«Սիրիական գարունը» և չինական դիվանագիտության ակտիվությունը**

Թեև կարող է թվալ, որ Սիրիայում Չինաստանը մեծ շահեր չունի, այդ երկրում հակակառավարական շարժման սկզբից ևեթ Պեկինը համառորեն պնդում էր, որ նախագահ Բաշար ալ-Ասադը չպետք է Արևմուտքի հարկադրանքի տակ հրաժարվի իշխանությունից: Չինաստանը բազմիցս հատուկ բանազնացներ ուղարկեց տարածաշրջան՝ Սիրիայի և հարևան պետությունների միջև բանակցություններ վարելու միջոցով հակամարտության շահագրգիռ կողմերի հետ կապերի հաստատման և երկխոսության միջոցով խնդրի կարգավորման, ինչպես նաև մարդասիրական օգնության տրամադրման նպատակով<sup>80</sup>: Ամուր կանգնելով Սիրիայի ազգային ինքնիշխանության պաշտպանության դիրքերում, ՉԺՀ-ն ամբողջովին բացառեց որևէ հիմքով, այդ թվում՝ մարդու իրավունքների ոտնահարման պատճառաբանությամբ, երկրի ներքին գործերին միջամտության հնարավորությունը: Ըստ Պեկինի՝ Սիրիայի ապագան պետք է որոշի սեփական ժողովուրդը, Սիրիան ինքնուրույն պետք է լուծի իր ներքին տարաձայնությունները և քաղաքական երկխոսության միջոցով ազգային

<sup>79</sup> Parks A.,

She Waking Giant and the Arab Spring: China's Middle East Strategy in the Wake of the Arab Revolutions, University Honors in International Studies, Fall 2012, 36-37.

<sup>80</sup> Zongze R., Responsible Protection: Building a Safer World, CIIS Time, 15.06.2012. [http://www.ciis.org.cn/english/2012-06/15/content\\_5090912.htm](http://www.ciis.org.cn/english/2012-06/15/content_5090912.htm)



կայունություն հաստատի երկրում<sup>81</sup>: Պեկինը պնդեց նաև, որ Սիրիայի խնդիրը պետք է լուծվի ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ հարգելով Սիրիայի անկախության, ինքնիշխանության և տարածքային ամոռջականության իրավունքը<sup>82</sup>:

2011թ. հունիսին Պեկինն ու Մոսկվան բոյկոտեցին Դամասկոսի դեմ (կառավարության կողմից սիրիական ընդդիմության կոշտ ճնշման պատճառաբանությամբ) բանաձև մշակելու նպատակով ՄԱԿ-ի ԱԽ-ի հանդիպումը՝ խափանելով Բաշար ալ-Ասադի դեմ ՄԱԿ-ի պատժամիջոցների ընդունման հնարավորությունը<sup>83</sup>: Պեկինում համոզված էին, որ Ասադի պաշտոնաթողությունը չի հանգեցնի երկրում իրականացվող բռնությունների դադարեցմանը: Պեկինում չէին պատրաստվում սիրիական հակամարտող կողմերից որևէ մեկին նախապատվություն տալ՝ այն դիտելով ոչ թե բռնակալի և ապստամբների, այլ զինված տարբեր խմբավորումների միջև իշխանության համար մղվող պայքար<sup>84</sup>: Այդ պատճառով էլ Չինաստանի ընտրությունը կանգնել էր ոչ թե երկրի անկանխատեսելի ապագայի, այլ Սիրիայում առկա ստատուս-քվոյի պահպանման օգտին:

2011թ. հոկտեմբերին՝ վետո դնելով հակակառավարական ուժերի ճնշման առնչությամբ Սիրիային դատապարտող ԱԽ-ի բանաձևի վրա, ՉԺՀ-ն ու ՌԴ-ը փաստորեն փրկողակ նետեցին Բ.Ասադին<sup>85</sup>: Պեկինն ու Մոսկվան համոզված էին, որ ՆԱՏՕ-ի անդամները ցանկանում են Սիրիայի վերաբերյալ բանաձևի ընդունման հասնել՝ մանիպուլյացիայի ենթարկելով ԱԽ-ը, ինչը նրանց հաջողվեց Լիբիայի վերաբերյալ բանաձևի ընդունման ժամանակ<sup>86</sup>: Այդ էր թերևս պատճառը, որ

<sup>81</sup> China Opposes Foreign Intervention in Syria: FM, *Xinhua*, Beijing, 24.05.2011. [http://www.chinadaily.com.cn/world/2011-05/24/content\\_12572110.htm](http://www.chinadaily.com.cn/world/2011-05/24/content_12572110.htm)

<sup>82</sup> Use of Force not Solution to Syrian Crisis: Chinese Envoy, Institute of Strategic Thinking, 29.04.2011, pp. 1-2.

<http://www.sde.org.tr/en/newsdetail/use-of-force-not-solution-to-syrian-crisis-chinese-envoy/2564>

<sup>83</sup> Россия и Китай бойкотируют переговоры ООН по Сирии, *AFP*, 14.06.2011. <http://inosmi.ru/asia/20110614/170670904.html>

<sup>84</sup> СМИ: Россия, Китай и Иран готовятся к учениям у берегов Сирии, *Военное Обозрение*, 02.08.2012. <http://topwar.ru/17199-kitay-reshil-napravit-k-beregam-sirii-svoi-voennye-korabli.html>

<sup>85</sup> **MacFarquhar N. M.**, With Rare Double U.N. Veto on Syria, Russia and China Try to Shield Friend, *The New York Times*, 05.10.2011. [http://www.nytimes.com/2011/10/06/world/middleeast/with-united-nations-veto-russia-and-china-help-syria.html?\\_r=2&pagewanted=all](http://www.nytimes.com/2011/10/06/world/middleeast/with-united-nations-veto-russia-and-china-help-syria.html?_r=2&pagewanted=all)

<sup>86</sup> **Тавитов В.**, Почему Китай поддерживает Сирию? 30.09.2012. <http://modernpolitics.ru/2012/09/pochemu-kitajj-podderzhivaet-siriyu/>

Ռուսաստանն ու Չինաստանը մտադիր էին կանխել նման սցենարի կրկնությունը ոչ միայն Սիրիայում, այլ ողջ ՄԱ-ի տարածաշրջանում<sup>87</sup>:

Ավելին, ՉԺՀ-ն պաշտպանեց 2011թ. դեկտեմբերին ՌԴ-ի կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ին ներկայացված Սիրիայի վերաբերյալ բանաձևի նախագիծը<sup>88</sup>: Իսկ 2012թ. սկզբին Պեկինն ԱՊԼ-ի ղեկավարությանը հայտնեց, որ հանդես է գալիս «սիրիական թղթապանակն» ԱԽ-ի դատին հանձնելու դեմ, և գտնում է, որ ճգնաժամը պետք է կարգավորվի համաարաբական կազմակերպության շրջանակներում<sup>89</sup>: 2012թ. փետրվարին ՌԴ-ն ու ՉԺՀ-ը ԱԽ-ում քվեարկեցին սիրիական խնդրի ռազմական ճանապարհով լուծման պարունակող բանաձևի նախագծի դեմ, որն առաջարկել էր Մարոկոյի պատվիրակությունը մի շարք արևմտյան և արաբական երկրների հետ<sup>90</sup>: Դժգոհություն առաջացրեց հատկապես բանաձևի այն կետը, որով նախագահ Բաշար ալ-Ասադից պահանջվում էր երեք շաբաթվա ընթացքում ազատել նախագահի պաշտոնը և իշխանությունը փոխանցել իր տեղակալին<sup>91</sup>:

Moreover, some authors argue that: "The more Azerbaijan-West oil partnership deepens, the further regional stability weakens"<sup>23</sup> as the rapidly growing defense spending linked to the huge revenues from energy flows create further instability in the region; meanwhile the EU's "soft power" has little to do with these trends.

As stated the president of Armenia S. Sargsyan:

We, of course, respect and understand the EU's desire to ensure energy security and diversity of energy sources. However, we also anticipate that the very same EU countries will be considerate about our country's security and issues of stability in our region. We all want the EU to implement programs in our region because the regional cooperation component of these programs can play a positive role in establishing stability. And these programs should also provide for the even development of the regional countries. The end results of these programs should promote peace and not war. These programs should be implemented in a manner that, God forbid, they don't become a new war nourishing source...<sup>24</sup>

Some authors argue that driven by the desire of diversification, the EU favours stability and economic-and energy-interests over reform, to the detriment of Europe's "soft" or "normative" power and that "the strong state first" approach to the South Caucasus region has taken over policy circles in Brussels<sup>25</sup>. Thus the interest in alternative energy resources and diversified transport routes has been prioritised over other scenarios leading to change.

Apparently when it comes to the diversification of energy supplies, the EU demonstrates a rhetoric-behaviour gap, which in the longer term will certainly lead to reassessment of the EU as a "normative power" and reform

---

<sup>23</sup> **Manvelyan A.**, The EU Energy Policy in the Caucasus-Caspian Region: Implications of Regional Security, available at

[http://www.psaa.am/hosting/file/PDF-s/Manvelyan-%20EOo13%20p66-68\(1\).pdf](http://www.psaa.am/hosting/file/PDF-s/Manvelyan-%20EOo13%20p66-68(1).pdf).

<sup>24</sup> "President Serzh Sargsyan responds to the raised by a journalist at the Press conference with the president of France Nicolas Sarkozy", 07.10.2011, available at <http://www.president.am/en/interviews-and-press-conferences/item/2011/10/07/news-73/>.

<sup>25</sup> **Alieva L.**, Azerbaijan: Power in the Petro-State, *Plight of Democracy's Plight in the European Neighborhood: Struggling Transitions and Proliferaing Dynasties*, edited by Emerson M. and Youngs R., Centre for European Policy Studies, Brussels, 2008, p. 117.

promoter, and instead modifying its image to that of status-quo actor in the eyes of public opinion. Although theoretically a successful EU regional policy should not be confined to energy, but should also embrace a broader parallel promotion of its interests in the governance and security sectors, in practice the quest for energy limits the EU's ability to push wider foreign policy objectives, increasing disharmony between energy and other policies of the EU in the South Caucasus region.

## **Conclusion**

Despite the EU's reliance on its "soft power" and adherence to the principle of liberal interdependence, over time it became clear that market-based liberal initiatives do not have much room to grow in the South Caucasus region, coming to prove the structural weakness of market mechanisms and the underlying tensions between the priorities of diversification (pipeline politics) and the governance modes of the EU.

In general, three main factors hampering the EU's external energy agenda in the South Caucasus region may be identified: lack of coherence in external energy policy; geopolitical realities of the region characterized by the domination of power politics; irrelevance of the EU's conditionality due to lack of membership perspective. Such a situation has driven the need to reinforce bilateral energy partnerships, thereby marking a shift in the geopolitical dimension of the EU's external energy policy towards the region. Namely, a number of bilateral EU-Azerbaijan energy agreements have started to accelerate since 2006. Needless to say that the incoherent and inconsistent external energy policy widens the gap between multilateral governance and bilateral energy partnerships, thus limiting the EU's ability to push broader foreign policy objectives in the region. Nonetheless, a series of factors, along with the limited energy capacity of Azerbaijan and other obstacles pertaining to the EU's direct access to Central Asian energy resources, may yet trigger significant changes in the EU's policy towards the South Caucasus.

## **ԵՄ Էներգետիկ քաղաքականության նորմատիվ և քաղաքական չափումները Հարավային Կովկասի օրինակով**

**ԱՐԱՄ ԹԵՐԶՅԱՆ**

Երևանի պետական համալսարան,  
Բուխարեստի առաջատար հետազոտությունների ինստիտուտ

Վերջին տարիներին զգալիորեն ակտիվացած էներգակիրների մատակարարման աղբյուրների և ուղիների բազմազանեցման Եվրոպական Միության (ԵՄ) քաղաքականությունում էապես մեծացել է Եվրոպան Ասիայի հետ կապող հաղորդակցային «միջանցքի» և կասպյան էներգապաշարների նկատմամբ «բնական դարպաս» հանդիսացող հարավկովկասյան տարածաշրջանի դերը և նշանակությունը: Տարածաշրջանի էներգետիկ ներուժի նկատմամբ ԵՄ հետաքրքրության մեծ աճի և դրա օգտագործման ջանքերի ակտիվացման հետ արդիական հնչեղություն է ստացել տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքի և «էներգետիկ քարտեզի» կերպավորման, տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության վրա ԵՄ ներգործության հնարավորություններին և հիմնախնդիրներին վերաբերող հարցերի մի ողջ բազմություն: Վերլուծելով Հարավային Կովկասում ԵՄ էներգետիկ քաղաքականության առանձնահատկությունները, նորմատիվ և քաղաքական չափումները՝ այդ ենթատեքստում գնահատվել են վերջիններիս համադրման դժվարություններն ու դրանց հաղթահարման հեռանկարները:



## Օգոստոսյան ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը թուրք- վրացական հարաբերությունների վրա

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և  
եվրոպագիտության ամբիոն, ԵՊՀ

Հանձնված է 06.6.2013

Ընդունված է 12.10.2013

2008թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում Հարավային Կովկասում ձևավորվեց միանգամայն նոր իրավիճակ, որը զգալի ազդեցություն ունեցավ տարածաշրջանում առկա երկկողմ և բազմակողմ հարաբերությունների վրա: Իրավիճակի բարդությունն առաջին հերթին պայմանավորված էր տարածաշրջանում Ռուսաստանի և Միացյալ Նահանգների ակտիվության կտրուկ մեծացմամբ: Տարածաշրջանային գերիշխանության նկրտումներ ունեցող Թուրքիան սեփական դիրքերը պահանելու համար ստիպված էր լուծել բարդ խնդիրներ, որոնք առաջացան անգամ մինչև պատերազմն ակտիվորեն զարգացող թուրք-վրացական հարաբերություններում: Հոդվածում բացահայտվում են այդ հարաբերություններում առաջացած մարտահրավերները, Թուրքիայի քայլերն՝ ուղղված դրանց հաղթահարմանը, և գնահատվում է այդ քայլերի արդյունավետությունը:

### Բանալի բառեր

Թուրքիա, Վրաստան, Ռուսաստան, Միացյալ Նահանգներ, Հարավային Կովկաս, աշխարհաքաղաքական մարտահրավերներ

2000-ականների սկզբին «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակայություններում կարևոր տեղ հատկացվեց տարածաշրջանային տերության ձևավորման գաղափարին: Գաղափարը հիմնված էր Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» տեսության վրա<sup>1</sup>: Ըստ Դավութօղլուի՝ «Թուրքիան, որպես միջազգային «խաղացող», նախապես ընկալվում էր որպես պետություն, որն ունի ուժեղ մկաններ, թույլ ստամոքս, սրտի հետ կապված խնդիրներ և միջին մտածողություն: Այլ կերպ ասած, այն ունի հզոր բանակ, բայց թույլ տնտեսություն, զուրկ է

<sup>1</sup> Davutoğlu A., Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, 2001, s. 118.

ինքնավստահությունից և թույլ՝ ռազմավարական մտածողության առումով»<sup>2</sup>:

Թուրքիայի կերպարը փոխելու համար Ա. Դավութօղլուն առաջարկում էր արտաքին հարաբերությունները կառուցել հետևյալ չորս կարևոր սկզբունքների հիման վրա.

1. «զրո խնդիր հարևանների հետ»՝ ի նկատի ունենալով հարևանների հետ առկա վեճերի լուծման և բարիդրացիական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը,

2. հարևան տարածաշրջաններում զարգացող և ամուր հարաբերությունների հաստատում,

3. բազմակողմ արտաքին քաղաքականություն,

4. «փափուկ ուժ»-ի քաղաքականություն:<sup>3</sup>

Ըստ Ա. Դավութօղլուի, համաշխարհային քաղաքականության մեջ որևէ պետության դերն ու արժեքը որոշվում են նրա աշխարհագրական դիրքով և պատմական անցյալով<sup>4</sup>: Այդ տեսակետից Թուրքիան շահեկան վիճակում է, քանի որ ունի բարենպաստ աշխարհագրական դիրք և հանդիսանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Ա. Դավութօղլուն նշում է, որ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, որը մի ժամանակ միավորում էր իսլամական աշխարհը, Թուրքիան կարող է ունենալ ոչ միայն տարածաշրջանային խոշոր դեր, այլև լինել կենտրոնական ուժ մի քանի տարածաշրջանների առումով<sup>5</sup>: Մասնավորապես, նա Հարավային Կովկասը համարում է Թուրքիայի հետ ցամաքային սահման ունեցող երեք կարևոր տարածաշրջաններից մեկը, որն առանձնահատուկ նշանակություն ունի աշխարհաքաղաքական առումով և տնտեսական կապերի զարգացման տեսանկյունից<sup>6</sup>:

Տարածաշրջանային տերությունն ընկալվում է որպես պետություն, որը մաս է կազմում աշխարհագրորեն առանձին տարածաշրջանի, տնտեսական ու ռազմական առումով զբաղեցնում է գերակշիռ դիրք, ունակ է հեգեմոնիկ ազդեցություն ունենալու տարածաշրջանում և

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> **Davutoğlu A.**, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007,- *Insight Turkey*, 2008, **10**, 1, 79-83; Policy of Zero Problems with Our Neighbors, available at <http://www.mfa.gov.tr/policy-of-zero-problems-with-our-neighbors.en.mfa>.

<sup>4</sup> **Davutoğlu A.**, ...

<sup>5</sup> **Davutoğlu A.**, ..., S. 119.

<sup>6</sup> **Davutoğlu A.**, ..., S. 120.

համապատասխան ներուժ՝ նաև աշխարհում, հակված է դրա համար ներդնելու նույնիսկ իր ուժային հնարավորություններն ու հարևանների կողմից ընդունվում է որպես տարածաշրջանային առաջատար: Տարածաշրջանային տերություն դառնալու հավակնություններ ունեցող երկիրը պետք է՝

1. լինի տարածաշրջանի և դրա «ինքնության» մաս,
2. հավակնի տարածաշրջանային տերության կարգավիճակի և արտահայտվի դրա մասին,
3. որոշիչ ազդեցություն ունենա տարածաշրջանում՝ ինչպես վերջինիս աշխարհագրական ընդգրկման, այնպես էլ գաղափարաբանական համակարգի ձևավորման առումով,
4. տիրապետի համեմատաբար ավելի բարձր ռազմական, տնտեսական, ժողովրդագրական, քաղաքական և գաղափարախոսական հնարավորությունների, քան տարածաշրջանի այլ երկրներ,
5. խորությամբ ինտեգրված լինի տարածաշրջանում,
6. մեծապես կարևորի տարածաշրջանային անվտանգությանը,
7. գնահատվի որպես տարածաշրջանային տերություն տարածաշրջանի և այլ պետությունների ու, հատկապես, մյուս տարածաշրջանային տերությունների կողմից, եթե այդպիսիք գոյություն ունեն, լավագույնս ներգրավված լինի տարածաշրջանային և գլոբալ ծրագրերում:<sup>7</sup>

Ակնհայտ է, որ Թուրքիան շատ մեծ ջանքեր պետք է գործադրեր թե այս պայմաններին բավարարելու և թե վերոհիշյալ չորս սկզբունքների հիման վրա արտաքին քաղաքականություն վարելու համար, քանի որ դրանցից առաջինի իրականացման հետ կապված արդեն Անկարան ուներ լուրջ խնդիրներ: Ավելին, իրավիճակն էլ ավելի բարդացրեց 2008թ. վրաց-ռուսական պատերազմը, որը մի շարք խնդիրներ ստեղծեց անգամ մինչ այդ պատերազմը շատ արագ զարգացող թուրք-վրացական հարաբերություններում:

<sup>7</sup> **Beck M.**, The Concept of Regional Power: the Middle East as a Deviant Case? *Conference Paper of "Regional Powers in Asia, Africa, Latin America, the Near and Middle East"*, 2006, p. 2.

## **Հնգօրյա պատերազմից հետո ձևավորված իրադրությունը և Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության նոր մոտեցումները**

Վրաց-ռուսական հնգօրյա պատերազմը կտրուկ փոխեց իրավիճակն Հարավային Կովկասում: Նոր իրողությունները մեծապես պայմանավորված էին տարածաշրջանում Ռուսաստանի և Միացյալ Նահանգների մրցակցության կտրուկ սրմամբ և պատերազմից հետո էականորեն վերանայված ազդեցությունների նոր հաշվեկշռով: Նախորդ տարիներին Թուրքիայի ջանքերով և Ադրբեջանի ու Վրաստանի մասնակցությամբ տարածաշրջանում ձևավորված էներգակիրների տեղափոխման տարանցիկ ուղիները հայտնվեցին վտանգի ներքո: Միաժամանակ, Թուրքիան լրջորեն մտահոգված էր Վրաստանի տնտեսությունում կատարած մեծածավալ ներդրումների հեռանկարով, որոնք կազմում էին ավելի քան 1.5 մլրդ դոլար<sup>8</sup>: Մյուս կողմից, պատերազմից հետո Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Սուփսա նավթամուղերի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի գլխավոր օպերատոր «Բրիթիշ Փեթրոլեում» ընկերությունը, անվտանգությունից ելնելով, որոշեց ժամանակավորապես դադարեցնել վերոնշյալ երթուղիներով էներգակիրների տեղափոխումը, որի հետևանքով Թուրքիան կրեց հսկայական վնասներ<sup>9</sup>: Ընդ որում, այդ վնասները ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բնույթ ունեին:

Պատերազմից հետո Հարավային Կովկասում տեղի ունեցան լուրջ աշխարհաքաղաքական վերադասավորումներ: Մի կողմից, թեև Ռուսաստանը պատերազմում համոզիչ հաղթանակ տարավ՝ ԽՍՀՄ փուլումից հետո առաջին անգամ ռազմական գործողություններ ծավալելով իր սահմաններից դուրս, սակայն Վրաստանն ամբողջությամբ անցավ Միջյալ Նահանգների ազդեցության ներքո: Մոսկվան կորուստներ ունեցավ նաև տարածաշրջանային այլ խնդիրների հետ կապված: Նախ, երկրորդ պլանի դերակատարությամբ ներգրավվեց սկիզբ առած հայ-թուրքական հաշտեցման գործընթացում: Ապա ստիպված էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման

<sup>8</sup> **Арунова М.Р.**, Турция–Грузия: сотрудничество и проблемы, <http://www.iimes.ru/rus/stat/2008/15-10-08c.htm>.

<sup>9</sup> **Глазова А.**, Внешнеполитические инициативы Турции на Южном Кавказе: успех или неудача?, *Проблемы национальной стратегии*, 2011, 1(6), 71-79.

գործընթացում ստանձնել նախաձեռնությունը, հետևաբար և ծախսողման պատասխանատվությունը, թեև ակնհայտ էր, որ որևէ էական տեղաշարժ այդ գործընթացում հնարավոր չէ տեսանելի ապագայում: Տարածաշրջանում դիրքերի թուլացումը փոխհատուցելու նպատակով Ռուսաստանը ակտիվ քայլերի դիմեց ռազմաքաղաքական հարթությունում:<sup>10</sup> 2010թ. Ռուսաստանը հայտարարեց, որ С-300 տիպի հակաօդային պաշտպանության կայաններ է վաճառում Ադրբեյջանին<sup>11</sup>, իսկ Հայաստանի հետ ռազմական համագործակցության պայմանագրի երկարաձգումով ապահովեց Գյումրիում տեղակայված իր ռազմակայանի ներկայությունը տեսանելի ապագայում<sup>12</sup>:

Հարավային Կովկասում Ռուսաստանի և Միացյալ Նահանգների մրցակցության կտրուկ սրումը էական ազդեցություն ունեցավ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վրա: Հայաստանի իշխանությունները հանդես եկան Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ: Ավելի ուշ պարզ դարձավ, որ, թեև նախաձեռնությունը հնչեցրել էր հայկական կողմը, իսկ միջնորդի դերը ստանձնել Շվեյցարիան, սակայն այդ գործընթացի <<ճարտարապետը>> Միացյալ Նահանգներն էր: Սա երկու գլխավոր գործոններից մեկն է, թե ինչու Թուրքիան չէր կարող խուսափել այդ գործընթացից, թեև տևական ժամանակահատված ամեն ջանք գործադրում էր «արխիվացնելու» համար ցեղասպանության խնդիրը, որը, գործընթացի մասնակիցների կամքից անկախ դրա ակտիվացմանը զուգընթաց բազմաթիվ արձարծումներ էր ունենալու: Երկրորդ գործոնը Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը հռչակված տարածաշրջանային առաջատարի դերակատարության ստանձնումն էր: Սակայն գործընթացի սկսումը ոչ միայն բարդացրեց իրավիճակն, այլև

<sup>10</sup> **Թորոսյան Տ.** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն: Երևան, <<Տիգրան Մեծ>>, 2012թ., գլուխ 2-րդ:

<sup>11</sup> Азербайджан купил у России два дивизиона зенитно-ракетного комплекса С-300 ПМУ-2 "Фаворит", 29.07.2010, <http://news.bcm.ru/economics/2010/7/29/9737/1;>

<sup>12</sup> Протокол №5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г., 20.08.2010, [http://www.mid.ru/BDOMP/spd\\_md.nsf/0/2C173CA176462C4044257C200022C35F](http://www.mid.ru/BDOMP/spd_md.nsf/0/2C173CA176462C4044257C200022C35F).

առաջ բերեց նոր խնդիր՝ Ադրբեջանի ծայրահեղ մերժողական դիրքորոշումը<sup>13</sup>:

Այսպիսով՝ հնգօրյա պատերազմից հետո պարզ դարձավ, որ Հարավային Կովկասում ազդեցության գոտիների բաժանման մրցակցությունում Ռուսաստանն ու Միացյալ Նահանգները վճռականորեն են տրամադրված և այդ պարագայում Թուրքիայի նկրտումները՝ տարածաշրջանային առաջատար դառնալու ուղղությամբ, հեռանկարներ չունեն: Ավելին, Թուրքիան ներքաշվում էր այնպիսի գործընթացների մեջ, որոնց արդյունավետ ընթացքը հակասում էր այդ նպատակին: Նման իրավիճակում Թուրքիային մնում էր մարտավարական հարցերում առավել արդյունավետությամբ օգտագործել ստեղծված իրավիճակը: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ Անկարան փորձեց դիրքերն ամրապնդել երկու ուղղությամբ: Դրանցից առաջինն ուներ հեռահար նպատակ և կապված էր Վրաստանում ստեղծված հետպատերազմյան վիճակի հետ: Կիսով չափ ավերված և ՌԴ-ի հետ խիստ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող Վրաստանը անհրաժեշտաբար էլ ավելի էր մերձենալու Թուրքիային, որը հնարավորություն էր տալու վերջինիս՝ պահպանելու էներգակիրների տարանցիկ ուղիները և վերջիններիս միջոցով նաև՝ սեփական դերն ու ազդեցությունը Հարավային Կովկասի էներգակիրների տեղափոխման ուղիների վերահսկողության հարցում: Ճիշտ է, նաև վտանգներ էին առաջացել էներգակիրների տեղափոխման հեռանկարների հետ կապված՝ Ադրբեջանն ակտիվացրել էր հարաբերությունները Ռուսաստանի հետ և նախագահ Իլիամ Ալիևը զգուշացրել էր, որ եթե Թուրքիան շարունակի հայ-թուրքական հաշտեցման գործընթացը, Ադրբեջանն իր ողջ զազը կարտահանի Ռուսաստան<sup>14</sup>: Սակայն ակնհայտ էր, որ էներգակիրների արտահանման խնդիրն ուղղակիորեն շոշափում էր Եվրամիության և Միացյալ Նահանգների շահերը և Բաքուն այն չէր կարող դարձնել Անկարայի հետ առևտրի առարկա: Այնպես, ինչպես Թուրքիան չէր կարող ենթարկվել Ադրբեջանի շանտաժին ու կտրուկ հրաժարվել Միացյալ Նահանգների նախաձեռնած հայ-թուրքական հաշտեցման գործընթացից:

<sup>13</sup> Shiryev Z. and Davies C., The Turkey-Armenia-Azerbaijan Triangle: The Unexpected Outcomes of the Zurich Protocols, *Perceptions: Journal of International Affairs*, 2013, XVIII, 1, 191-194; Азербайджан резко критикует соглашения между Турцией и Арменией, 11.10.2009, <http://top.rbc.ru/politics/11/10/2009/336299.shtml>.

<sup>14</sup> Азербайджан-Турция: от эйфории к прагматизму, 22.11.2009, <http://kavkasia.net/Azerbaijan/article/1258951638.php>; Turan, 19.02.2010.

Մինչ գործընթացի սառեցումը Անկարան կարողացավ առաջ մղել իր վաղեմի երազանքը՝ «<պատմաբանների հանձնաժողովի>> ստեղծման վերաբերյալ և հարցը դարձնել գործընթացի օրակարգի առարկա, ինչպես նաև գործընթացի առկայությունը հաջողությամբ ծառայեցնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին անդմակցելու ծրագրի իրագործմանը՝ որպես ոչ մշտական անդամ: Այդ նպատակին էր ուղղված նաև Թուրքիայի կողմից «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»-ի գաղափարի առաջադրումը հնգօրյա պատերազմի ավարտից անմիջապես հետո: Հատկանշական է, որ այդ գաղափարի իրագործման առաջարկը Թուրքիայի վարչապետ Էրդողանն առաջինը քննարկեց Ռուսաստանի հետ՝ 2008թ. օգոստոսի մոսկովյան այցի ժամանակ, մինչդեռ մասնակից երկրների շրջանակում բացակայում էր Անկարայի ամենաակտիվ գործընկերը՝ ԱՄՆ-ը:

Թուրքիայի առաջարկը սկզբնական փուլում նախատեսում էր այդ նոր կառույցի մեջ, բացի երեք հարավկովկասյան ճանաչված պետություններից, Թուրքիայից ու ՌԴ-ից, ընդգրկել նաև ԱՄՆ-ն և ԵՄ-ն: Սակայն հետագայում Վաշինգտոնն ու Բրյուսելը չընդգրկվեցին այս նախագծում<sup>15</sup>: Էրդողանի վերոհիշյալ այցի ժամանակ Մոսկվայում քննարկվեց գաղափարի իրագործումը 3+2 ձևաչափով, ըստ որի 3 տարածաշրջանային պետություններից բացի նախատեսվում էր ընդգրկել նաև ՌԴ-ն և Թուրքիան: Մինչդեռ նմանատիպ առաջարկով՝ հիմնված 3+3 ձևաչափի վրա (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան + ՌԴ, Թուրքիա, ԱՄՆ) Թուրքիան հանդես էր եկել դեռևս 1999թ., սակայն ոչ ՌԴ-ն, ոչ էլ ԱՄՆ-ն չէին օժանդակել գաղափարի իրագործմանը և այն հետագա ընթացք չունեցավ<sup>16</sup>:

Նոր առաջարկը ևս բախվեց լուրջ բարդությունների: Վրաստանը հրաժարվում էր մասնակցել ՌԴ-ի հետ համատեղ որևէ նախաձեռնության, քանի դեռ իր տարածքում գտնվում էին ռուսական զորքեր<sup>17</sup>: Պլատֆորմի դեմ հանդես եկավ նաև Ադրբեջանը, որը

<sup>15</sup> **Daly C. K. J.**, Turkey and The Problems with the BTC, Eurasia Daily Monitor, The Jamestown Foundation - August 13, 2008, **5**, 155, [http://www.jamestown.org/single/?no\\_cache=1&tx\\_ttnews\[tt\\_news\]=33887](http://www.jamestown.org/single/?no_cache=1&tx_ttnews[tt_news]=33887).

<sup>16</sup> **Gültekin P. B.**, The Caucasus Stability and Cooperation Platform: An Attempt to Foster Regional Accountability, - *ICBSS Policy Brief*, No.13, April 2009, p. 3.

<sup>17</sup> **Mikhelidze N.**, After the 2008 Russia-Georgia war: Implications for the wider Caucasus and prospects for Eestern involvement in conflict resolution, - *Istituto Affari Internazionali*, p. 12; Georgia and Russia reject to sit at the table under

ընդհանրապես դեմ Հայաստանի ներգրավմանը է ցանկացած ծրագրում, որտեղ ներկա է կա՛մ Ադրբեջանը, կա՛մ Թուրքիան<sup>18</sup>: Կանխատեսելի էր, որ Հարավային Կովկասի երրորդ ճանաչված պետությունը՝ Հայաստանը, կողմ կարտահայտվի նախագծին: Չի բացառվում, որ նման դիրքորոշումը բխում էր բավական ակնհայտ հետևությունից, որ թե առաջարկվող ձևաչափը, թե տարածաշրջանում մեծ լարվածության առկայությունը, և թե այն հանգամանքը, որ առաջարկը ներկայացրել էր Անկարան, գործնականում անիրագործելի էին դարձնում նման նախագիծը:

Պլատֆորմի մասնակիցների շրջանակից ԱՄՆ-ը դուրս թողնելու Թուրքիայի մտադրությունն ապահովեց Ռուսաստանի դրական վերաբերմունքը ծրագրին: Սակայն, ամենայն հավանականությամբ, ՌԴ-ի մոտեցումը պլատֆորմի նկատմամբ կրում էր միայն մարտավարական բնույթ, քանի որ ռազմավարական առումով Մոսկվայի համար անընդունելի էր աշխարհաքաղաքական այլ դերակատարների՝ Հարավային Կովկասում ազդեցության մեծացումը: Միաժամանակ, Անկարայի համար ակնհայտ էր, որ երկու կարևոր աշխարհաքաղաքական դերակատարների առկայությունը տարածաշրջանային կառույցում վերջնականորեն կթաղի իր ձգտումներն, իսկ ՌԴ-ի հետ նման պլատֆորմի իրականացումը հնարավորություն կտա վերստին արժևորելու Թուրքիայի դերակատարությունն Հարավային Կովկասում<sup>19</sup>:

Թուրքիայի համար կարևոր էր, որ ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն դրական արձագանքեցին Թուրքիայի նախաձեռնությանը: Մասնավորապես, ԵՄ-ն, ողջունելով առաջարկված գաղափարը, հայտարարել էր, որ դրանով Թուրքիան կատարում է հաշտարարի դեր՝ ձգտելով տարածաշրջանի բոլոր երկրներին ներառել այդ նախագծում<sup>20</sup>: ՆԱՏՕ-ն նույնպես

---

Turkey's initiative, <http://www.hurriyet.com.tr/english/home/9721016.asp>; Fotiou E., Caucasus Stability and Cooperation Platform: What is at Stake for Regional Cooperation?,- *ICBSS Policy Briefs*, no. 16, June 2009, p. 13.

<sup>18</sup> Devrim D. and Schulz E., The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood?,- *Insight Turkey* 2009, 11, 3, 182-183; Mikhelidze N., ..., pp. 11-12:

<sup>19</sup> Иванов В., Основные контуры турецко-грузинского военно-политического сотрудничества: динамика и перспективы развития, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հատոր 6, Երևան, 2009, էջ 158:

<sup>20</sup> Commission of the European Communities, Turkey 2008 Progress Report, SEC(2008) 2699, 5 November 2008, p. 82; Taylor P., EU Urges Turkey to Break



աջակցություն հայտնեց պլատֆորմի գաղափարին՝ այն համարելով կարևոր քայլ սևծովյան տարածաշրջանի անվտանգության համար՝ ընդգծելով Թուրքիայի կառուցողական քաղաքականությունը ստեղծված ճգնաժամային իրավիճակում<sup>21</sup>: Այդուհանդերձ, շատ ավելի կարևոր էր Վաշինգտոնի դիրքորոշումը: Արձագանքը կանխատեսելի էր՝ լուրջ մտահոգություն և բացասական արձագանք, քանի որ Միացյալ Նահանգները չէր կարող թույլ տալ, որ իրեն դուրս մղեն կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջանի զարգացումներից:

«Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»-ի հիմնական սկզբունքները մշակելու նպատակով հայտարարված կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ հաջողվեց կազմակերպել ընդամենը երեք հանդիպում: Առաջին հանդիպումը կայացել է 2008 թ., երկրորդը՝ 2009 թ. հունվարին, իսկ վերջինը՝ 2009թ. ապրիլին:<sup>22</sup> Կողմերի դիրքորոշումներում որևէ տեղաշարժ հնարավոր չեղավ արձանագրել և հանդիպումները դադարեցվեցին:

Իհարկե, ի սկզբանե դժվար չէր նկատել, որ այդ ծրագիրը գործնականում դատապարտված էր և ուներ միայն մարտավարական բնույթ, այն դեպքում, երբ Թուրքիայի համար Հարավային Կովկասում տարածաշրջանային ազդեցություն ապահովելու տեսակետից ռազմավարական նշանակություն ունեին հարաբերությունները Վրաստանի հետ: Այդուհանդերձ, այստեղ էլ Անկարան փորձում էր մանևրել: Մասնավորապես, մի կողմից Թուրքիան հանդես եկավ Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու հայտարարությամբ, սակայն մյուս կողմից Վրաստանին օգնություն ցուցաբերելու շտապող ԱՄՆ ռազմանավերի առջև փակեց թուրքական նեղուցները: Թուրքիան ցանկանում էր ոչ միայն պահպանել իր դիրքերը տարածաշրջանում, այլև ԱՄՆ-ին ցույց տալ իր նշանակալի

---

Cycle of Political Crisis, 06.09.2008,  
<http://www.aina.org/news/20080905204642.pdf>.

<sup>21</sup> Strasbourg / Kehl Summit Declaration, Issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council in Strasbourg, 04.04.2009,

[http://www.nato.int/cps/en/natolive/news\\_52837.htm?mode=pressrelease](http://www.nato.int/cps/en/natolive/news_52837.htm?mode=pressrelease);

Aras B. and Fidan H., Turkey and Eurasia: Frontiers of a new geographic imagination, *New Perspectives on Turkey*, no. 40, 2009, p. 215; *Sabah*, 19.08. 2008.

<sup>22</sup> Aras B. and Akpınar P., ..., p. 64:

դերակատարությունն ու անհրաժեշտության պահին ինքնուրույն գործելու վճռականությունը<sup>23</sup>:

### **Թուրք-վրացական հարաբերությունները 5-օրյա պատերազմից հետո**

Թեև պատերազմը շատ կարճ տևեց, սակայն դրան առնչվող հետևյալ հանգամանքների հետևանքով թուրք-վրացական հարաբերություններում ի հայտ եկավ լարվածություն,

1. Թուրքիան չդատապարտեց Ռուսաստանին՝ «անհամաչափ» ուժի կիրառման, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչման համար;

2. Վրաց-ռուսական պատերազմի ամենաթեժ պահին՝ 2008թ. օգոստոսի 10-ին, Թուրքիայի ԱԳ նախարար Ա. Բաբաջանը Ռուսաստանի ԱԳ նախարար Ս. Լավրովի հետ հեռախոսազրույցի ընթացքում պաշտպանել էր Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը<sup>24</sup>, սակայն, միաժամանակ, ընդունել էր Ռուսաստանի «բարոյական իրավունք»-ը՝ առանցքային դերակատարություն ունենալու հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում՝ կոչ անելով անմիջապես դադարացնել ռազմական գործողությունները և հակամարտող կողմերի միջև սկսել ուղղակի բանակցություններ<sup>25</sup>;

3. Ռուս-վրացական պատերազմական գործողությունների ավարտից անմիջապես հետո պաշտոնական Անկարան, հղում անելով Մոնտրեի կոնվենցիային, թույլ չտվեց Վրաստանին օգնություն տանող ԱՄՆ ռազմանավերին թուրքական նեղուցներով մուտք գործել սևծովյան տարածաշրջան: Այդ քայլը խիստ քննադատության արժանացավ Արևմուտքում: Անգամ ոմանք Թուրքիային մեղադրեցին ՆԱՏՕ-ի շահերը դավաճանելու և ՌԴ-ին աջակցելու մեջ<sup>26</sup>: Իսկ պաշտոնական Թբիլիսին

<sup>23</sup> **Aliriza B.**, Turkey and the Crisis in the Caucasus, 09.10. 2008, <http://csis.org/publication/turkey-and-crisis-caucasus>.

<sup>24</sup> **Арунова М.Р.**, Турция–Грузия: сотрудничество и проблемы, <http://www.iimes.ru/rus/stat/2008/15-10-08c.htm>.

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> **Baran Z.**, Will Turkey Abandon NATO?, *The Wall Street Journal*, 2008, August 29, [http://online.wsj.com/article/SB121997087258381935.html?mod=googlenews\\_wsj](http://online.wsj.com/article/SB121997087258381935.html?mod=googlenews_wsj).

Թուրքիայի գործողությունները որակեց «ոչ հաճելի էջ թուրք-վրացական երկկողմ հարաբերություններում»<sup>27</sup>;

4. 2008թ. օգոստոսի 12-ին Մոսկվա այցելեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը՝ առաջարկելով ստեղծել «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»՝ հարավկովկասյան ճանաչված պետությունների, ինչպես նաև ՌԴ-ի և Թուրքիայի մասնակցությամբ:

Ուշագրավ է Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի մեկնաբանությունն օգոստոսյան պատերազմի և դրան անմիջապես հաջորդած ժամանակահատվածի ընթացքում Թուրքիայի որդեգրած քաղաքականության վերաբերյալ. «Ամերիկյան մեր դաշնակիցն է, իսկ Ռուսաստանը՝ կարևոր հարևան: Ռուսաստանը մեր թիվ մեկ առևտրային գործընկերն է: Մեր էներգիայի 2/3-ը մենք ստանում ենք Ռուսաստանից: Մենք գործում ենք մեր ազգային շահերին համահունչ: Մենք չենք կարող անտեսել Ռուսաստանը»<sup>28</sup>: Նախ, Էրդողանը փորձում է հավասարակշռել <<դաշնակցի>> ու <<կարևոր հարևանի>> նկատմամբ դրսևորած վերաբերմունքները, միաժամանակ, չհիշատակելով Վրաստանը, որի հետ հարաբերություններին կարևորագույն տեղ է հատկացված Թուրքիայի տարածաշրջանային գերակայության իրագործման ծրագրերում: Անկարան մեղմացնում էր իր այն քայլերի հետևանքները, որոնք կարող էին դուր չգալ Թբիլիսիին, քանի որ դրանք վերագրվում էին ոչ թե Վրաստանի, այլ <<դաշնակցի>> ու <<կարևոր հարևանի>> հետ հարաբերություններին: Թուրք-վրացական հարաբերությունների համար մարտահրավերները դրանով չավարտվեցին:

2008թ. օգոստոսյան իրադարձություններից և ՌԴ-ի կողմից Աբխազիայի ճանաչումից հետո Թուրքիան ակտիվացրեց իր գործունեությունն Աբխազիայում: Ձգտելով ստեղծել ազդեցության կայուն գործոն՝ Անկարան իր աբխազական սփյուռքի միջնորդությամբ սկսեց առանձին խորհրդատվություններ անցկացնել Աբխազիայի իշխանության ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, 2009թ. սեպտեմբերի

<sup>27</sup> Chkhikvadze I., Zero Problems with Neighbors: The Case of Georgia, *Turkish Policy Quarterly*, 2011, Summer, p. 4.

<sup>28</sup> Aras B., Davutoglu Era in Turkish Foreign Policy, *Today's Zaman*, June 30, 2009, [http://www.todayszaman.com/newsDetail\\_getNewsById.action?sessionId=2CCA78E22091DBB020EF8B15951424EC?newsId=179504](http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?sessionId=2CCA78E22091DBB020EF8B15951424EC?newsId=179504); Torbakov I., The Georgia Crisis and Russia-Turkey Relations, *Jamestown Foundation*, 26 November 2008, p. 21.

սկզբին Վրաստան այցելեց Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն, երկու օր անց Աբխազիա մեկնեց Թուրքիայի ԱԳ նախարարի տեղակալ Ունալ Չևիքոզը, ով հանդիպում ունեցավ Աբխազիայի ԱԳ նախարար Սերգեյ Շամբայի հետ<sup>29</sup>: Դա առաջին թուրք պաշտոնյայի այցն էր Աբխազիա: Ճիշտ է, Ա. Դավութօղլուն այդ մասին նախօրոք տեղեկացրել էր վրացական ղեկավարությանը՝ Թբիլիսիում հայտարարելով, որ ինքը ևս պատրաստվում է առաջիկայում այցելել Աբխազիա:

Ու. Չևիքոզի այցից հետո Թուրքիան շարունակում էր ակտիվորեն զարգացնել հարաբերությունները Աբխազիայի հետ: Մասնավորապես 2010թ. ապրիլի 19-ին Սուխում էր ժամանել Թուրքիայի ԱԳՆ-ի Հարավային Կովկասի վարչության պետ Նուրդան Գուլդերը: Աբխազիայի վարչապետ Սերգեյ Շամբայի հետ հանդիպման ժամանակ թուրք դիվանագետը հայտարարել էր, որի իր այցի հիմնական նպատակն էր՝ մեկ անգամ ևս ցույց տալ, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի Աբխազիան Թուրքիայի համար՝ ընդգծելով, որ Թուրքիան շահագրգռված է ընդլայնել համագործակցությունը Սուխումի հետ, որտեղ նշանակալի դերակատարություն կարող է ունենալ Թուրքիայի արխազական համայնքը, ինչպես նաև հայտնել էր Թուրքիայի պատրաստակամության մասին՝ հանդես գալ որպես միջնորդ Սուխումի և Թբիլիսիի միջև<sup>30</sup>:

Ապրիլի վերջին Աբխազիա այցելեց Վրաստանում Թուրքիայի դեսպան Մուրադ Բուրհանը: Հանդիպելով Աբխազիայի ղեկավարության հետ՝ նա հայտարարել էր, որ ստեղծվել են թուրք-աբխազական աշխատանքային խմբեր երկու կողմերի միջև երկկողմանի կապերը ընդլայնելու համար՝ նշելով, որ Թուրքիան ցանկանում է Աբխազիայի հետ հաստատել անմիջական առևտրային հարաբերություններ<sup>31</sup>:

Աբխազիայի հետ հարաբերությունների դինամիկ զարգացումը Անկարան բացատրում էր Աբխազիայի և Վրաստանի հաշտեցման

<sup>29</sup> Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Աբխազիան Թուրքիայի ռազմավարական շահերի համատեքստում, *21-րդ դար*, 2010թ., 6 (34), 19-33:

<sup>30</sup> Another Senior Turkish Diplomat Visits Abkhazia, 21. 04. 2010, <http://www.abkhazworld.com/news/politics/472-nurdan-bayraktar-visits-abkhazia-april20.html>.

<sup>31</sup> Clayton N., Turkish Investment and Trade Booms in Abkhazia, 03.04.2011, <http://www.abkhazworld.com/news/diaspora/626-turkish-investment-and-trade-booms-in-abkhazia-by-nick-clayton.html>.

նպատակով: Թուրքիայում արխագական համայնքի առկայությունը Անկարային հնարավորություն էր տալիս ստանձնելու այդ դերակատարությունը, թեև ակնհայտ էր, որ այդ գործոնն օգտագործվելու է տարածաշրջանում Անկարայի ազդեցությունը մեծացնելու նպատակով: Իհարկե, հաշտարարի դերակատարության ստանձնումը Թբիլիսիին զրկում էր թուր-արխագական կապերի զարգացումից դժգոհելու կամ դրան խոչընդոտելու հնարավորությունից, սակայն Թուրքիայի ակտիվությունն Արխագիայում չէր կարող չանհանգստացնել Թբիլիսիին և սառեցնող ազդեցություն չունենալ վրաց-թուրքական հարաբերությունների վրա<sup>32</sup>: Վրաստանում Թուրքիայի դեսպանը հրավիրվել էր Վրաստանի արգործնախարարություն՝ ստիպված լինելով բացատրություններ տալ վերջին զարգացումների վերաբերյալ<sup>33</sup>: Վրաստանին լրջորեն անհանգստացնում էր այն, որ Թուրքիան կարող է ճանաչել Արխագիայի անկախությունը, ինչի հնարավորությունը քննարկում էին անգամ արևմտյան փորձագետները<sup>34</sup>:

Թուրքիան փորձում էր մեղմել պատերազմի հետևանքով առաջացած քաղաքական լարվածությունը՝ այլ ոլորտներում ակտիվ գործունեությամբ: Մանավորապես, արդեն պատերազմի օրերին Թուրքիան անմիջապես մարդասիրական աջակցություն ցուցաբերեց Վրաստանին՝ առաքելով 100 հազար տոննա սննդամթերք, ինչպես նաև Գորիի մոտակայքում փախստականների համար սկսեց կառուցել 100 բնակարաններից բաղկացած բնակելի շինություն: Բացի այդ, թուրքական «TAV» ընկերությունը ռազմական գործողությունների ժամանակ չդադարեցրեց Թբիլիսիի օդանավակայանի շահագործումը՝ ապահովելով այդ օրերին Վրաստանի համար խիստ անհրաժեշտ անխափան օդային կապ<sup>35</sup>:

Այդուհանդերձ, այլ երկրների դեպքում խորացող քաղաքական լարվածությունը կարող էր ունենալ շատ լուրջ հետևանքներ, սակայն

<sup>32</sup> Շիրինյան Ա., Թուրքիան կճանաչի՞ Արխագիան, <http://hetq.am/am/region/ abkhazia-3/>.

<sup>33</sup> Овсепян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ереван, Институт Политических Исследований, 2010, с.112.

<sup>34</sup> Goble P., Window on Eurasia: Might Turkey be the Next Country to Recognize Abkhazia?, 15.09.2009, <http://windowoneurasia.blogspot.com/2009/09/window-on-eurasia-might-turkey-be-next.html>.

<sup>35</sup> Aras B. and Akpinar P., ..., p. 163; Aras B. and Fidan H., ..., p. 209; *Hürriyet*, 19.12. 2009.

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունում Վրաստանն ունի բացառիկ նշանակություն, իսկ Թբիլիսիի համար վճռորոշ էր Անկարայի ազդեցիկ ներկայությունը Վրաստանի տնտեսությունում: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Վրաստանի գլխավին ջախջախված բանակի վերակառուցման և ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցման հարցում Թուրքիայի առաջարկներն այլընտրանք չունեին:

### **Թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցությունը հնգօրյա պատերազմից հետո**

Թուրքիայի և Վրաստանի համագործակցությունը ռազմաքաղաքական ոլորտում ոչ միայն փոխշահավետ է երկու կողմերի համար, այլև այլընտրանք չունի այն բանից հետո, երբ պաշտոնական Թբիլիսին խզեց բոլոր կապերը Ռուսաստանի հետ: Հետպատերազմյան համագործակցությունը շատ դինամիկ էր: 2009թ. փետրվարի վերջին Թուրքիան և Վրաստանը ստորագրեցին երկկողմ ռազմական համագործակցության վերաբերյալ հերթական պայմանագիրը: 2009թ. մարտի 24-26-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Թուրքիայի սահմանապահ ուժերի հրամանատար Ա. Կեզեքի և Վրաստանի սահմանապահ ուստիկանության ղեկավար Զ. Գոգավայի հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին համագործակցության հեռանկարներին առնչվող հարցեր և հաջորդ տարվա գործողությունների ծրագիրը:<sup>36</sup> Իսկ արդեն 2009թ. ապրիլին Թուրքիայի Գլխավոր շտաբը Վրաստանի պաշտպանության նախարարությանը տրամադրեց մեծաքանակ ռազմական տեխնիկա և սարքավորումներ, որոնք նախատեսված էին Վրաստանի ռազմաօդային և ցամաքային ուժերի, հատուկ պատրաստության ստորաբաժանումների, Պաշտպանության ազգային ակադեմիայի համար<sup>37</sup>: Սարքավորումների տրամադրումը իրականացվել էր 2005թ. Թուրքիայի և Վրաստանի միջև ստորագրված ռազմական դրամաշնորհի շրջանակներում<sup>38</sup>: Բացի այդ 2009թ. հուլիսի 25-ին Թուրքիան Վրաստանի սահմանապահ ուժերին

<sup>36</sup> Овсепян Л., Иванов В., ..., с. 113:

<sup>37</sup> Турция передала военное оборудование ВС Грузии, 01.04.2009, <http://army.lv/ru/armiya-gruzii/2527/17988>.

<sup>38</sup> Նույն տեղում:

հանձնեցին վերջինիս պատվերով պատրաստված նորագույն արագընթաց մոտորանավակ<sup>39</sup>:

2009թ. վերջին Վրաստանը կարողացավ վերականգնել իր մինչպատերազմական ռազմական ներուժը և այդ գործում կարևոր դերակատարություն ունեցավ Թուրքիան: 2009թ. Անկարան Վրաստանի զինված ուժերին էր տրամադրել 40 մլն դոլար ընդհանուր արժողությամբ 70 հատ «Ejder» տեսակի մարտական զրահամեքենա, ինչպես նաև՝ պայմանագրով նախատեսված 100 հատ «Кобра» տեսակի զրահատանկեր<sup>40</sup>: Թուրքիայի պաշտպանության նախարարությունը միայն 2009թ. մարտին վրացական զինված ուժերին էր տրամադրել 1 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ զինամթերք և ռազմական հանդերձանք, այդ թվում «AKM» և «СВД» ինքնաձիգներ, թվային կապի կայաններ, գիշերային տեսողական սարքեր, հատուկ հանդերձանք և այլն<sup>41</sup>:

2010 թ. փետրվարին ՆԱՏՕ-ի պաշտպանության նախարարների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Ստամբուլ այցելած Վրաստանի պաշտպանության նախարար Բ. Ախալայան և Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը քննարկեցին ռազմատեխնիկական և ռազմաուսումնական ոլորտներում երկկողմ համագործակցության հեռանկարները: Հանդիպման ընթացքում Վրաստանի պաշտպանության նախարարը ընդգծել էր, որ ռազմական ոլորտում վրաց-թուրքական համագործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա<sup>42</sup>:

Թուրքիայի և Վրաստանի համագործակցությունն ակտիվ էր նաև զինվորական կադրերի պատրաստման և համատեղ

<sup>39</sup> Береговая охрана Грузии приобрела катер турецкого производства, Информационное агентство «Оружие России», 26.07.2009, <http://www.arms-expo.ru/049057052048124057055053053.html>; **Иванов В.**, Грузино-турецкие отношения: реалии и перспективы (II), 26.02.2013, <http://eurasianinfoleague.com/topic.php?id=21148>.

<sup>40</sup> Грузия восстановила военный потенциал, Информационное агентство «Оружие России», 10.08.2010, <http://www.arms-expo.ru/050055049057124049055051049051.html>.

<sup>41</sup> **Новик А.**, Кто вооружает Грузию, 02.07.2009, <http://www.peacekeeper.ru/ru/?module=news&action=view&id=9348>.

<sup>42</sup> Грузино-турецкие отношения в военной сфере переходят на более высокий уровень, 05.02.2010, <http://www.caucasustoday.com/en/component/content/article?id=28386>.

զորավարությունների անցկացման շրջանակներում: Թուրքիայի և Վրաստանի Գլխավոր Շտաբների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն 2010թ. հուլիսի 14-ին Վրաստան ժամանեց թուրքական «TCSG-122» ռազմանավը, որը հուլիսի 15-ին Բաթումիում մասնակցեց թուրք-վրացական համատեղ զորավարություններին<sup>43</sup>:

Թուրք-վրացական ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը մեծապես նպաստեց 2010թ. նոյեմբերի 25-ին Թուրքիայի ԳԾ-ի կողմից Վրաստանին՝ 1.5 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ ռազմական տեխնիկայի տրամադրումը: Թուրքիան, մասնավորապես, Վրաստանին էր տրամադրել 8 ռազմական մեքենա և տարբեր տեսակի տեխնիկական սարքավորումներ: Ռազմական տեխնիկայի տրամադրումը իրականացվել էր 2005թ. Թուրքիայի և Վրաստանի միջև ստորագրված ռազմական դրամաշնորհի շրջանակներում<sup>44</sup>:

2010թ. դեկտեմբերին Թուրքիայի և Վրաստանի պաշտպանական գերատեսչությունները ստորագրեցին պայմանագիր, համաձայն որի Թուրքիան Վրաստանին անհատույց տրամադրում էր 3 մլն. 350 հազար դոլար: Գումարների մեծ մասը նախատեսված էր Մառնեուլի օդանավակայանի ընթացիկ ծախսերի, վրացական ծովային պաշտպանության ստորաբաժանումների, հատուկ նշանակության ջոկատների և Պաշտպանության ազգային Ակադեմիայի համար<sup>45</sup>:

Թուրքիան և Վրաստանը մեծապես շահագրգռված էին խորացնելու երկկողմ համագործակցությունն անվտանգության ոլորտում, ուստի պատահական չէ, որ և՛ Վրաստանի, և՛ Թուրքիայի անվտանգության հայեցակարգերում մեծ կարևորություն է տրվում երկկողմ համագործակցությանը: Մասնավորապես 2011թ. Վրաստանի ընդունած նոր Ազգային անվտանգության հայեցակարգը Թուրքիան բնորոշում է որպես առաջատար տարածաշրջանային գործընկեր: Հայեցակարգում նաև նշվում է, որ Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ և տարածաշրջանի առաջատար երկրներից մեկը, Վրաստանի կարևոր

<sup>43</sup> Грузия и Турция проведут совместные морские учения, 14.07.2010, <http://nnk.am/mir/9843-gruziya-i-turciya-provedut-sovmestnye-morskie.html>.

<sup>44</sup> Турция передала Минобороны Грузии материально-технические средства на \$1,5 млн, 26.11.2010, <http://www.rosbalt.ru/exussr/2010/11/26/794068.html>.

<sup>45</sup> Из истории грузино-турецких отношений, 10.11.2011, <http://arevelkcenter.com/archives/2222>.



ռազմական գործընկերներն է, ուստի Վրաստանի համար մեծ կարևորություն ունի անվտանգության և պաշտպանության ոլորտում Թուրքիայի հետ համագործակցության հետագա զարգացումը<sup>46</sup>: Միաժամանակ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը Վրաստանը հանել էր Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող երկրների ցուցակից<sup>47</sup>:

Ռազմական ոլորտում թուրք-վրացական համագործակցությունը զարգացնելու նպատակով Թուրքիան և Վրաստանը 2011թ. սեպտեմբերի 15-16-ին Վրաստանի Փոթի նավահանգստում անցկացրեցին «GEODELTA 2011» անվամբ թուրք-վրացական համատեղ զորավարություններ, որն իրականացվել էր սահմանապահ ոլորտում համագործակցության նպատակով ստորագրված վրաց-թուրքական համաձայնագրի շրջանակներում: Այդ նպատակով 2011թ. սեպտեմբերի 15-ին Վրաստանի Փոթի նավահանգիստ էր ժամանել ափամերձ տարածքների պահպանության թուրքական «TCSG-95» մոտորանավակը, ինչպես նաև Թուրքիայի ծովափնյա անվտանգության ուժերի պատվիրակությունը՝ փոխծովակալ Սերդար Դուրգելի գլխավորությամբ: Այցի ընթացքում իրականացվել էին ծովային սահմանների պահպանության ոլորտում փորձի փոխանակման հատուկ դասընթացներ, ինչպես նաև երկու երկրների ծովափնյա պահպանության համատեղ զորավարություններ<sup>48</sup>:

Թուրքիան շարունակում էր նաև մեծապես աջակցել Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունների զարգացմանը: Մասնավորապես, 2011թ. դեկտեմբերին Թուրքիան Վրաստանի պաշտպանության նախարարությանն էր տրամադրել 1 մլն 692 հազար դոլար արժողությամբ ռազմական և նյութատեխնիկական սարքավորումներ: Թուրքիայի օգնությունն իրականացվել էր թուրք-վրացական ռազմական համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում: Վրաց-թուրքական ռազմական համագործակցության պայմանագրով նաև օգնություն էր ցուցաբերվում ռազմական ուսուցման և կազմակերպական ոլորտներում, որը մեծապես նպաստելու էր

<sup>46</sup> Draft of Georgia's New National Security Concept, *Civil Georgia*, 19 February 2011, [http://www.civil.ge/eng/\\_print.php?id=23164](http://www.civil.ge/eng/_print.php?id=23164); **Ivane Chkhikvadze**, ..., p. 2:

<sup>47</sup> **Ivane Chkhikvadze**, ..., p. 3:

<sup>48</sup> На Черном море проходят грузино-турецкие пограничные учения, 16.09.2011, <http://www.blackseanews.net/read/24970>.

Վրաստանի զինված ուժերի՝ ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցման գործընթացին<sup>49</sup>:

### Եզրակացություն

1. 2008թ. վրաց-ռուսական պատերազմն արձանագրեց Հարավային Կովկասում աշխահաքաղաքական մրցակցության կտրուկ խորացումը Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների միջև, ինչը գործնականում անհնարին դարձրեց Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկի՝ տարածաշրջանային առաջատար դառնալու ծագրի իրագործումը և լուրջ վտանգներ ստեղծեց անգամ Հարավային Կովկասում Անկարայի դիրքերի պահպանման համար;

2. Թուրքիայից մեծ ջանքեր պահանջվեցին (Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների միջև ճկուն հավասարակշռության պահպանում, «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»-ի առաջադրում, հայ-թուրքական հաշտեցման գործընթացում խուսանավումներ և այլն) օգոստոսյան հնգօրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո ստեղծված բարդ իրավիճակից առանց կորուստների դուրս գալու համար;

3. Իրավիճակի հիմնական բարդությունն այն էր, որ այդ ժամանակահատվածում հաճախ պահանջվում էին քայլեր, որոնք Անկարայի երեք կարևոր գործընկերներից (Ռուսաստան, Միացյալ Նահանգներ, Վրաստան) որևէ մեկի հետ հարաբերություններում կարող էին ստեղծել լուրջ լարվածություն;

4. Մինչ պատերազմն առանց որևէ խոչընդոտի զարգացող թուրք-վրացական հարաբերություններում պատերազմի ընթացքում և դրանից հետո ի հայտ եկան քաղաքական լարվածություններ, որի հետևանքները Անկարան փորձում էր չեզոքացնել մարդասիրական և ռազմաքաղաքական ոլորտներում համագործակցության խորացմամբ:

5. Թեև դիտարկվող ժամանակահատվածում թուրք-վրացական հարաբերությունները ենթարկվեցին լուրջ փորձությունների, սակայն Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականությունում Վրաստանի

<sup>49</sup> Турция подарила Грузии военное снаряжение на 1,7 млн долларов, 11.12.2011, <http://www.georgiatimes.info/news/68920.html>.

բացառիկ նշանակությունը, Անկարայի խորը ներգրավվածությունը Վրաստանի տնտեսությունում և Ռուսաստանի հետ կապերի լիակատար խզումից հետո ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում այլընտրանքի բացակայությունը Վրաստանին և Թուրքիային ստիպեց անտեսել առաջացած լարվածություններն ու շարունակել խորացնել հարաբերությունները:

## **The Impact of the Russian-Georgian August War on Turkish-Georgian Relations**

GRIGOR ARSHAKYAN

*Brusov State University of Languages and Social Sciences*

As a result of the 2008 Russian-Georgian war, an entirely new situation was formed in the South Caucasus, which had a significant impact on bilateral and multilateral relationships, existing in the region. The complexity of the situation was primarily due to the sharp increase in Russia and United States' activities in the region. Turkey, having regional hegemony aspirations, had to solve complicated issues, which arose even in Turkish-Georgian relations actively developing before the war. The article discloses the challenges arising in those relations, Turkey's steps towards their reduction, and evaluates the effectiveness of those steps.